

ՀՏԴ 159.9 (07)  
ԳՄԴ 88 ց 7  
Ի 436

*Հրատարակության է երաշխավորել  
ԵՊՀ Փիլիսոփայության և հոգեբանության  
ֆակուլտետի խորհուրդը*

Գրախոսներ՝ հ.գ.դ., պրոֆ. Ջ. Մ. Ավանեսյան  
հ.գ.թ., դոց. Ս. Ս. Ամիրյան

## ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՊՐԱԿՏԻԿՈՒՄ

*(Հիշողություն, մտածողություն և խոսք, երևակայություն)*

*Ուսումնամեթոդական ձեռնարկ*

**Ի 436** Իմացական գործընթացների պրակտիկում (Հիշողություն, մտածողություն և խոսք, երևակայություն): Ուսումնամեթոդական ձեռնարկ / Կազմ. և զխ. խմբ. Դ. Ռ. Հայրապետյան - եր.: ԵՊՀ հրատ., 2009, - 190 էջ:

Ձեռնարկում ընդգրկված են իմացական գործընթացների հոգեբանական պրակտիկումի գործնական աշխատանքներ: Ներկայացվում են հիշողության, մտածողության, խոսքի և երևակայության առանձնահատկությունների ուսումնասիրման բարձր հուսալիությամբ օժտված ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից մեթոդներ:

Ձեռնարկը նախատեսված է հոգեբանության դասախոսների, ուսանողների, ինչպես նաև իմացական գործընթացների ուսումնասիրությանը հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

ԳՄԴ 88 ց 7

ISBN 978-5-8084-1170-8

© ԵՊՀ հրատարակչություն, 2009 թ.  
© Կազմողի համար, 2009 թ.

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**..... 7

**1. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ**..... 9

    ԿԱՐՃԱՏԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ  
    (*Ջեկոբսի մեթոդը*)..... 24

1.2 ՕՊԵՐԱՏԻՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԶ ԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 26

1.3 ՈՉ ԿԱՄԱԾԻՆ ՄՏԱՊԱՅՄԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՄԱԿԵՏՈՒԹՅԱՆ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (*Պ. Ջիմչեմկոյի մեթոդիկան*)..... 27

1.4 ԿԱՄԱԾԻՆ ԵՎ ՈՉ ԿԱՄԱԾԻՆ ՄՏԱՊԱՅՄԱՆ ԱՐԴՅՈՒՄԱԿԵՏՈՒԹՅԱՆ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (*Պ. Ջիմչեմկոյի մեթոդիկան*)..... 28

1.5 ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՎ ՄԻՋՆՈՐԿԱՎՈՐՎԱԾ ՄՏԱՊԱՅՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ. 30

1.6 ՄՏԱՊԱՅՄԱՆ ՎՐԱ ՆՅՈՒԹԻ ԻՄԱՏՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԱԶԵՑՈՒԹՅԱՆ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 31

1.7 ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՅՈՒԹԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՎՐԱ ԱԶԳՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 33

1.8 ԱՆՁԻ ԴԻՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ Ց ՄՏԱՊԱՅՄԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 36

1.9 ՄՏԱՊԱՅՄԱՆ ՎՐԱ ՆՅՈՒԹԻ ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿԱ-  
    ԼԻՈՒԹՅԱՆ ԱԶԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 37

1.10 ՊԱՅՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՆՅՈՒԹԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 38

1.11 ԱԿՏԻՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԵՆԹԱՑՆԵՐԻ  
    ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 39

1.12 ՄՏԱՊԱՅՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՏԵՄԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 41

1.13 ՊԱՏՄՎԱԾՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄ..... 44

1.14 10 ԲԱՌԻ ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ (*Ա. Լոյիայի մեթոդիկան*)..... 45

1.15 ԿԵՆՊԱՆԻՆԵՐԸ ԱՆԿՇՈՒԵԼԻՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ..... 47

1.16 ՀԱՇԻՎ ԱՎԵԼԱՑՄԱՍԲ ..... 47

1.17 ԸՆԹԵՐՑՄԱՆ ԹԵՄՏ..... 48

1.18 ԴԻՎԱԿՏԻՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ «ԸՍՏ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ» ..... 49

1.19 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ «ՖԻԳՈՒՐՆԵՐ ԼՈՒՑԿՈՒ ՀԱՏԻՎՆԵՐԻ Ց»..... 49

1.20 ՄՏԱՊԱՅՄԱՆ ՍԱՔՐՈՒՄ..... 50

**2. ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ**..... 51

2.1 ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁԻ ԱԶԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ  
    (*Ա. Լաչինսի մեթոդիկան*)..... 64

2.2 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ..... 66

2.3 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՌԵՖԼԵՔՍԻՎՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ..... 67

2.4 ՎԵՐՔԱԼ ԵՎ ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 69

2.5 ԱԿՆԱՌՈՒ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (*լուցկու  
հատիկներից ֆիզոլոգիկայի կազմման խնդիրների լուծման ժամանակ*).. 70

2.6 ԱԿՆԱՌՈՒ-ՊԱՏԿԵՐԱՎՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ  
    («Պիկտոգրամա» մեթոդիկան) ..... 71

2.7 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՍՏԵՂԾՈՂ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (*դիրքորոշման ազդեցությունը մտածողական  
գործունեության յուրահատկության վրա*) ..... 74

2.8 ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 76

2.9 ԽՄԲԱՅԻՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 78

2.10 ԹԵՄՏ «ՄՏԱՀԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՄԱՔԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ..... 79

2.11 ԹԵՄՏ «ՆԿԱՐԻՉ-ՄՏԱԾՈՂ» ..... 80

2.12 ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԵՄԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (*«Ձուգորդական  
գիտափորձ» մեթոդիկան*) ..... 81

2.13 ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՉԵՆԴՈՑՆԵՐԻ ՊԱՐԱԳԱՅՈՒՄ ԽՈՍՔԻ  
    ՀԱՍԿԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 83

2.14 ՎՈԿԱԼ ԽՈՍՔՈՒՄ ՀՈՒՋՔԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ..... 85

2.15 ԽՈՍՔԻ ՏԵՄՊԱՌԹՄԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 87

2.16 ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՀՈԳԵՔՐԱՆԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ-  
    ՆԵՐԸ..... 89

2.17 ՏՐԱՄԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ..... 93

2.18 ԿՈՆՎԵՐԳԵՆՏ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 95

2.19 ԴԻՎԵՐԳԵՆՏ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 96

2.20 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԾԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 97

**3. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ**..... 99

3.1 ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՀՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԳԱՀԱՏՈՒՄ..... 102

3.2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ..... 103

3.3 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ  
    (*«Շրջաններ» բեստը*)..... 105

3.4 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
    ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ ..... 108

3.5 «ՖԻԳՈՒՐՆԵՐԻ ԼՐԱՆԿԱՐՈՒՄ» (*Դյաչեմկոյի մեթոդիկան*)..... 112

3.6 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՄԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ..... 113

3.7 ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԱՅԳԻ..... 116

3.8 ՏԱՐՕՐԻՆԱԿ ՆԿԱՐ..... 117

3.9	ԹԱՆԱՔԱՄԱՆԻ ՀԵՔԻԱԹԸ (Ա. Վ. Ջապորոժեցի մեթոդիկայի մոդիֆիկացիան).....	118
3.10	ԱՂՋԻԿ, ԹԵ ՏՂԱ (Կ. Դու Ալեքի մեթոդիկայի մոդիֆիկացիան).....	120

**ՀԱԿԵՎԱԾ 1-36**

Գործնական աշխատանքների առաջադրանքների նյութեր.....	123
--	-----

**ՀԱԿԵՎԱԾ 37**

Ուսանողի աշխատանքային տետր.....	156
---------------------------------	-----

<b>ՕՊՏԱԳՈՐԾ ՎԱԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԲԱՌԱՐԱՆ</b> .....	180
--	-----

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ցանկացած, այդ թվում հոգեբանական մասնագիտական ուսուցման համար անհրաժեշտ է երկու սկզբների՝ տեսականի և գործնականի հավասարակշռություն: Գործնական փորձը գուցե և կարևոր է, սակայն առանց տեսական հիմքի, որպես կանոն, մնում է սինկրետիկ ընդհանրացման մակարդակում: Հոգեբանական պրակտիկումն, այսպիսով, միավորում և վերափոխում է փորձի բոլոր ձևերն էլ՝ առօրեական, փորձարարական, խորհրդատվական և տեսական» (Хозиев В. Б., 2003, էջ 3):

«Իմացական գործընթացների պրակտիկում» առարկայի նպատակն է ձևավորել և ամրապնդել ուսանողների մոտ մարդու հոգեկան գործընթացների հետազոտման հմտություններն ու ունակությունները:

Իմացական գործընթացների պրակտիկումն առարկայի գործնական աշխատանքների հիմնական խնդիրներն են.

- հոգեկան գործընթացների հետազոտման և դիագնոստիկայի հիմնական մեթոդների ծանոթացումն ու յուրացումը,
- հոգեկան գործընթացների հետազոտական գործունեության համար հոգեբանին անհրաժեշտ հմտությունների և ունակությունների ձևավորումը,
- հոգեբանական հետազոտությունների անցկացման, արդյունքների մշակման, վերլուծության և ներկայացման հիմնական սկզբունքների յուրացումը գործնական օրինակների հիման վրա:

Աշխատանքն իրականացվում է ուսանողների կողմից լաբորատոր աշխատանքների միջոցով, որոնցից յուրաքանչյուրն ունի իր հստակ կառուցվածքը:

Ստացված արդյունքներին ներկայացվող պահանջների պահպանման համար յուրաքանչյուր լաբորատոր աշխատանքի արդյունքում ուսանողների կողմից լրացվում է համապատասխան աշխատանքային տետրը, որը ներկայացվում է հավելված 35-ում:

Ձեռնարկում ընդգրկված գործնական աշխատանքների քանակը գերազանցում է «Իմացական գործընթացների պրակտիկում» առարկայի ուսանողական ծրագրի ծավալը, որը թույլ է տալիս դասախոսին որոշակի ճկունությամբ փոփոխել ծրագրի կառուցվածքը կախված իր առջև

դրված ուսումնական խնդիրներից, անհրաժեշտ սարքավորումների առկայությունից և ուսանողական լսարանի առանձնահատկություններից:

Ձեռնարկը գրված է մատչելի լեզվով և թույլ է տալիս յուրացնել իմացական գործընթացների ուսումնասիրման մեթոդները ինչպես լսարանային պարապմունքների ժամանակ, այնպես էլ ինքնուրույն:

Ձեռնարկում ընդգրկված են հինգ տասնյակ փորձեր և վարժություններ: Յուրաքանչյուր փորձում ներկայացված է նպատակը, հետազոտվողին տրվող հրահանգը, աշխատանքի իրականացման ընթացքի մանրամասն նկարագրությունը և արդյունքների մշակման ու վերլուծության հստակ ընթացքը: Փորձերի անցկացման համար անհրաժեշտ ստիմուլային նյութը (առաջադրանքի նյութերը) ներկայացված է համապատասխան հավելվածներում, որոնք իրենցից ներկայացնում են բառային, թվային կամ պատկերավոր այն ինֆորմացիան, որի հետ անմիջականորեն աշխատում է հետազոտվողը առաջադրանքները և փորձերը կատարելու ժամանակ:

Ձեռնարկը բաղկացած է երեք բաժիններից, որոնցում առանձնացված են հիշողության, մտածողության – խոսքի և երևակայության ուսումնասիրման փորձերը, որոնց հիմնական շարադրմանը նախորդում է ուսումնասիրվող ճանաչողական գործընթացի հիմնադրույթների տեսական համառոտ քննարկումը: Յուրաքանչյուր բաժինն ավարտվում է տվյալ գործընթացի զարգացմանն ուղղված վարժություններով և համալիր ծրագրերով:

Ձեռնարկի ամբողջական և ճկուն կառուցվածքը հնարավորություն է ընձեռում այն օգտագործել ոչ միայն «Իմացական գործընթացի պրակտիկում» առարկայի սահմաններում, այլև վերոհիշյալ գործընթացների հոգեբանական ուսումնասիրման և զարգացման տարբեր ծրագրերում:

# 1. ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

*Հիշողությունը նախկին փորձի կազմակերպման և պահպանման հոգեկան գործընթաց է, որը հնարավոր է դարձնում դրանց կրկնակի օգտագործումը գործունեությունում կամ վերադարձը գիտակցության ոլորտ: Հիշողությունը կապում է սուբյեկտի անցյալը նրաներկայի և ապագայի հետ: (Հատված հոգեբանական բառարանից)*

## 1. Ընդհանուր պատկերացում հիշողության մասին

Հոգեկանի կարևորագույն առանձնահատկություններից մեկն էլ այն է, որ արտաքին գրգռիչների արտացոլումը մարդը կարողանում է օգտագործել նաև ապագայում:

Փորձի կուտակումն անհնարին կլիներ, եթե կուտակված անհատական փորձն անհետ կորչեր: Ինֆորմացիան, որն ստացվել է անցյալում, պահպանվում է և վերարտադրվում անհատի կողմից այն իրավիճակներում, երբ դա նրան անհրաժեշտ է: Սա էլ հենց մեր հիշողությունն է:

## **Անհատի կողմից իր փորձի մտապահումը, պահպանումը և հետագա վերարտադրումը անվանում են հիշողություն:**

Հիշողությունում առանձնացնում են հետևյալ գործընթացները՝ մտապահում, պահպանում, վերարտադրում և մոռացում: Վերը նշված գործընթացները չեն հանդիսանում առանձին, ինքնուրույն հոգեկան կարողություններ: Դրանք ձևավորվում են գործունեության մեջ և դրանով էլ պայմանավորվում են: Կոնկրետ նյութի մտապահումը կապված է կենսագործունեության ընթացքում անհատական փորձի կուտակման հետ: Հետագա գործունեությունում մտապահածի կիրառումը արդեն վերարտադրությունն է: Նյութի պահպանումը հիշողությունում կախված է անձի գործունեության մեջ վերջինիս մասնակցությունից, քանի որ մարդու կյանքի յուրաքանչյուր պահ որոշվում է նրա կենսական փորձով: Այսպիսով, հիշողությունը անձի հոգեկան կյանքի կարևորագույն

<sup>1</sup> Краткий психологический словарь / Под общей ред. А. В. Петровского и М. Г. Ярошевского; ред.-составитель Л. А. Карпенко. - 2-е изд., расширенно е, и стр. и доп.- Ростов-на-Дону: «ФЕ НИКС», 1998.

բնութագրիչներից մեկն է: Հիշողության դերը չի կարող հանգեցվել միայն «անցյալում կատարվածի» ամրագրմանը: Յուրաքանչյուր ակտուալ գործունեություն անպատկերացելի է հիշողության գործընթացներից դուրս, քանի որ ցանկացած, անգամ ամենատարակալան հոգեկան ակտի ընթացք պարտադիր ենթադրում է այն կազմող յուրաքանչյուր տարրի պահպանում՝ այն հաջորդի հետ «կապելու» համար:

## 2. Հիշողության տեսակները

Քանի որ հիշողությունը ներառված է մարդու կյանքի և գործունեության ողջ բազմազանության մեջ, հետևաբար նրա դրսևորման ձևերն էլ չափազանց բազմազան են:

Հիշողության տարբեր տեսակների առանձնացման համար առավել հիմնարար հիմք է հանդիսանում վերջինիս կախվածությունը այն գործունեության առանձնահատկություններից, որոնց ընթացքում իրականացվում է մտապահում և վերարտադրում: Հիշողության տարբեր տեսակների առանձնացման հիմնական չափանիշների դերում հանդես են գալիս հետևյալ գործոնները՝

- 1) հոգեկան ակտիվության բնույթը՝ շարժողական, հուզական, պատկերավոր և բառատրամաբանական հիշողություն,
- 2) գործունեության նպատակների բնույթը՝ կամածին և ոչ կամածին հիշողություն,
- 3) նյութի ամրացման և պահպանման տևողությունը՝ կարճատև, երկարատև և օպերատիվ հիշողություն,
- 4) կիրառվող մտապահման միջոցները՝ միջոցորդավորված և անմիջական հիշողություն:

**Շարժողական հիշողությունը տարբեր շարժումների և դրանց համակարգերի մտապահումը, պահպանումը և վերարտադրումն է:** Հանդիպում են մարդիկ, որոնց մոտ հիշողության այս տեսակը գերակայում է մնացած այլ տեսակների հանդեպ: Հիշողության այս տեսակի մեծագույն նշանակությունը կայանում է նրանում, որ այն տարբեր գործնական և աշխատանքային հմտությունների հիմք է, որոնք հավասարազոր են քայլի, գրելու և այլ հմտությունների: Առանց շարժողական հիշողության մենք ամեն անգամ ստիպված կլինեինք կրկին սովորել քայլել, շարժվել, գրել և այլն: Սովորաբար լավ շարժողական հիշողության չափանիշ է հանդիսանում մարդու ֆիզիկական ճկունությունը, աշխատանքում արագ կողմնորոշվելու կարողությունը:

## **Ձգացմունքների վրա կողմնորոշում ունեցող հիշողությունն ան-**

**վանում են հուզական հիշողություն:** Հույզերը միշտ ազդանշում են այն, թե ինչպես են բավարարվում մեր պահանջները և ու հետաքրքրությունները, ինչպես են իրականացվում մեր հարաբերությունները շրջակա աշխարհի հետ: Այդ իսկ պատճառով էլ հուզական հիշողությունն այդքան մեծ դեր ունի յուրաքանչյուր մարդու կյանքում և գործունեությունում: Մարդու կողմից ապրված և հիշողությունում պահպանված զգացմունքները հանդես են գալիս կամ որպես գործունեության խթան, կամ որպես գործունեությունից ետ պահող ուժ, քանի որ դրանք անցյալում առաջ են բերել բացասական ասորումներ: Այլ մարդուն կարելի է, գրքի հերոսի ցավն ասրելու կարողությունները կապված են հուզական հիշողության հետ:

**Պատկերավոր հիշողությունը զգայական ինֆորմացիայի պահպանումն է, հիշողություն՝ պատկերացումների, կյանքի և բնության պատկերների, ինչպես նաև ծայների, հոտերի և համերի:** Այն լինում է տեսողական, լսողական, շոշափելիքի, համային, հոտառության: Եթե տեսողական և լսողական հիշողությունները սովորաբար լավ զարգացած են և առաջատար դեր են խաղում բոլոր նորմալ մարդկանց կյանքում, ապա շոշափելիքի, համի և հոտառության հիշողությունները որոշ վերապահումներով կարելի է անվանել մասնագիտական տեսակներ: Ինչպես և համապատասխան զգայության տեսակները, սրանք ևս ինտենսիվ զարգանում են գործունեության յուրահատուկ պայմաններից ելնելով: Պատկերավոր հիշողությունն առավել զարգացած է գեղարվեստական մասնագիտության տեր մարդկանց մոտ: Պատկերավոր հիշողության տարատեսակ է հանդիսանում էյթետիկ հիշողությունը: Էյթետիկ պատկերները կամ հիշողության տեսանելի պատկերները զգայության օրգանների արտաքին զրգման արդյունք են: Այս պատկերները նման են պատկերացումների նրանով, որ առաջանում են առարկայի բացակայության պարագայում, սակայն բնութագրվում են այնպիսի մանրակրկիտ դիտողականությամբ, որը բացարձակապես անհասանելի է հասարակ պատկերացմանը:

**Մտքերի վրա ուղղված հիշողությունն անվանում են բառատրամաբանական:** Եվ քանի որ մտքի գոյատևման ձև է խոսքը, այն կոչվում է բառատրամաբանական:

Այն դեպքում, երբ մտապահումն ու վերարտադրումն իրականացվում է առանց ինչ-որ բան հիշելու կամ վերհիշելու որոշակի նպատակների, անվանում են **ոչ կամածին հիշողություն:**

Այն դեպքում, երբ դրվում է հատուկ մեծ իկական նպատակ, այսինքն՝ մարդն իր առջև նպատակ է դնում ինչ-որ բան մտապահել կամ վերհիշել, անվանում են **կամածին հիշողություն:**

**Կարճատև են** անվանում այն հիշողությունը, որում ինֆորմացիան մնում է մի քանի վայրկյան:

Ի տարբերություն երկարատև հիշողության, որին բնութագրական է նյութի երկարատև պահպանումը՝ վերջինիս բազմակի անհամ կրկնելուց և վերարտադրելուց հետո, կարճատև հիշողությունը բնութագրվում է կարճատև պահպանմամբ՝ մեկ անգամ կրկնելուց, ոչ շատ երկարատև ընկալումից և անմիջական վերարտադրումից հետո: Իրականում «կարճատև հիշողություն» հասկացությունն ամրացված է արտաքինից, այն կա, քանի դեռ կապված է մարդու գործունեության հետ: Կարճատև հիշողության հոմանիշ են «ակնթարթային», «կարճաժամկետ» հասկացությունները:

**Երկարատև են անվանում այն հիշողությունը**, որում ինֆորմացիան կարող է պահվել երկար ժամանակ՝ մի քանի րոպեից մինչև մի քանի տարի, ինչո՞ւ չէ՞ նաև ողջ կյանքի ընթացքում:

**Օպերատիվ հիշողություն** ասելով հասկանում ենք մնեմիկական պրոցեսներ, որոնք սպասարկում են անմիջականորեն իրականացվող գործողությունը կամ դրա գործունեությունը: Օրինակ, մարդը թվերի բաժանման ընթացքում միջանկյալ արժեքը հիշում է այնքան ժամանակ, քանի դեռ չի ստացել վերջնական արժեքը: Մարդուն անհրաժեշտ ժամանակահատվածում այդ միջանկյալ արժեքի պահպանումն էլ հենց օպերատիվ հիշողությունն է:

**Միջնորդավորված են անվանում այն հիշողությունը**, որի ժամանակ կիրառվում են մտապահման հատուկ միջոցներ:

**Անմիջական հիշողությունն** այն է, որի ժամանակ մտապահման համար անհրաժեշտ չեն լինում լրացուցիչ միջոցներ:

**3. Հիշողության գործընթացները**

Բացի հիշողության տեսակներից առանձնացնում են նաև հիշողության գործընթացները: Ընդ որում որպես հիմք ընդունում են տարբեր գործառնությունները, որոնք հիշողությունն իրականացնում են մարդու կյանքում և գործունեությունում: Հիշողության գործընթացների շարքին են դասվում նյութի մտապահումը, վերարտադրումը, պահպանումն ու մոռացումը: Վերը թվարկած գործընթացներում առավել ցայտուն է երևում հիշողության կապը գործունեության հետ, ինչպես նաև վերջի-

նիս ակտերի ընթացքի ինքնուրույն՝ մենեիկական, բնույթը: Կարելի է ասել, որ բուն մտածողությունն իրենից ներկայացնում է բավականին բարդ, բայց միասնական և ամբողջական գործընթաց:

**3.1. Մտապահում**

Մտապահումը կարելի է բնորոշել որպես հիշողության գործընթաց, որի արդյունքում տեղի է ունենում նորի ամրագրում ավելի վաղ ձեռքբերածի հետ կապ ստեղծելու շնորհիվ: Սա ամհատի փորձը նոր գիտելիքներով և վարքի ձևերով հարստացնելու պարտադիր պայման է: Մտապահումը միշտ ընտրողական է՝ հիշողությունում չի պահվում այն ամենը, ինչ ներագրում է մեր զգայության օրգանների վրա: Այս կամ այն նյութի մտապահումը բնութագրվում է անձի գործունեության դրդապատճառներով, նպատակներով և միջոցներով: Հենց սրանում էլ կայանում է հիշողության գործունեական մոտեցման դրույթը:

**Մտապահման տեսակները**

1. Մտապահումը լինում է կարճատև և երկարատև: Որպես միջանկյալ կարճատևի և երկարատևի միջև առանձնացնում են օպերատիվ մտապահումը: Մտապահման այս տեսակները դասակարգվում են ելնելով ժամանակային բնութագրիչից:
2. Գործունեության նպատակների համաձայն, որի մեջ ներառված է մտապահման գործընթացը, առանձնացնում են կամաժին և ոչ կամաժին մտապահում: **Ոչ կամաժին մտապահումը** հանդիսանում է արդյունք և պայման ճանաչողական ու պրակտիկ գործողությունների համար: Ոչ կամաժին մտապահումը տեղի է ունենում ինքնուրույն, անկախ, սակայն խիստ դեմոստրիանա տվում է գործունեության առանձնահատկություններով, որոնք իրականացնում է մարդը:

**Ոչ կամաժին մտապահման արդյունավետությունը պայմանավորող գործոնները**

1. Նյութը, որը գործունեության մեջ տարբեր դեր է զբաղեցնում, ձեռք է բերում տարբեր նշանակություն: Անենից լավ մտապահվում է այն նյութը, որը մտնում է գործունեության հիմնական նպատակի բովանդակության մեջ:
2. Ոչ կամաժին մտապահման արդյունավետության վրա ազդում է նաև այն, թե որքան ո՞վ է մտապահվող նյութը նշանակալից անձի համար: Որքան մտապահվող նյութը հետաքրքիր և հուզականորեն հարուստ է լինում, այնքան ավելի արդյունավետ է դրա մտապահման գործընթացը:

3. Ոչ կամաժին կերպով ավելի լավ է մտապահվում այն նյութը, որը վերջինիս շուրջ առաջ է բերում ակտիվ մտավոր աշխատանք:

**Կամաժին մտապահումը** հատուկ մենեիկական գործողությունների արդյունք է, այսինքն՝ այնպիսի գործողությունների, որոնց հիմնական նպատակն է բուն մտապահման գործընթացը: Նման գործողության արդյունավետությունը նույնպես կապված է իրականացման դրդապատճառների, նպատակների և միջոցների հետ:

Ընդ որում ինչպես ցույց են տվել հետազոտությունները՝ կամաժին մտապահման պայմաններից մեկն է խնդրի ճիշտ ձևակերպումը՝ նյութը մտապահել հստակ, ամբողջովին և ըստ հերթականության:

Տարբեր մենեիկական նպատակներ ազդում են մտապահման գործընթացի բուն բնույթի վրա, մտապահման տարբեր միջոցների ընտրության վրա, դրա հետ կապված նաև դրա արդյունքի վրա:

Հետազոտություններից մեկում ուսուցանվողների մտաշարկել էին մտապահել երկու պատմվածք: Առաջինի ստուգումը նշանակված էր մեկ օր հետո, իսկ երկրորդի հետ կապված ասվել էր, որ այն պետք է մտապահվի երկար ժամանակահատված: Իրականում երկու պատմվածքների ստուգումն էլ իրականացվել է չորս շաբաթ անց: Ընդ որում պարզվեց, որ երկրորդ պատմվածքն ավելի լավ էր մտապահվել, քան առաջինը: Այսպիսով, մենեիկական խնդրի նշանակությունը չի կարելի ուղղակի համոզեցնել մտապահման մտադրությանը: Տարբեր մենեիկական խնդիրներ առաջ են քաշում նյութում դրա կառուցվածքում և լեզվային կառուցվածքում տարբեր կողմնորոշումներ՝ պայմանավորելով մտապահման համապատասխան միջոցների ընտրությունը: Գործունեությունը, որն ուղղված է նյութի մտապահմանն ու վերարտադրմանը, կոչվում է մենեիկական գործունեություն: Մենեիկական գործունեությունը միշտ կրում է ստեղծագործ բնույթ:

**Գործոններ, որոնք ապահովում են կամաժին մտապահման արդյունավետությունը**

1. Կամաժին մտապահման գործընթացում մեծ դեր են խաղում դրդապատճառները, որոնք մղում են մտապահման: Հաղորդվող ինֆորմացիան կարող է հասկացված և ուսուցանված լինել, սակայն, քանի որ այն մարդու համար ձեռք չի բերում կայուն նշանակություն, կարող է արագ մոռացվել: Մարդիկ, որոնց մոտ թույլ է զարգացած պատասխանատվության և պարտքի զգա-

ցումը, հաճախ մոռանում են այն ամենի մեծ մասը, ինչ իրենք պիտի հիշեն:

2. Կամաժին մտապահման արդյունավետությունը պայմանավորող պայմանների շարքում կենտրոնական տեղ են զբաղեցնում մտապահման ռացիոնալ հնարները՝ մենտոտեխնիկաները:
  - 2.1 Պիտեյիքները ձևավորվում են որոշակի փաստերի, հասկացությունների, դատողությունների համակարգից: Դրանց մտապահման համար անհրաժեշտ է առանձնացնել որոշակի իմաստային միավորներ, ստեղծել դրանց միջև կապեր, կիրառել տրամաբանական հնարներ:
  - 2.2 Տրամաբանական, իմաստավորված մտապահման անհրաժեշտ պայման է հասկացումը: Հասկացությունը մտապահվում է արագ և ամուր այն պատճառով, որ բովանդակայինը զուգորդվում է անձի անցյալի փորձի հետ:
  - 2.2 Տրամաբանական մտապահման կարևորագույն հնարներից է ուսուցանվող նյութի պլանի կազմումը: Այն ընդգրկում է երեք հիմնական պահ՝ նյութի բաժանումը բաղադրիչ մասերի, դրանց համար ենթավերնագրերի ստեղծում, ըստ այդ ենթավերնագրերի մասերի միացումը:
  - 2.3 Որպես տրամաբանական մտապահման հնար մեծ նշանակություն ունի համեմատությունը: Հատուկ նշանակություն ունի օբյեկտների տարբերությունների ընդգծումը: Այն ապահովում է կապերի մասնագիտացումը և հեշտացումը վերարտադրումը:
  - 2.4 Ըստ նմանության և կոնտրաստի զուգորդման վրա են հենված կամաժին մտապահման նաև այնպիսի բարդ հնարներ, ինչպիսիք են նյութի դասակարգումը, համակարգումը:

### 3.2 Վերարտադրում

Վերարտադրումը կարելի է բնութագրել որպես հիշողության գործընթաց, որի արդյունքում տեղի է ունենում դրանից առաջ հոգեկանում պահեստավորված ինֆորմացիայի վերականգնում՝ երկարատև հիշողությունից օպերատիվ հիշողություն տեղափոխման միջոցով: Վերարտադրման գործընթացը՝ նախկինում յուրացրած նյութի վերականգնումը, կարող է բնութագրվել տարբեր աստիճանի բարդությամբ և խորությամբ. սկսած մեզ շրջապատող առարկաների ավտոմատ ճանաչումից մինչև մոռացվածի բավական դժվար վերհիշում: Սրա հետ մեկտեղ,

բուն վերարտադրման գործընթացում առանձնացնելով վերջինիս դրսեվորման տարբեր տեսակները, կարելի է դրանք շարադրել հետևյալ հերթականությամբ՝ ճանաչում, բուն վերարտադրում, որը կարող է լինել կամաժին և՛ ոչ կամաժին, և՛ վերհիշում:

**Ճանաչումը** մի որևէ օբյեկտի արտաբերումն է կրկնակի ընկալման պայմաններում: Ճանաչումը մեծ կենսական նշանակություն ունի: Առանց դրա մենք ամեն անգամ առարկաները կընկալեինք որպես նոր, այլ ոչ թե որպես արդեն ծանոթ: Ճանաչումը միշտ կապում է ընկալվող օբյեկտը մեր փորձի հետ և դրանով իսկ մեզ հնարավորություն է տալիս ճիշտ կողմնորոշվել մեզ շրջապատող իրականությունում:

Ճանաչումը տարբեր է լինում՝ կախված իր որոշակիության աստիճանից, հստակությունից և ամբողջականությունից: Այն կարող է իրականացվել և՛ որպես կամաժին, և՛ որպես ոչ կամաժին գործընթաց: Սովորաբար, երբ ճանաչումը պարզ է, ամբողջական, որոշակի այն իրականացվում է որպես ոչ կամաժին ակտ: Մենք ոչ կամաժին, առանց ջանքերի, մեզ համար աննկատ ընկալման ընթացքում ճանաչում ենք առարկան, որն ավելի վաղ ընկալել էինք: Ոչ լրիվ կամ ոչ լիարժեք ճանաչման ժամանակ գործընթացը ստանում է բարդ կամաժին բնույթ: Այս պարագայում մենք արդեն գործ ունենք վերարտադրման հետ:

Բուն վերարտադրումը հիշողության այնպիսի մի գործընթաց է, որի ժամանակ ինֆորմացիայի արտածումը տեղի է ունենում առանց այդ օբյեկտի կրկնակի ընկալման: Այն կարող է լինել կամաժին և ոչ կամաժին: Այն դեպքում, երբ վերարտադրումն առաջ է գալիս տվյալ պահին մարդու կողմից իրականացվող գործունեության բովանդակությունից ելնելով, խոսքը գնում է ոչ կամաժին վերարտադրման մասին:

Կամաժին վերարտադրումն ի հայտ է գալիս մարդու կողմից իր առջև դրվող վերարտադրողական խնդրի շնորհիվ: Եթե մարդուն անհրաժեշտ է լինում ջանք գործադրել, որպեսզի կարողանա վերարտադրել նյութը, ապա նման վերարտադրումը կոչվում է վերհիշում: Վերհիշման արդյունավետությունը շատ դեպքերում կախված է լինում նրանից, թե ինչպիսի պայմաններում և ինչպես է այն իրականացվում:

#### Արդյունավետ վերարտադրման գործոնները

Հիշողությունը մեր անցյալի պատկերների վերարտադրումն է, որոնք տեղակայված են տարածության և ժամանակի մեջ: Հիշողությունների պարագայում մենք ոչ միայն վերարտադրում ենք անցյալի պատկերները, այլև դրանք վերագրում ենք որոշակի վայրի և ժամանակի, այսինքն՝ հիշում ենք թե ե՞րբ, որտե՞ղ, ինչպիսի՞ պայմաններում են



դրանք մեր կողմից ընկալվել, կապում ենք դրանք մեր կյանքի որոշակի շրջանների հետ, գիտակցում ենք դրանց ժամանակային հերթագայությունը:

1. Հետազոտությունները ցույց են տալիս, որ վերհիշման արդյունավետությունը կախված է նրանից, թե որքանով է հստակ և ճիշտ գիտակցվում անձի առջև դրված վերարտադրողական խնդիրների բովանդակությունը: Վերարտադրման ընթացքում դժվարությունների հետ բախվելիս առավել նպաստավոր է գնալ գիտելիքների լայն շրջանակից դեպի ավելի նեղը, համապատասխանաբար դեպի վերարտադրողական խնդիրը: Ընդ որում անհրաժեշտ է լայն կիրառել համադրումը, զուգորդումների համեմատումն այն բանի հետ, ինչը որ պետք է վերարտադրել:

2. Վերհիշումը, ինչպես և հիշումը, նույնպես ընտրողական է: Խոսքում լավ գիտակցված և ճիշտ ձևակերպված վերարտադրողական խնդիրը ուղղորդում է վերհիշման հետագա ընթացքը, օգնում է մեր հիշողությունից վերցնել անհրաժեշտ հունքը և արգելակում է երկրորդական զուգորդումները:

3. Վերհիշման արդյունավետությունը նաև կախված է նրանից, թե ինչպիսի վերհիշման մեխանիզմներ են կիրառվում: Առավել կարևորագույններից են վերհիշվող նյութի պլանի կազմումը, սեփական հոգեկանում համապատասխան օբյեկտների պատկերների ակտիվացումը, միջնորդավորող ասոցիացիաների գիտակցված առաջացումը, որոնք այլ ընտրանքային ճանապարհով տանում են այն բանի վերարտադրման, որն անհրաժեշտ է:

4. Վերհիշման արդյունավետությունը գերազանցապես կախված է նրանից, թե որքանով է մարդը դրապատճառված իրականացնել վերարտադրողական խնդիրը:

5. Վերարտադրումը անցյալի տպավորությունների ուղղակի վերարտադրում չէ: Անցյալում մեր կողմից յուրացված գիտելիքները վերարտադրման ժամանակ միավորվում են նոր գիտելիքների հետ, նորովի կարգավորվում, առավել խորքային գիտակցվում:

### 3.3 Մոռացում

Մոռացումը հիշողության գործընթաց է, որը կապված է նախկին ներազդման հետքերի և դրանց վերարտադրման հնարավորության կորստի հետ:

### Մոռացման օրինաչափությունները:

Մոռացումը առավել խորքային է այնքանով, որքանով հազվադեպ է որոշակի կոնկրետ գործունեություն ընդգրկվում է մարդու գործունեության մեջ:

Որքանով նվազում է նյութի նշանակությունը կենսական նպատակներին հասնելու գործընթացում, այնքան ավելի արագ է այն մոռացվում: Չնայած այն բանին, որ մարդիկ ձգտում են լավ հիշողություն ունենալ, այսինքն՝ առավել ամուր հիշել նյութը և ավելի երկար այն պահպանել, չի կարելի խոսել մոռացման միայն բացասական նշանակության մասին: Մոռացումը նպատակահարմար երևույթ է: Այն, ինչ անձի գործունեության մեջ ներառվելով, շարունակում է մնալ նրա համար իմաստալից, նշանակալի, չի մոռացվում:

Գործունեության մեջ ընդգրկումը վստահելի կապ է մարդու պահանջմունքների և ինֆորմացիայի միջև, և հետևապես՝ մոռացման դեմ պայքարի միջոց: Գործունեության մեջ ներգրավված ման օրինակ է այն նյութի պարբերաբար կրկնությունը, որն անհրաժեշտ է պահպանել հիշողության մեջ: Առավել քիչ կայուն, ինչպես նաև ժամանակավոր մոռացումը կարող է կապված լինել բացասական ինդուկցիայի հետ: Այսպես, ուժեղ կառուցված ազդակները ուսուցման ժամանակ կարող են կամ բարդացնել նոր ժամանակային կապերի ձևավորումը՝ նվազեցնելով մտապահման արդյունավետությունը, կամ էլ թուլացնել, ջնջել նախկինում ձևավորված կապերի հետքերը և դրանով իսկ առաջացնել մոռացում: Ենթադրելով կարող է նախորդ գործունեության ազդեցության հետևանք լինել. պրոակտիվ՝ դեպի առաջ գործող արգելակում, կամ հակառակը, հաջորդող գործունեության բացասական ազդեցությունը այն կապերի վրա, որոնք ձևավորվել էին նախորդ գործունեության արդյունքում՝ ռետրոակտիվ, այսինքն՝ հետ գործող արգելակում: Արգելակումն առաջանում է առավելապես այն ժամանակ, երբ նախորդող կամ հաջորդող գործունեությունը եղել է բարդ կամ ման ներկայի գործունեությանը:

Հայտնի է, որ նյութի միջին մասը ավելի վատ է մտապահվում, քան սկիզբն ու վերջը. միջին մասը ենթարկվում է և՛ պրոակտիվ, և՛ ռետրոակտիվ արգելակման ազդեցությանը, հատկապես, եթե նյութը մեծ է իր ծավալով: Այդ իսկ պատճառով էլ նյութի միջին մասը պահանջում է մեծ քանակությամբ կրկնություն: Հարկավոր է պահպանել աշխատանքի հավասարաչափ, քիչ շտապողական ընթացքը, հարկավոր է երկար

պահել ուշադրությունն առարկայի վրա, քանի որ միայն այդ դեպքում են ազդականներն ամրագրվում գլխուղեղում:

Ժամանակավոր մոռացումը կարող է առաջանալ վերսահմանային արգելակման հետևանքով, որն առաջանում է համապատասխան կեղևային կենտրոնների գերլարվածության արդյունքում: Դրանով է բացատրվում մտապահման մակարդակի կտրուկ նվազումը հոգնածության վիճակում:

Ժամանակավոր մոռացման հետ, որը կարող է առաջանալ բացասական ինդուկցիայի և վերսահմանային արգելակման արդյունքում, կապված է ռեմինիսցենցիայի երևույթը: Այն դրսևորվում է նրանում, որ հետաձգված վերարտադրումը հանդես է գալիս ավելի ամբողջական, քան այն, որն իրականացվում է մտապահումից անմիջապես հետո: Հաճախ դա տեղի է ունենում ծավալով մեծ նյութերի մտապահման ժամանակ: Փորձերը ցույց են տվել, որ ռեմինիսցենցիայի երևույթն առավել հաճախ հանդիպում է երեխաների, քան թե մեծահասակների մոտ:

Նյութի վերարտադրման դժվարությունները կարող են ուժեղանալ հիշելու չափազանց մեծ ցանկության հետևանքով, որը ևս առաջացնում է արգելակում:

Հետևաբար, վերարտադրման անհնարինությունը և անգամ ճանաչման դժվարությունները չեն հանդիսանում լրիվ մոռացման ցուցանիշներ: Կարելի է առանձնացնել առնվազն երկու առավել նշանակալի գործոններ, որոնք նպաստում են արագ մոռացմանը.

- 1) ստեղծված նյարդային կապերի ամրության ցածր մակարդակը,
- 2) մտապահվող նյութի հանդեպ հետաքրքրության բացակայությունը:

Մոռացման ազդեցիկ գործոններին է հանդիսանում ժամանակը: Գեբբինհաուզը ցույց տվեց, որ մոռացումն առավել ինտենսիվ է ընթացում ու ուղեղումից անմիջապես հետո, իսկ դրանից հետո ավելի դանդաղում: Այդ մոռացման օրինաչափությունը էբբինհաուզը ներկայացրել է մոռացման կորի միջոցով: Առաջին մեկ ժամվա ընթացքում մոռացվում է ողջ ստացված ինֆորմացիայի 60%-ը, իսկ արդեն վեց օր հետո մնում է ընդհանուր մտապահված ինֆորմացիայի 20%-ից պակաս:

### 3.4 Հիշողությունում ինֆորմացիայի պահպանման գործոններն ու պայմանները կամ ինչպես պայքարել մոռացման հետ

1. Կայուն, նշանակալից նյութը, որն իր բովանդակությամբ կապված է մարու պահանջներին, նրա խորքային հետաքրքրություններ

րի, նրա գործունեության նպատակների հետ, ավելի դանդաղ է մոռացվում:

2. Այն, ինչ ունի մարդու համար առավել կենսական նշանակություն, ընդհանրապես չի մոռացվում:

3. Նյութի պահպանման մակարդակը պայմանավորվում է վերջինիս մարդու գործունեությունում մասնակցության աստիճանով: Դրա համար շատ կարևոր է նյութն անընդհատ ներգրավել գործունեության մեջ և կիրառել այն արակտիկայում:

4. Մոռացումը կախված է նյութի ծավալից: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է նյութը սովորելու ընթացքում այն ստանալ համապատասխան չափաբաժիններով:

### 4. Հիշողության ուսումնասիրման մեթոդները

Հիշողության ուսումնասիրման ժամանակ կարող են առաջանալ հետևյալ երեք հիմնական խնդիրները՝ որոշել մտապահման ծավալն ու ամրությունը, տալ մոռացման գործընթացի ֆիզիոլոգիական բնութագրերը և հիշողության մտային կազմակերպման հնարավոր մակարդակները:

Հիշողության ծավալի և ամրության տարրական ուսումնասիրման մեթոդներն ունեն մի քանի տարբերակ:

Դրանց շարքին են դասվում.

- 1) իրար հետ կապ չունեցող տարրերի շարքի մտապահման հետազոտման մեթոդները,
- 2) մման տարրերի երկար շարքի մտապահման հետազոտությունների մեթոդները:

Առաջին մեթոդի էությունը կայանում է նրանում, որ հետազոտվողին ներկայացվում է տարրերից բաղկացած շարք՝ վանկեր, թվեր կամ բառեր, որոնք գնալով աճում են և հետազոտվողին առաջարկում են դրանք վերարտադրել այն հերթականությամբ, որով դրանք ներկայացվել են:

Կարճատև հիշողության ծավալ համարվում է տարրերի այն առավելագույն քանակությունը, որը հետազոտվողը կարողանում է վերարտադրել առանց սխալների մեկ անգամ ներկայացնելուց հետո: Որպեսզի հնարավոր լինի բացահայտել տեսողական և լսողական հիշողություններին միջև առկա տարբերությունները, այդ շարքերը կարող են ներկայացվել տեսողական կամ լսողական ձևերով: Այս մեթոդի տարատեսակ է հանդիսանում գիտափորձը, որում հետազոտվողին ներկա-

յացվում է երկրաչափական մարմինների որոշակի խումբ՝ հաջորդականությանը կամ միաժամանակ, որից հետո առաջարկվում է կամ գտնել դրանք այլ մարմինների խմբի միջից՝ ճանաչման մեթոդ, կամ պատկերել դրանք՝ վերարտադրման մեթոդ:

Մտապահման ուսումնասիրման մեթոդի ժամանակ հետազոտվողին տրվում է իրար հետ կապ չունեցող վանկերի, բառերի կամ թվերի երկար շարք, որոնք նա չի կարող միանգամից հիշել, և առաջարկվում է դրանք վերարտադրել կամայական հերթականությամբ: Փորձը կրկնվում է մի քանի անգամ՝ հիմնականում 10 անգամ, վերարտադրված բառերը նշանակվում են թվերով՝ կախված արտաբերման հերթականությունից: Հետազոտության ավարտին կազմվում է մտապահման կորը: Մտապահումը գնահատվում է ընդհանուր արդյունքներով շարքի անդամների պահպանման քանակն ու կրկնությունների թիվը, որն անհրաժեշտ էր դրանք վերջնական սովորելու համար՝ կորի բնույթով, արագ վերելքը, տատանումների առկայությունը և այլն՝ հերթականության այն կայունությամբ, որով հետազոտվողը վերարտադրել է բառերը: Վերջինս հնարավորություն է տալիս բացահայտել ինչպես հետազոտվողի հիշողական գործունեության ռազմավարական առանձնահատկությունները, այնպես էլ եզրային էֆեկտի արտահայտվածության աստիճանը:

Մոռացման ֆիզիոլոգիական բնույթի ուսումնասիրությունները խնդիր են դնում ուսումնասիրելու, թե արդյոք մոռացման հիմքում ընկած է հետքերի թուլությունը, թե դրանց արգելակումը ինտերֆերենցող գործոնների կողմից: Նման տիպի հետազոտությունների ժամանակ ստուգվում է մարդու կարողությունը մտապահել տվյալ ինֆորմացիայի շարքը որոշակի կոնկրետ ժամանակահատվածում, որում բացակայում է այլ տիպի գործունեությունը, և ուսումնասիրվում է, թե ինչպես է ազդում կողմնակի գործունեությունը:

Այս խմբին պատկանող առավել հասարակ մեթոդները ներկայացվում են ստորև.

1. Հետազոտվողին ներկայացվում է վանկերի, բառերի կամ թվերի կարճ շարք, որը բաղկացած է 4, 5, 6 տարրերից, մյուս դեպքում առաջարկվում է դրանք վերարտադրել անմիջապես ներկայացնելուց հետո ու նույն հերթականությամբ, իսկ մյուս դեպքում՝ 30 վայրկյան, 1 րոպե և 2 րոպե դադարից հետո: Հետքերի թուլությունն արտահայտվում է նրանում, որ ներկայացումից անմիջապես հետո արդյունավետ կրկնելուց հետո հետազոտվողը բախվում է դժվարությունների հետ, երբ վերար-

տադրում է դադարից հետո՝ տալով ավելի քիչ քանակությամբ վերարտադրության տարրեր, կամ էլ սկսում է վերարտադրել կողմնակի՝ հնչեղությամբ կամ իմաստով կապված տարրեր, կամ էլ սկսում է տեղափոխել դրանք՝ փոփոխելով այն հերթականությունը, որով ներկայացվել էին:

2. Հետազոտվողին ներկայացվում են բառերի, վանկերի կամ թվերի նման շարք և առաջարկվում է դրանք վերարտադրել անմիջապես ներկայացնելուց հետո: Դրանից հետո նրան առաջարկվում է իրականացնել որևէ կողմնակի գործունեություն, օրինակ, իրականացնել հանման կամ բաժանման համեմատաբար բարդ օպերացիաներ, որոնց տրվում է նույնքան, որքան է դատարկ դադարը՝ 30 վր., 1 ր., 2 ր.: Այս նրան նորից խնդրում են կրկնել սկզբում նրան ներկայացված տարրերը: Կողմնակի գործունեության ազդեցությունը դրսևորվում է նրանում, որ, ի տարբերություն դադարով փորձի, հետազոտվողն ի վիճակի չի լինի վերարտադրել նույնքան էլեմենտներ, որքան կարողանում էր նախկինում:

3. Հետազոտվողին ներկայացվում է 3, 4, 5 բառից, վանկից կամ թվից բաղկացած կարճ շարք և առաջարկվում է վերարտադրել դրանք: Դրանից հետո նրան ներկայացվում է նմանատիպ տարրերից բաղկացած մեկ այլ շարք, որը նաևս պետք է վերարտադրի: Դրանից անմիջապես հետո հետազոտվողին խնդրում են վերարտադրել առաջին շարքը:

Միատեսակ՝ հոմոգեն, գործունեության արգելակող ազդեցությունը կդրսևորվի նրանում, որ հետազոտվողը կամ ընդհանրապես չի կարողանա վերադառնալ առաջին շարքին, կամ ի վիճակի կլինի վերարտադրել շատ ավելի քիչ քանակությամբ էլեմենտներ, կամ էլ կվերարտադրի մի շարք, որը մասնակիորեն կներառի նաև երկրորդ շարքի տարրերը, այսինքն՝ ի հայտ կգա հոգեբանությունում հայտնի կոնտամինացիա երևույթը:

Հիշողության իմաստային մակարդակի ուսումնասիրման համար հիմնականում օգտվում են միջնորդավորված մտապահման ուսումնասիրման մեթոդներից, որոնք մշակվել են Լ. Վ. Վիգոտսկու, Ա. Ն. Լեոնտևի և Լ. Վ. Ջնակովի կողմից: Միջնորդավորված մտապահման մեթոդի էությունը կայանում է նրանում, որ հետազոտվողին առաջարկվող բառերի շարքը մտապահելու համար տալիս են երկրորդական նկարներ և խնդիր է դրվում տրամաբանորեն կապել յուրաքանչյուր բառը որոշակի կոնկրետ նկարի հետ: Հաղթահարելով փորձության այս մասը՝ հետազոտվողը դրանից հետո պետք է վերանայի ընտրված նկարները և յու-

րաքանցյուր անգամ անվանի այն բառը, որի մտապահման համար տվյալ նկարը կիրառվել է:

Սյս պարագայում հետազոտվողին ներկայացվում է ոչ թե ազդակների մեկ շարք, որը ենթակա է մտապահման, այլ ազդակների երկու շարք, որոնցից առաջինը՝ մտապահման ենթակա բառը հանդիսանում է մտապահման առարկա, իսկ երկրորդը՝ օժանդակ նկարները՝ մտապահման միջոց: Հետազոտողը գնահատում է ինչպես օժանդակ կապերի բնույթը, որոնք հետազոտվողը ստեղծում է բառերի և նկարների միջև, այնպես էլ ընտրված կամ առաջարկված օժանդակ նկարների միջոցով բառերի վերհիշման արդյունավետությունը:

Միջնորդավորված մտապահման մեթոդի յուրահատուկ տարբերակ է հանդիսանում մեկ այլ մեթոդ, որը հայտնի է «պիկտոգրամ» անվանմամբ: Հետազոտվողի համար ընթերցվում է 12-15 բառերից բաղկացած մի շարք, որը հնարավոր չէ անմիջապես պատկերել, օրինակ՝ «կասկած», «գարգացում» և այլն: Որպեսզի կարողանա մտապահել այդ բառերը, հետազոտվողը պետք է նկարի պայմանական պատեր՝ նշան, որոնց մայելով նա պետք է հետո հիշի նշանակած բառը: Քանի որ ներկայացվող բառերը չի կարելի ներկայացնել պատկերավոր, հետազոտվողը կարող է կիրառել կամ հայտնի պայմանական նշաններ, կամ պատկերել իր ավիճակ, որը հիշեցնում է տվյալ բառը:

Ստորև սույն ձեռնարկի սահմաններում կներկայացնենք հիշողության ուսումնասիրման մոտ երկու տասնյակ մեթոդներ՝ մանրամասն նկարագրելով հետազոտման ընթացքը, անհրաժեշտ առաջադրանքի նյութերը և սարքավորումները, արդյունքների արձանագրման, վերլուծության և մեկնաբանման եղանակները:

### Գրականություն

1. Аткинсон В., Память и уход за ней. Орел, 1992.
2. Клацки Р., Память человека: структуры и процессы. М.:1978.
3. Лурия А.Р., Внимание и память.- М., Изд-во МГУ, 1975.
4. Психология памяти / Под ред. Ю.Б. Гиппенрейтер, В. Я. Романова. М.: ЧеРо, 1998.
5. Смирнов А. А., Проблемы психологии памяти // Избранные психологические труды Т. 2. М.: Педагогика, 1987.

## 1.1 ԿԱՐՃԱՏԵՎ ՔԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (Ձեկորսի մեթոդը)

**Նպատակը.** թվային նյութի հիման վրա որոշել կարճատև հիշողության ծավալը:

**Առաջադրանքի նյութերը.** թվերի 4 հավաքակազմ, յուրաքանչյուրում 7 շարք թիվ, որոնք պարունակում են 4-ից 10 անդամներ (շարքերը բաղկացած են պատահական թվերից): Տես հավելված 1:

### Աշխատանքի իրականացման ընթացքը

Գիտափորձը կազմված է չորս փուլերից:

*Առաջին փուլ* անց է կացվում թվերի առաջին հավաքակազմի հետ: Հետազոտողը հետազոտվողի համար հերթականությամբ կարդում է թվերի յոթ շարքերը՝ սկսելով ամենակարճից: Յուրաքանչյուր շարքի ներկայացումից հետո հետազոտվողը արձանագրության մեջ գրավոր վերարտադրում է շարքի անդամները այն հերթականությամբ, որով դրանք կարդացել է հետազոտվողը:

2-րդ, 3-րդ, 4-րդ փուլերն անց են կացվում նույնությամբ, սակայն թվերի այլ հավաքակազմով:

Դրանից հետո հետազոտվողը բանավոր հաշվետվություն է տալիս, թե ինչպիսի հնարներ է օգտագործել շարքի մտապահման համար: Հետազոտողը աղյուսակ 1-ում նշում է հետազոտվողի վարքի իր դիտարկումները:

Աղյուսակ 1 - Հետազոտվողի կողմից լրացվող արձանագրություն

	Վերարտադրման արդյունքները			
	Առաջին փուլ	Երկրորդ փուլ	Երրորդ փուլ	Չորրորդ փուլ
4.				
5.				
6.				
7.				
8.				
9.				
10.				

### Դրահանգ.

Ձեզ հերթականությամբ, սկսած ամենակարճից, կներկայացվեն պատահական թվերի շարքեր, որոնք պարունակում են 4-ից 10 անդամ-

ներ: Ձեր խնդիրն է մտապահել և վերարտադրել թվերը այն հերթակա-  
նությանը, որով Ձեզ ներկայացվել են:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

1. Գիտափորձի յուրաքանչյուր փուլի արդյունքները համեմատել ներկայացված նյութի հետ: + մշանով աղյուսակում մշվում են ճշգրիտ վերարտադրված շարքերը: Մասնակի, ոչ ճիշտ հերթականությանը կամ սխալներով վերարտադրված շարքերը մշվում են – մշանով:
2. Հաշվարկվում է յուրաքանչյուր փուլի ճշգրիտ վերարտադրվող շարքերի տոկոսը: Կազմել չորս փուլերի արդյունքների ամփոփ աղյուսակ: Տե՛ս աղյուսակ 2.

*Աղյուսակ 2 - Արդյունքների ամփոփ աղյուսակ*

Փուլի համարը	Շարքերի վերարտադրման արդյունքները							
	4 անդամ	5 անդամ	6 անդամ	7 անդամ	8 անդամ	9 անդամ	10 անդամ	
1								
2								
3								
4								
Ճշգրիտ վերարտադրված շարքերի %								

3. Կառուցել նյութի քանակի և մտապահման արդյունավետության կախվածության գրաֆիկը:
4. Հաշվել կարճատև հիշողության ծավալը  $V=A+m/n+k/2$  բանաձևով, ուր A-ն շարքի առավելագույն երկարությունն է, որը ճշգրիտ վերարտադրվել է բոլոր փորձերի ընթացքում, n-ը՝ փորձերի քանակը (այս պարագայում՝ 4) m-ը՝ ճշգրիտ վերարտադրված շարքերի քանակը, k-ն՝ յուրաքանչյուր հաջորդ շարքի թվի ավելացման ինտերվալը (այս պարագայում՝ 1) :
5. Հաշվել ճշգրիտ վերարտադրված շարքերի միջին ցուցանիշը (%) բոլոր փուլերի ընթացքում ողջ խմբի համար և անհատական գրաֆիկը զուգակցել խմբային կախվածության գրաֆիկով:
6. Հաշվել կարճատև հիշողության ծավալը ողջ խմբի համար:

7. Համադրել անհատական և խմբային տվյալները (կարճատև հիշողության ծավալը և նյութի քանակի և մտապահման արդյունավետության կախվածության գրաֆիկը):
8. Ստացված քանակական տվյալների և հետազոտվողի բանավոր հաշվետվության հիման վրա վերլուծել տվյալ հետազոտվողի մտապահման գործունեության ընթացքը:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. СПб.: Питер, 2000. 95 с.

**1.2 ՕՊԵՐԱՏԻՎ ԴԻՇՆՈՂՈՒԹՅԱՆ ԱՈՒՆՁՆԱԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ուսումնասիրումը, այն ժամանակ, երբ այն կրում է հիմնական ֆունկցիոնալ կշիռը:

**Առաջադրանքի նյութերը.** թվերով բլանկը (10 շարք՝ յուրաքանչյուրում 5 թիվ): Տե՛ս հավելված 2:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձարկողը հերթականությամբ կարդում է հինգ թվանոց տասը շարքերը: Հետազոտվողը պետք է յուրաքանչյուր շարքը ներկայացնելուց հետո մտապահի թվերը այն հերթականությամբ, որով ընթերցվել է, ապա մտքում գումարի առաջին թիվը երկրորդին, երկրորդը՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին, չորրորդը՝ հինգերորդին: Արդյունքում ստացված չորս գումարային թվերը հետազոտվողը գրում է պատասխանների թերթիկում: Երկու շարքերի ընթերցման միջև դադարը 15 վայրկյան է:

**Հրահանգը.**

«Ես կկարդամ թվեր՝ տասը շարք՝ յուրաքանչյուրում հինգ թիվ: Ձեր խնդիրն է մտապահել այդ հինգ թվերը այն հերթականությամբ, որով ընթերցվել է, ապա մտքում գումարեք առաջին թիվը երկրորդին, երկրորդը՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին, չորրորդը՝ հինգերորդին: Արդյունքում ստացված չորս գումարային թվերը գրում եք պատասխանների թերթիկում»

**Արդյունքների մշակում և վերլուծություն:**

1. Հաշվել ճիշտ գրված գումարելիների քանակը:
2. Հաշվել խմբային միջին ցուցանիշը և այն համեմատել անհատական տվյալների հետ: (Գումարելիների առավելագույն թիվը 40 է: Հետազոտությունների տվյալներով հասուն տարիքի մարդու համար նորման 30 և ավելի է):

**Աղբյուր.** Лучшие психологические тесты для профотбора и профориентации / Отв. ред. А. Ф. Кудряшов. Петро заводск, 1992. 6 с.

**1.3 ՈՉ ԿԱՍԱԾԻՆ ՄՏԱՊԱՀՄԱՆ ԵՎ ՆՐԱ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (Պ. Զինչեմկոյի մեթոդիկան)**

**Նպատակը.** բացահայտել ոչ կամածին մտապահման արդյունավետության կախվածությունը անձի գործունեության բնույթից:

**Առաջադրանքի նյութերը.** 16 նկար, որոնք հեշտ դասակարգվում են 4 խմբի: Բացի պատկերից յուրաքանչյուր նկարի աջ վերին անկյունում գրված է երկնիշ թիվ: Տես հավելված 3:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձը կազմված է երկու փուլից: Բոլոր փորձարկվողները բաժանվում են երկու ենթախմբի:

**Առաջին փուլ:** Առաջին խմբին տրվում է հետևյալ հրահանգը. «Ձեր հետ կանցկացվի փորձ, որում ստուգվում է ընդհանուր գործունեության համաձայն առարկաների դասակարգման Ձեր ընդունակությունը: Ձեր խնդիրն է մտքում դասակարգել բոլոր պատկերները չորս խմբի»: Ավարտին հետազոտվողներին առաջարկում են գրավոր, ցանկացած հերթականությամբ, վարարտադրել սկզբում նկարները, ապա՝ թվերը:

**Երկրորդ փուլ:** Երկրորդ խմբին ներկայացվում է նույն նյութը հետևյալ հրահանգով. «Ձեր խնդիրն է նկարների վրայի թվերը մտքում դասավորել հերթականությամբ՝ փոքրից մեծ»: Ավարտին հետազոտվողներին առաջարկում են գրավոր ցանկացած հերթականությամբ վերարտադրել սկզբում թվերը, ապա՝ նկարները:

**Առաջին և երկրորդ փուլերի արդյունքների մշակումն ու վերլուծությունը:**

1. Որոշել ճշգրիտ վերարտադրված նկարների և թվերի միջին ցուցանիշը (երկու փորձերում էլ) հետազոտվողների յուրաքանչյուր խմբի համար:
2. Ստացված միջին ցուցանիշները անցկացնել արյուսակ: Տես աղյուսակ 3.

*Աղյուսակ 3 - Արդյունքների ամփոփ աղյուսակ*

Խնդիր	Ճշգրիտ վերարտադրությունների միջին ցուցանիշները	
	առարկաների	թվերի
Առարկաների դասակարգում		
Թվային շարքի կազմում		

3. Աղյուսակում ներկայացված տվյալների վերլուծության հիման վրա եզրահանգումներ կատարել ոչ կամածին մտապահման արդյունավետության պայմանների վերաբերյալ:
4. Հաստատել այն պայմանները, որոնք առանձին դեպքերում օգնել են առարկաների և թվերի մտապահմանն այն իրավիճակներում, երբ նրանք ֆոնային ազդակներ են եղել:

**Աղբյուր.** Практикум по психологии / Под ред. А. Н. Леонтьева, Ю. Б. Гиппенрейтер. - М.: МГУ, 1972. 139 с.

**1.4 ԿԱՍԱԾԻՆ ԵՎ ՈՉ ԿԱՍԱԾԻՆ ՄՏԱՊԱՀՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (Պ. Զինչեմկոյի մեթոդիկան)**

**Նպատակը.** ուսումնասիրել կամածին մտապահման արդյունավետության պահանջները, համեմատել կամածին և ոչ կամածին մտապահման արդյունավետությունը:

**Առաջադրանքի նյութերը.** 16 նկար, որոնք հեշտությամբ դասակարգվում են 4 հիմնական խմբի: Տես հավելված 4:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Չետազոտությունը կազմված է երկու փուլից: Բոլոր հետազոտվողները բաժանվում են երկու ենթախմբի:

*Առաջին փուլ:* Առաջին ենթախմբին տրվում է հետևյալ **հրահանգը**. «Ձեզ երկու-երեք թույլտվություններ կներկայացվի 16 նկար. Ձեր խնդիրն է դրանք ուշադիր դիտարկել և փորձել մտապահել»: Դրանից հետո հետազոտողը հավաքում է նկարները և փորձարկվողները պետք է գրավոր շարադրեն նկարների անվանումները ցանկացած հերթականությամբ:

*Երկրորդ փուլ:* Չետազոտվողների երկրորդ ենթախմբին ներկայացվում է նույն առաջադրանքի նյութերը և տրվում է հետևյալ **հրահանգը**. «Ձեզ երկու-երեք թույլտվություններ կներկայացվի 16 նկար Ձեր խնդիրն է դրանք ուշադիր դիտարկել և դասակարգել 4 հիմնական խմբերի»: Դրանից հետո հետազոտողը հավաքում է նկարները և փորձարկվողները պետք է գրավոր շարադրեն նկարների անվանումները ցանկացած հերթականությամբ:

**Երկու փորձերի տվյալների մշակումն ու վերլուծությունը.**

1. Որոշել ճիշտ վերարտադրված նկարների միջին ցուցանիշը երկու խմբերում էլ:
2. Գրանցել ստացված տվյալները աղյուսակ 4-ի մեջ.

*Աղյուսակ 4 -Արդյունքների ամփոփ աղյուսակ*

Խնդիրը	Ճիշտ վերարտադրված նկարների միջին ցուցանիշը
Կամաժին մտապահում	
Ոչ կամաժին մտապահում	

**Աղբյուր.** Практикум по психологии / Пю. ред. А. Н. Леонтьева, Ю. Б. Гиппенрейтер. М.: МГУ, 1972. 139 с.

**1.5 ԱՆՄԻՋԱԿԱՆ ԵՎ ՄԻ ՋՆՈՐՂՎՈՐՎԱԾ ՄՏԱՊԱՅԱՆ ՈՒՍՈՒՄՆ ԱՄԻՐՈՒՄ**

**Նպատակը.** որոշել, թե կապերի համակարգի վրա հենված հիշողությունը որքանով կարող է մեծացնել մտապահվող նյութի ծավալը ի համեմատություն այն ծավալի, որը մտապահվում է անմիջական մտապահման ժամանակ:

**Առաջադրանքի նյութերը.** իրար հետ չկապակցված 20 բառ և 20 զույգ բառեր: Յուրաքանչյուր զույգ իրար միջև կապված է ցանկացած ձևի զուգորդմամբ, զույգի առաջին բառերը միջնորդավորող բառերն են, երկրորդը՝ օբյեկտ-բառերը, որոնք և հետազոտվողը պետք է մտապահի: Տես հավելված 5:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Գիտափորձը կազմված է երկու փուլից:

*Առաջին փուլ:* Չետազոտողը ներկայացնում է իրար հետ չկապակցված 20 բառեր՝ նրանց միջև 2 վայրկյան դադարներով: Շարքի ներկայացումից հետո հետազոտվողը պետք է վերարտադրի բառերը ցանկացած հերթականությամբ: Փորձի ավարտից հետո հետազոտվողը խոսքային հաշվետվություն է ներկայացնում այն մասին, թե ինչպես է նա մտապահել բառերը:

*Երկրորդ փուլ:* Չետազոտվողը կարող է 20 զույգ բառեր նրանց միջև 2 վայրկյան դադարներով: Շարքի ներկայացման ավարտից հետո հետազոտվողը կարող է միջնորդավորող բառերը (նրանց ընթերցման հաջորդականությունը փոխվում է), իսկ հետազոտվողը պետք է անվանի համապատասխան օբյեկտ-բառերը: Սխալ վերարտադրված պատասխանները, ինչպես նաև խոսքային հաշվետվությունը, թե ինչպես է հետազոտվողը կապել բառերը, գրանցվում են հետազոտողի կողմից:

**Առաջին փուլի հրահանգ.**

«Ձեզ կներկայացվեն իրար հետ չկապակցված 20 բառեր: Ձեր խնդիրն է մտապահել դրանք և վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Երկրորդ փուլի հրահանգ.**

«Ձեզ կներկայացվի բառերի շարք, որն ընդգրկում է 20 զույգ

բառեր. առաջին բառը միջնորդավորող բառն է, երկրորդը՝ օբյեկտը: Շարքի ընթերցումից հետո, Ձեզ ևս մեկ անգամ կընթերցվեն միջնորդավորող բառերը և Ձեր խնդիրն է վերարտադրել օբյեկտ-բառերը»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

1. Որոշել առաջին և երկրորդ փուլերում ճշգրիտ և սխալ վերարտադրված բառերի քանակը:
2. Կազմել երկու փուլերի արդյունքների ամփոփ աղյուսակ.

*Աղյուսակ 5 - Արդյունքների ամփոփ աղյուսակ*

Փուլի №	Վերարտադրությունների քանակը	
	ճշգրիտ	սխալ
1		
2		

3. Որոշել մտապահման արդյունավետության մեծացման գործակիցը հատուկ միջնորդավորող միջոցների օգտագործման անցմելիս հետևյալ բանաձևով.  $K = (V_0 - V_H) / V_0 * 100\%$ , ուր K-ն մտապահման արդյունավետության մեծացման գործակիցն է,  $V_0$ -ն միջնորդավորված,  $V_H$ -ը՝ անմիջական մտապահման ճշգրիտ վերարտադրությունների քանակը:
4. Համեմատել երկու փուլերի արդյունքները, օգտագործելով ոչ միայն քանակական տվյալները, այլև հետազոտվողների խոսքային հաշվետվությունները և հետազոտողի դիտումները:

**Աղբյուր.** Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии. СПб.: Питер, 2002.

**1.6 ՄՏԱՊԱՀՄԱՆ ՎՐԱ ՆՅՈՒԹԻ ԻՄԱՍՏԱՎՈՐՎԱԾ ՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐ ՈՒՄ**

**Նպատակը.** ուսումնասիրել նյութի մտապահման արդյունավետության կախվածությունը նրա իմաստավորվածությունից:

**Առաջադրանքի նյութերը:** 15 անիմաստ վանկեր, 15 իրար հետ իմաստային կապ չունեցող բառեր և 15 իմաստով իրար հետ կապված բառեր: Տե՛ս հավելված 6:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձն անց է կացվում երեք փուլով.

**Առաջին փուլ:** Փորձարկողը հետազոտողի համար ընթերցում է 15 անիմաստ վանկեր: Նյութի ներկայացումից հետո հետազոտվողը պետք է դրանք վերարտադրի պատահական հերթականությամբ:

**Երկրորդ փուլ:** Փորձարկողը ընթերցում է իրար հետ իմաստային կապ չունեցող բառեր: Նյութի ներկայացումից հետո հետազոտվողը պետք է դրանք վերարտադրի պատահական հերթականությամբ:

**Երրորդ փուլ:** Փորձարկողը ընթերցում է իմաստով իրար հետ կապված բառեր: Հետազոտվողի խնդիրն է դրանք վերարտադրել պատահական հերթականությամբ:

Փուլերի միջև անհրաժեշտ է պահպանել առնվազն 5 րոպե ժամանակահատված:

**Առաջին փուլի հրահանգը.**

«Ձեզ կներկայացվեն 15 անիմաստ վանկեր: Ձեր խնդիրն է դրանք մտապահել և վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Երկրորդ փուլի հրահանգը.**

«Ձեզ կներկայացվեն իրար հետ իմաստային կապ չունեցող 15 բառ: Ձեր խնդիրն է դրանք մտապահել և վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Երրորդ փուլի հրահանգը.**

«Ձեզ կներկայացվեն իմաստով իրար հետ կապված 15 բառ: Ձեր խնդիրն է դրանք մտապահել և վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

1. Որոշել յուրաքանչյուր փուլում հետազոտվողի կողմից ճշգրիտ վերարտադրված բառերի քանակը:
2. Որոշել խմբում ճշգրիտ վերարտադրված բառերի միջին ցուցանիշը:
3. Ստացված տվյալներն անցկացնել աղյուսակ: Տե՛ս աղյուսակ 6.



*Աղյուսակ 6 - Արդյունքների արձանագրման աղյուսակ*

Առաջադրանքի նյութերը	Յետազոտվողի կողմից ճշգրիտ վերարտադրված բառերի քանակը	Խմբային միջին ցուցանիշը
Անհմաստ վանկեր		
Իրար հետ իմաստային կապ չունեցող բառեր		
Իմաստով իրար հետ կապված բառեր		

4. Աղյուսակում ներկայացված տվյալների հիման վրա եզրահանգումներ կատարել նյութի իմաստավորվածությունից մտապահման կախվածության մասին:
5. Անհատական տվյալները համեմատել խմբայինի հետ:

**Աղբյուր.** Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии. - СПб.: Питер, 2002.

**1.7 ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՆՅՈՒԹԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՎՐԱ ԱԶՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՍՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** մեն իկ հետքերի պահպանման հիման վրա կողմնակի գործունեության ազդեցության ուսումնասիրում:

**Առաջադրանքի նյութերը.** իմաստով իրար հետ չկապված 15 բառ, 14 երկնիշ թիվ՝ հետերոգեն շեղման համար, իմաստով իրար հետ չկապված 10 բառ՝ հոմոգեն շեղման համար: Տե՛ս հավելված 7:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձարկողը հետազոտվողներին բաժանում է երեք խմբի:

Փորձը չորս փուլից է կազմված: Յետազոտվողների առաջին խումբը մասնակցում է առաջին և չորրորդ փուլերին:

**Առաջին փուլ:** Փորձարկողը կարդում է և առաջարկում բոլոր հետազոտվողներին մտապահել իմաստով իրար հետ չկապված 15 բառ: Ապա հետազոտվողները պետք է գրավոր վերարտադրեն բառերը ցանկացած հերթականությամբ:

**Երկրորդ փուլ:** Յետազոտվողների երկրորդ խմբին փորձարկողը առաջարկում է բազմապատկել երկնիշ թվերը:

**Երրորդ փուլ:** Յետազոտվողների երրորդ խմբին առաջարկվում է մտապահել և վերարտադրել իմաստով իրար հետ չկապված 10 բառերը:

**Չորրորդ փուլ:** Փորձարկողը առաջարկում է բոլոր խմբերին վերարտադրել առաջին փուլի բառերը:

**Առաջին փուլի իրահանգը (բոլոր հետազոտվողներին).**

«Ձեզ կներկայացվեն իմաստով իրար հետ չկապված 15 բառ: Ձեր խնդիրն է մտապահել ինչքան հնարավոր է շատ բառեր և դրանք գրավոր վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Երկրորդ փուլի իրահանգը (հետազոտվողների երկրորդ խմբին).**

«Ձեզ կներկայացվեն մի քանի զույգ երկնիշ թվեր: Ձեր խնդիրն է դրանք բազմապատկել մտքում և գրել ստացված արդյունքը»:

**Երրորդ փուլի իրահանգը (հետազոտվողների երրորդ խմբին).**

«Ձեզ կներկայացվեն իմաստով իրար հետ չկապված 10 բառ: Ձեր խնդիրն է մտապահել ինչքան հնարավոր է շատ բառեր և դրանք գրավոր վերարտադրել ցանկացած հերթականությամբ»:

**Չորրորդ փուլի իրահանգը (բոլոր հետազոտվողներին).**

«Դուք պետք է գրավոր վերարտադրեք առաջին փուլի 15 բառը»:

**Արդյունքների մշակում և վերլուծություն**

1. Հաշվել առաջին փուլում հետազոտվողների կողմից վերարտադրված բառերի խմբային միջին ցուցանիշը:
2. Հաշվել հետազոտվողների առաջին խմբի կողմից հանգստից հետո չորրորդ փուլում առաջին փուլի վերարտադրված բառերի խմբային միջին ցուցանիշը:
3. Հաշվել հետազոտվողների երկրորդ խմբի կողմից թվերի բազմապատկումից հետո (հետերոգեն շեղում) չորրորդ փուլում առաջին փուլի վերարտադրված բառերի խմբային միջին ցուցանիշը:
4. Հաշվել հետազոտվողների երրորդ խմբի կողմից բառերի վերարտադրումից հետո (հոմոգեն շեղում) չորրորդ փուլում առաջին փուլի վերարտադրված բառերի խմբային միջին ցուցանիշը:

5. Ստացված տվյալները ներմուծել համապատասխան աղյուսակ: Տես աղյուսակ 7.

Աղյուսակ 7 - Արդյունքների վերլուծության ամփոփ աղյուսակ

Առաջին փուլի 15 բառերի վերարտադրման պայմանները	Վերարտադրված բառերի խմբային փոփոխությունները
Դրանց ներկայացումից անմիջապես հետո	
Հանգստից հետո	
7 զույգ թվերի բազմապատկումից հետո (հոտերոգեն շեղում)	
10 իրար հետ իմաստով չկապված բառերի վերարտադրումից հետո (հոմոգեն շեղում)	

6. Հաշվել ռետրոակտիվ արգելակման ցուցանիշը հետևյալ բանաձևով  $K = ((A-B)/A) \times 100\%$ , որտեղ A-ն անմիջապես վերարտադրված բառերի քանակն է, B-ն որոշակի գործունեության միջոցով վերարտադրված բառերի քանակը:

7. Ստացված տվյալները ներմուծել աղյուսակ 8.

Աղյուսակ 8 - Ռետրոակտիվ արգելակման ցուցանիշների ամփոփ աղյուսակ

Հաջորդող գործունեություն	Ռետրոակտիվ արգելակման ցուցանիշը
Հանգիստ	
Թվերի բազմապատկում	
Բառերի մտապահում	

8. Ստացված արդյունքների հիման վրա եզրահանգում կատարել նյութի վերարտադրման վրա շեղման տարբեր տեսակների (նաև հանգստի) ազդեցության առանձնահատկությունների մասին:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. СПб.: Питер, 2000. - 120 с.

## 1.8 ԱՆՁԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԻՑ ՄՏԱՊԱՀՄԱՆ ԿԱՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՌԵՍՈՒՍԱՄԻՐՈՒՄ

**Նպատակը.** ուսումնասիրել բառերի մտապահման կախվածությունը անձի դիրքորոշումներից:

**Առաջադրանքի նյութերը.** իրար հետ իմաստային կապ չունեցող 20 բառերի երկու հավաքակազմ: Տես հավելված 8:

### Աշխատանքի իրականացման ընթացքը

Փորձը կազմված է երկու փուլից:

**Առաջին փուլ:** Փորձարկողը առաջարկում է մտապահել և վերարտադրել առաջին հավաքակազմի բառերը:

**Երկրորդ փուլ:** Փորձարկողը ներկայացնում է երկրորդ հավաքակազմի բառերը: Հետագոտվողի խնդիրն է մտապահել և պահպանել «ո» տառը պարունակող բոլոր բառերը: Ապա հետագոտվողը պետք է վերարտադրի երկրորդ հավաքակազմի բոլոր բառերը:

### Առաջին փուլի հրահանգ.

«Ձեզ կներկայացվի իրար հետ իմաստային կապ չունեցող 20 բառ: Ձեր խնդիրն է մտապահել և վերարտադրել դրանք ցանկացած հերթականությամբ»:

### Երկրորդ փուլի հրահանգ.

«Ձեզ կներկայացվի իրար հետ իմաստային կապ չունեցող 20 բառ: Ձեր խնդիրն է մտապահել և վերարտադրել «ո» տառը պարունակող բոլոր բառերը ցանկացած հերթականությամբ»: Բառերը ներկայացնելուց հետո փորձարկողը տալիս է հետևյալ հրահանգը. «Դուք պետք է վերարտադրեք երկրորդ հավաքակազմի բոլոր բառերը»:

### Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.

- Հաշվել առաջին և երկրորդ փուլի ճշգրիտ վերարտադրված բառերի քանակը:
- Հաշվել առաջին և երկրորդ փուլերում «ո» տառը պարունակող բառերի քանակը: Վերլուծել, թե որ բառերն է հետագոտվողը մախ և առաջ վերարտադրում (հատկապես երկրորդ փուլում):

3. Կատարել եզրակացություն հետազոտվողի կողմից մտապահման և հաջորդող վերարտադրման վրա դիրքորոշման ազդեցության մասին:

**Աղբյուր.** Лурья А. Р. Внимание и память. М., 1975.

**1.9 ՄՏԱՊԱՐՄԱՆ ԿՐԱ ՆՅՈՒԹԻ ՀՈՒՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՇԱՆԱԿԱԼԻՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** հուզական երանգավորում ունեցող նյութի մտապահման առանձնահատկությունները:

**Առաջադրանքի նյութերը.** իմաստով իրար հետ չկապված 25 բառ: Տե՛ս հավելված 9:

**Աշխատանքի իրականացման ընթացքը:**

Փորձն անց է կացվում հետազոտվողների խմբի հետ:

Փորձարկողը կարդում է հետազոտվողներին իմաստով իրար հետ չկապված 25 բառը: Դրանից հետո հետազոտվողները դրանք պետք է վերարտադրեն ցանկացած հաջորդականությամբ: Հետո փորձարկողը խմբին առաջարկում է որոշել այն բառերը, որոնք հուզական կշիռ ունեն և նշանակալի են հետազոտվողի համար և հաշվել դրանց հանդիպման հաճախությունը խմբի վերարտադրման ցուցակներում:

**Հրահանգը.**

«Ձեզ կընթերցվեն իմաստով իրար հետ չկապված 25 բառ: Ձեր խնդիրն է մտապահել հնարավորինս շատ բառեր և դրանք գրավոր վերարտադրել ցանկացած հաջորդականությամբ»:

**Արդյունքների մշակում և վերլուծություն**

1. Հետազոտվողների խմբում հաշվել յուրաքանչյուր բառի հանդիպման հաճախությունը:
2. Որոշել այն բառերը, որոնք հուզական կշիռ ունեն և նշանակալի են հետազոտվողների խմբի համար:
3. Ստացված տվյալները գրառել աղյուսակ 9-ում:

*Աղյուսակ 9 - Տվյալների ամփոփ աղյուսակ*

№	Բառերի ցանկը	Հանդիպման հաճախությունը
1.	կամուրջ	
...		
25.	դեկավար	

**Աղբյուր.** Сосновский Б. А. Лабораторный практикум по общей психологии. - М, 1979. - 51 с.

**1.10 ՊԱՅՊԱՆՄԱՆ ԺԱՍՆԱԿ ՆՅՈՒԹԻ ՈՐԱԿԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** բացահայտել այն փոփոխությունները, որոնց հիշողության մեջ նյութը ենթարկվում է պահպանման գործընթացի ժամանակ:

**Առաջադրանքի նյութերը.** նկար:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Օգտագործվում է Ֆ. Բարտլետտի կողմից առաջարկված հաջորդական վերարտադրությունների մեթոդը: Փորձն անց է կացվում 10 հետազոտվողներից բաղկացած խմբում: Բոլորը՝ բացի մեկից, դուրս են գալիս լսարանից: Գրատախտակին կախվում է նկար, որը կարող է ուշադիր զննել լսարանում մնացած հետազոտվողը: Շարունակելով դիտարկել նկարը՝ նա պատմում է բոլոր մանրամասնություններով նկարի բովանդակությունը ներս մտած երկրորդ փորձարկվողին, որը, սակայն, նկարը չի տեսնում: Երրորդ ներս եկածին երկրորդ հետազոտվողը վերապատմում է նկարի բովանդակությունը՝ այդպես էլ այն չտեսնելով: Այսպիսով հաջորդական բնութագրումները հաղորդվում են մեկից մյուսին մինչև վերջ: Առաջինը բնութագրումը կատարվում է նկարի անմիջական դիտարկմամբ, մնացած բոլորը՝ ոչ:

**Հրահանգ առաջին հետազոտվողին.**

«Ձեր առջև նկար է, որի բովանդակությունը Դուք պետք է պատմեք լսարան հրավիրվող երկրորդ հետազոտվողին»:

**Յրահանգ երկրորդ և մյուս հետազոտվողներին.**

«Ձեզ կպատմեն մի նկարի բովանդակություն, որը Դուք չեք տեսնի: Ձեր խնդիրն է մտապահել և պատմել նրա բովանդակությունը մյուս հետազոտվողին»:

**Արդյունքների մշակումը և վերլուծությունը**

Վերլուծվում է մոռացման գործընթացը, բնութագրման վերականգնումը հետևյալ սխեմայով.

- կենտրոնական, գերակշռող ֆիգուրների վերարտադրումը,
- ոչ էական դետալների քանակության վերարտադրումը,
- առարկաների չափերի և գույների վերարտադրումը,
- միմյանց հանդեպ առարկաների դիրքի վերարտադրումը,
- պատահական դետալների կորուստը,
- հիմնական դետալների կորուստը:

**Աղբյուր.** Зинченко Т. П. Память в экспериментальной и когнитивной психологии. – СПб.: Питер, 2002.

**1.11 ԱՎՏԻՎՎԵՐԱՐՏԱԴՐՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՍԵՍԱՏԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱԽՐՈՒՄ**

**Նպատակը.** ուսումնասիրել նույն նյութի վերարտադրման և ճանաչման առանձնահատկությունները և համեմատել այդ գործընթացների արդյունավետությունը:

**Առաջին փուլի առաջադրանքի նյութերը.** բառերի չորս շարք, որոնք կազմված են հետևյալ կերպ.

Առաջին շարք - իմաստով իրար հետ չկապված 10 բառ:

Երկրորդ շարք - իմաստով իրար հետ չկապված 20 բառ, որից 10-ը առաջին շարքից:

Երրորդ շարք - իմաստով իրար հետ չկապված 15 բառ:

Չորրորդ շարք - իմաստով իրար հետ չկապված 30 բառ, որից 15-ը երրորդ շարքից:

**Երկրորդ փուլի առաջադրանքի նյութերը.**

A մատրից, որը պարունակում է 9 երկրաչափական պատկեր, B մատրից, որը պարունակում է 9 երկրաչափական պատկեր, C մատրից, որը պարունակում է 20 երկրաչափական պատկեր, որից 9-ը «հին» (B մատրիցից) և 11-ը «նոր»: Տես հավելված 10:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտությունը կազմված է երկու փուլից:

**Առաջին փուլ:** Հետազոտողը կարդում է իմաստով իրար հետ չկապված 10 բառ և առաջարկում դրանք վերարտադրել ցանկացած հերթականությամբ: Ապա հետազոտողը կարդում է իմաստով իրար հետ չկապված 20 բառերի երկրորդ շարքը, որում պատահական հերթականությամբ ընդգրկված են առաջին շարքի 10 բառերը: Հետազոտողը պետք է նշան տա այն բառերի հայտնաբերման պարագայում, որոնք նախօրոք ներկայացվել են: Դրանից հետո հետազոտողը ակտիվ վերարտադրման համար առաջարկում է 15 բառերի շարքը, իսկ ճանաչման համար 30 բառերի շարքը, որում պատահական կերպով ընդգրկված են նախորդ շարքի 15 բառերը:

**Երկրորդ փուլ:** Փորձարկողը հետազոտվողին ներկայացնում է A մատրիցը 10 վայրկյան ժամանակով: Հետազոտվողը պետք է նկարի ֆիգուրները ցուցադրումից 5 վայրկյան անց: Ապա հետազոտվողին ներկայացվում է B մատրիցը 10 վայրկյանով: 5 վայրկյան անց ցուցադրվում է C մատրիցը, որի վրա նա պետք է ճանաչի «հին» ստիմուլները (B մատրիցից):

Փուլերի միջև անպայման պետք է դադար լինի:

**Յրահանգ 1 (առաջին փուլի համար).**

«Ձեզ կներկայացվի իմաստով իրար հետ չկապված 10 բառերի շարք, որից հետո դուք պետք է վերարտադրեք բառերը ցանկացած հերթականությամբ»:

**Յրահանգ 2 (առաջին փուլի համար).**

«Ձեզ կներկայացվի իմաստով իրար հետ չկապված 20 բառերի շարք: Եթե Դուք կնկատեք բառեր, որոնց նախկին փորձի ժամանակ հանդիպել եք, նշան արեք փորձարկողին»:

Երրորդ և չորրորդ շարքերի համար տրվում են համապատասխան իրահանգներ:

### **Հրահանգ 3 (Երկրորդ փուլի համար).**

«Ձեզ 10 վայրկյանով կցուցադրվի երկրաչափական պատկերներով մատրից: Ձեր խնդիրն է մտապահել դրանք և նկարել մաքուր թղթի վրա»:

### **Հրահանգ 4 (Երկրորդ փուլի համար).**

«Ձեզ 10 վայրկյանով կցուցադրվի երկրաչափական պատկերներով մատրից: Ձեր խնդիրն է դրանք մտապահել: Որոշ ժամանակ անց կցուցադրվի մեկ այլ մատրից: Եթե Դուք ճանաչում եք որոշ ֆիգուրներ, որոնք նախորդի վերկայացվել են, նշան արեք փորձարկողին»:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

1. Որոշել ճշգրիտ վերարտադրված բառերի և ֆիգուրների քանակը:
2. Որոշել ճշգրիտ ճանաչված բառերի և ֆիգուրների քանակը:
3. Կառուցել ճշգրիտ վերարտադրված և ճանաչված բառերի և ֆիգուրների քանակի հիստոգրամ:
4. Փորձի յոթաբանյութ փուլում որոշել սխալների քանակը:
5. Համեմատել վերարտադրման և ճանաչման արդյունավետությունները և բացահայտել ի հայտ եկող միտումը:
6. Համեմատել բառերի և ֆիգուրների վերարտադրման և ճանաչման արդյունքները:

**Աղբյուր.** Практикум по психологии / Под ред. А. Н. Леонтьева, Ю. Б. Гипенрейтер. – М: МГУ, 1972. 125с.

## **1.12 ՄՏԱՊԱՀՄԱՆ ԳԵՐԱԿԱ ՏԵՍԱԿԻՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** բացահայտել հիշողության գերակայող ժամալը խոսքային նյութի տարբեր տեսակի ներկայացման ժամանակ:

**Առաջադրանքի նյութերը և սարքավորումները.** չորս շարք բառեր, որոնք արտահայտում են կոնկրետ հասկացություններ, շարքերից առաջինը գրված է առանձին քարտերի վրա, չորս թուղթ, գրիչ և վայրկենաչափ: Տես հավելված 11:

### **Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձը բաղկացած է չորս բաժնից: Առաջինում մտապահման են

թակա բառերը ներկայացվում են բանավոր: Երկրորդում՝ տեսողական, ընդ որում յուրաքանչյուր բառը պետք է հստակ գրված լինի առանձին քարտի վրա: Երրորդում օգտագործում են ներկայացման և սաշարժողական ձևը, չորրորդում՝ կոմբինատոր, որն ընդգրկում է նյութի և տեսողական և շարժողական ընկալումները:

Հիշողության գերլարումից խուսափելու համար յուրաքանչյուր փորձում նպատակահարմար է կազմել տասը բառից կազմված շարքեր:

### **Փորձ № 1**

Փորձարկողը հստակ՝ 3 վայրկյան ինտերվալով հետագոտվողին ընթերցում է մտապահման բառերը՝ հետևյալ հրահանգով.

### **Առաջին փորձի հրահանգը.**

«Ես Ձեզ կընթերցեմ բառեր: Ուշադիր լսեք դրանք և մտապահեք: Դա դարից հետո, երբ ես կհրահանգեմ «գրեք»՝ թղթի վրա գրեք այն, ինչ մտապահել եք: Եթե ամեն ինչ հասկանալի է, պատրաստվեք լսել և մտապահել»:

Բառերի ընթերցումից 10 վայրկյան անց տրվում է գրելու հրահանգը:

### **Փորձ № 2**

Երկրորդ փորձն անց է կացվում առաջինից 5 րոպե հետո: Այս փորձում փորձարկողը հերթականությամբ հետագոտվողին է ներկայացնում առանձին քարտերի վրա գրված բառերը: Բառերի ներկայացման դադարները պետք է լինեն ինչպես առաջին փորձում՝ 3 վայրկյան:

### **Երկրորդ փորձի հրահանգը.**

«Ես Ձեզ կցուցադրեմ քարտեր, որոնցից յուրաքանչյուրի վրա գրված է մեկական բառ: Ուշադիր կարդացեք դրանք և մտապահեք: «Գրեք» հրահանգը լսելուց հետո թղթի վրա գրեք այն, ինչ մտապահել եք: Եթե ամեն ինչ հասկանալի է, պատրաստվեք կարդալ և մտապահել»:

Բառերը ցուցադրելուց 10 վայրկյան անց տրվում է գրելու հրահանգը:

### **Փորձ № 3**

Երրորդ փորձը նույնպես անցկացվում է առաջինից 5 րոպե հետո: Այս փորձում հետագոտվողին առաջարկվում է լսել բառերը և գրիչով

դրանք գրել օդում, որպեսզի ապահովվի ընկալման շարժողական ընկալումը: Բառերի ներկայացման դադարները պետք է լինեն ինչպես մյուս փորձերում՝ 3 վայրկյան:

**Երրորդ փորձի հրահանգը.**

«Ես Ձեզ կկարդամ բառեր: Լսեք, օդում գրիչով գրեք դրանք և մտապահեք: «Գրեք» հրահանգը լսելուց հետո թղթի վրա գրեք այն, ինչ մտապահել եք: Եթե ամեն ինչ հասկանալի է, պատրաստվեք լսել և մտապահել»:

Բառերի ընթերցումից 10 վայրկյան անց տրվում է գրելու հրահանգը:

**Փորձ № 4**

Երրորդ փորձից 10 րոպե հետո անցկացվում է չորրորդը: Փորձարկողի կողմից բառերի ընթերցման տեմպը, դադարները մնում են նույնը, ինչ նախորդ փորձերում: Որպեսզի ապահովվի ընկալման կոնֆիմատոր տեսակը, հետազոտվողին ոչ միայն ընթերցում են բառերը, այլև առանձին թղթի վրա լսելու ընթացքում մաև գրեն դրանք: Տասներորդ բառի գրելուց հետո շրջում են թուղթը և առաջարկում վերարտադրել բառերը:

**Չորրորդ փորձի հրահանգը.**

«Ես Ձեզ կկարդամ բառեր: Դուք դրանք գրում եք թղթի վրա և մտապահում: Վերջին բառը գրելուց հետո, թուղթը շրջում եք և իմ «գրեք» հրահանգով սկսում գրել այն, ինչը մտապահել եք: Պատրաստվեք լսել, գրել և մտապահել»:

Բառերի ընթերցումից 10 վայրկյան անց տրվում է գրելու հրահանգը:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Հիշողության ծավալի ցուցանիշը այս փորձերում ճշգրիտ վերարտադրված բառերի քանակն է: Տվյալները ներմուծվում են հետևյալ աղյուսակ.

*Աղյուսակ 10 - Տվյալների ամփոփ աղյուսակ*

Հիշողության տեսակը				
Ճշգրիտ վերարտադրված բառերի քանակը	Լսողական	Տեսողական	Լսաշարժողական	Կոնֆիմատոր

Հիշողության գերակշռող տիպը որոշում են խոսքային ինֆորմացիայի տարբեր տեսակի ներկայացման արդյունքում ճշգրիտ վերարտադրված բառերի քանակի համեմատությամբ:

Անմիջական մտապահման նորմալ ծավալ է համարվում 5-9 բառերի վերարտադրումը: Եթե ինչ-որ դեպքում հետազոտվողը մտապահել է 10 բառ, դա նշանակում է, որ նա օգտագործել է մտապահման ինչ-որ համակարգ, որը կարելի է ճշտել ինքնահաշվետվության և դիտման տվյալներով:

Հիշողության գերակայող տեսակը կապված է անձի պատկերացումների համապատասխան ներկայացուցչական համակարգի հետ: Դրա բացահայտումը կօգնի համապատասխան առաջարկություններ կատարել հետազոտվողի կողմից ինֆորմացիայի մտապահման արդյունավետության վերաբերյալ:

**Աղբյուր.** Психологические исследования. Практикум по общей психологии и для студентов педагогических вузов // Т. И. Пашукова, А. И. Дюпина, Г. В. Дьяконов (сост.) Учеб. пособие. М., 1996.

**1. 13 ՊԱՏՄԱԿԱԾՔԻ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒՄ**

**Նպատակը.** պարզել իմաստային հիշողության զարգացման մակարդակը, նրա ծավալը և յուրահատկությունները, տեքստերի մտապահման ընդունակությունները:

**Առաջադրանքի նյութերը.** 16 իմաստային միավորներից բաղկացած երկու տեքստ: Տե՛ս հավելված 12:

**Աշխատանքի իրականացման ընթացքը:**  
Փորձարկողը բանավոր կարդում է տեքստը, որը պարունակում է 12-13 իմաստային միավոր և 3-4 թիվ: Ապա հետազոտվողին առաջարկում է գրել ընթերցվածի բովանդակությունը: Ահավել ճշգրիտ տվյալների ստացման համար, փորձը կարելի է կրկնել մեկ այլ պատմվածքի օգնությամբ:

**Հրահանգ.**  
«Ձեզ կընթերցվի կարճ պատմվածք, որում կան մի շարք իմաստային միավորներ, որոնք կապված են որոշակի տրամաբանական կապով:

Ուշադիր լսեք պատմվածքը և ապա երեք թույլի ընթացքում գրեք նրա հիմնական բովանդակությունը: Նախադասությունները կարելի է կրճատել՝ պահպանելով դրանց իմաստը: Աշխատանքի ընթացքում նորից հարցեր տալ չի կարելի»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

Գնահատումը պայմանական միավորներով իրականացվում է աղյուսակ 11-ի համաձայն՝ երկու տեքստերի վերարտադրման արդյունքներով: Իմաստային միավորների շարադրման հերթականությունը հաշվի չի առնվում:

Գնահատականը միավորներով	Վերարտադրված իմաստային միավորների քանակը (16*2=32)
9	32
8	30-31
7	28-30
6	24-27
5	19-23
4	15-18
3	11-14
2	7-11
1	6

²ԾմԱձճճ. Воспроизведение рассказа (взрослый вариант) / Альманах психологических тестов. М., 1995, с. 95-96.

**1.14 10 ԲԱՌԻ ՈՒՍՈՒՑ ԱՆՈՒՄ (Ա. Լուրիայի մեթոդիկան)**

**Նպատակը.** Հիշողության վիճակի, ակտիվության, սպառման գնահատում: Մեթոդիկան կարող է օգտագործվել ինչպես երեխաների (սկսած հինգ տարեկանից), այնպես էլ մեծահասակների հետ:

**Առաջադրանքի նյութերը.** տասը բառ: Տե՛ս հավելված 13:

**Հրահանգը և աշխատանքի իրականացման ընթացքը.**

«Հիմա ես կընթերցեմ մի քանի բառ: Ուշադիր լսեք դրանք: Երբ ես

կվերջացնեմ կարդալ, անմիջապես կրկնեք այն բառերը, որոնք մտապահել եք: Կրկնել կարելի է ցանկացած հերթականությամբ»:

«Այժմ ես նորից կկարդամ նույն բառերը և Դուք պետք է դրանք նորից կրկնեք և նրանք, որոնք արդեն իսկ ասել եք, և նրանք, որոնք առաջին անգամ բաց եք թողել: Սակայն բառերի հերթականությունը կարևոր չէ»:

Ապա փորձը շարունակվում է առանց հրահանգի: Հաջորդ ընթերցումներից առաջ փորձարկողը միայն ասում է՝ «Եվս մեկ անգամ»: 5-6 անգամյա կրկնությունից հետո փորձարկողը տալիս է հետևյալ հրահանգը. «Մեկ ժամ հետո Դուք նույն բառերը պետք արտասանեք և սմեկ անգամ»:

Յուրաքանչյուր փուլում լրացվում է արձանագրություն: Յուրաքանչյուր վերարտադրված բառի առջև, որը համապատասխանում է փորձի համարին, դրվում է խաչ: Երբ հետազոտվողը անվանում է «ավելորդ» բառ, այն նշվում է համապատասխան աղյուսակում: Մեկ ժամ անց փորձարկողի խնդրանքով առանց հավելյալ ընթերցման, արտասանում է մտապահված բառերը, որոնք նորից ֆիքսվում են արձանագրության մեջ:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

Լրացված արձանագրության համաձայն կազմվում է մտապահման կորը: Կորի բնույթից կարելի է եզրակացություններ կատարել մտապահման առանձնահատկությունների վերաբերյալ: «Ավելորդ» բառերի մեծ քանակը վկայում է գիտակցության արգելակման մասին: Մեծահասակների հետազոտման դեպքում երրորդ կրկնությունից հետո արդեն պետք է նկատվի 9 կամ 10 բառերի վերարտադրում: Գերհոգնածության մասին է վկայում այն, որ երեխան կամ մեծահասակը միանգամից վերարտադրում է 8-9 բառ և յուրաքանչյուր կրկնությունից հետո վերարտադրվող բառերի քանակը շարունակաբար նվազում է: Զիզզազանման կորը վկայում է ուշադրության անկայունության մասին: Հարթականման կորը վկայում է հետազոտվողի հուզական անտարբերության, նրա մոտ հետաքրքրվածության բացակայության մասին: Մեկ ժամ անց վերարտադրված բառերի քանակը ինֆորմացիա է տալիս երկարատև հիշողության մասին:

²ԾմԱձճճ. Заучивание 10 слов (А. Р. Лурия) / Альманах психологических тестов. М., 1995, с. 92-94.

**ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**1.15 ԿԵՆՂԱՆԻՆԵՐԸ ԱՆԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

*Առաջադրանք 1*

Ուշադիր նայեք նկարին: Փորձեք մտապահել կենդանիների տեղադրությունը: Մտապահման համար տրամադրվում է 3 թուփ:

*Առաջադրանք 2*

Անհրաժեշտ է նկարել, այն ինչ ստացվել է մտապահել:

*Առաջադրանք 3*

Անհրաժեշտ է քննարկել մտապահման գործընթացը:

**Առաջադրանքի նյութերը.** հավելված 14:

**Նշում:**

Գոյություն ունեն կենդանիների տեղադրության մտապահման մի քանի եղանակներ:

1. Մեծ քառակուսին բաժանված է ինը փոքր քառակուսիների: Մտապահման ժամանակ, կարելի է հենվել կենդանու դիրքի վրա փոքր քառակուսու կողմերին:
2. Կենդանիները կրկնվում են: Դրա համար սկզբում կարելի է մտապահել ոգնիների տեղադրությունը, ապա՝ աղվեսների և այլն:
3. Կենդանիները հերթագայում են: Դրա համար կարելի է գտնել դրանց տեղադրման օրինաչափությունները:
4. Կարելի է համատեղել մտապահման միջոցները:

**1.16 ՀԱՇԻՎ ԱԿԵԼԱՑՄԱՍԲ**

Այս վարժությունը ստեղծվել է հայտնի հոգեբան, ակադեմիկոս Վ. Դ. Շադրիկովի կողմից: Խնդիրը երկու թվերի գումարումն է և ավելացումը երրորդին: Ատացված գումարը անհարժեշտ է մտապահել և դրան գումարել մյուս երկու միանիշ թվերի գումարին և այլն:

Օրինակ մասնակցին տրվում է սկզբնական թիվը 667, ապա տրվում են երկու միանիշ թվեր՝ 2, 7, որոնք մասնակիցը պետք է գումարի և գումարը մտապահի և այդպես շարունակ:

Եթե առաջադրանքը պարզ է, սկսվում է վարժությունը.

*Աղյուսակ 12 - Վարժության պայմանական օրինակ*

Սկզբնական թիվը	Թեստային նյութը											
	3	7	4	6	5	1	2	7	7	1	9	և այլն
237	5	2	1	2	3	2	4	5	6	8	1	
Մասնակցի գործողությունները	237	245	254	259	267	275	278					
	+	+	+	+	+	+	+					
	8	9	5	8	8	3	6					և այլն
	=	=	=	=	=	=	=					
	245	254	259	267	275	278	284					

Մասնակիցը այդ թիվը պետք է ասի և հիշի: Այս առաջադրանքը կարելի է բարդացնել կամ հեշտացնել՝ կախված մասնակիցների տարիքից:

Այս վարժությունը կարելի է օգտագործել և ինչպես անհատական զարգացնող և ինչպես կոլեկտիվ մրցութային խաղ:

Վարժության ավարտից հետո մասնակիցներից կարելի է հարցնել, թե արդյոք հիշում են այն թվերը, որոնք մտապահել են:

**1.17 ԸՆԹԵՐՑՄԱՆ ԹԵՍՏ**

**Նպատակը.** այս թեստն ուղղված է կենտրոնացվածության զարգացմանը և բացահայտում է հիշողության ուղղվածության առանձնահատկությունները:

**Առաջադրանքի նյութերը.** տեքստ, որը ներկայացվում է ստորև:

Մարտի վեցին, Շատո-Թիերիի մոտ հետաքրքիր դեպք էր պատահել: Բեռնված գնացքը, երեկոյան մոտենալով կայարանին, ռելսերից դուրս էր եկել: Շարասյունը կազմված էր 34 վագոններից, որոնցից 16-ում դիզելային վառելիք էր, իսկ 18-ում՝ գինի: Դիզելային վառելիքի 2 ցիստերն 40 քմ տարողությամբ և գինու 4 ցիստերն վնասվել էին, իսկ գինու և դիզելային վառելիքի խառնուրդը հոսել էր ազգային ավտոճա-



նապարհի վրա, որը պատճառ էր հանդիսացել յուղ տեղափոխող 10 տոննայանոց բեռնատարի վթարի: Ի երջանկություն, ոչ ոք լրջորեն չի վնասվել և միայն բեռնատարի վարորդը ստացել է թեթև վնասվածքներ:

**Չրահանգ.** «Միայն մեկ անգամ ուշադիր կարդացեք տեքստը ապա պատասխանեք Ձեզ առաջարկվող հարցերին»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

Չետազոտվողը տեքստը կարդալուց հետո պետք է պատասխանի հավելված 15-ում ներկայացված հարցերին:

Արդյունքում վերլուծվում է, թե ի՞նչ բնույթի ինֆորմացիա էր հատկապես հիշվել, ինչպիսի հնարքներ է կիրառել հետազոտվողը մյուսի մտապահման համար:

**Աղբյուր.** Пугач Ю. К. 126 упражнений по развитию памяти. Эйдос, 1993, 192 с.

**1.18 ԴԻԴԱԿՏԻ Կ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ «ԸՍՏ ՉԻՇՈՂՈՒԹՅԱՆ»**

Մասնակիցներին առաջարկվում է գրավոր հիշողությանը վերականգնել և մանրամասն նկարագրել սպորտային դահլիճը, ուսումնական հաստատության ճաշարանը կամ էլ ինչ-որ կահավորված սենյակ: Ապա մասնակիցները համեմատում են իրենց գրառումները միմյանց և նաև իրականության հետ: Աշխատանքի ընթացքում բացահայտվում են ուշադրության, դիտողականության և տեսողական հիշողության կապերը: Չատուկ ուշադրության է արժանի և առանձին վերլուծության են ենթարկվում մասնակիցների անհատական առանձնահատկությունները:

**Աղբյուր.** И. Матюгин, Е. Чакаберия. Зрительная память. М.: 1992.

**1.19 ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ «ՖԻԳՈՒՐՆԵՐ ԼՈՒՑԿՈՒ ՉՍԻԿՆԵՐԻՑ»**

Սեղանի վրա լուցկու 9-10 հատիկներից կազմում էք պատահական ֆիգուրներ, որոնք ծածկվում են թղթով: Ապա հետազոտվողի առաջ 1-2 վայրկյանով հեռացնում էք թուղթը և ցուցադրում ֆիգուրները: Երբ ֆիգուրները նորից ծածկվում են, մասնակիցը մտովի վերհիշում է,

թե քանի լուցկու հատիկ կար սեղանին և ապա փորձարկողից ստանալով լուցկու հատիկների համապատասխան քանակություն, փորձում է ստանալ ցուցադրված ֆիգուրը: Երբ մասնակիցը վերջացնում է աշխատանքը, համեմատվում են երկու ֆիգուրները և դուրս են բերվում նմանություններն ու տարբերությունները: Ժամանակի ընթացքում կարելի է բարդացնել վարժությունը՝ օգտագործելով տարբեր գույների փայտիկներ: Լավագույն արդյունք համարվում է, երբ մասնակիցը կարողանում է մտապահել և ճիշտ դասավորել ոչ պակաս, քան 10 լուցկու հատիկ:

**Աղբյուր.** И. Матюгин, Е. Чакаберия. Зрительная память. М.: 1992.

**1.20 ՄՏԱՊԱՐՈՒՄ-ՄԱՔՐՈՒՄ**

Գտեք Ձեզ համար հաճելի և կամ չեզոք առարկա: Դիտարկեք այն 3-5 վայրկյանի ընթացքում, փորձեք «լուսանկարել» (ներշնչան ժամանակ): Փակեք աչքերը և 3-5 վայրկյանի ընթացքում շունչը պահած, փորձեք այն արթնացնել հիշողության մեջ: Եվ ապա արտաշնչեք՝ մտքով տարալուծելով պատկերը: Յուրաքանչյուր 3-5 անգամը մեկ փոխեք մտապահման, մաքրման ձևը, արագությունը, ռիթմը: Պարբերաբար փնտրեք և գտեք նոր ձևեր:

Կրկնեք վարժությունը 30-50 անգամ՝ սկսելով 5-7 անգամից, հասցնելով մինչև 50-ը: Ձեր խնդիրն է սովորել ըստ ցանկության հիշողության մեջ արթնացնել պատկեր և այն ջնջել: Վարժությունը պետք է կատարել ամենաքիչը օրը երկու անգամ՝ 10-15 րոպեների ընթացքում:

Ուշադրության օբյեկտները պետք է անընդհատ փոխել՝ օրինակ մարմնի մասեր, սենյակի պարագաներ և այլն:

**Աղբյուր.** И. Матюгин, Е. Чакаберия. Зрительная память. М.: 1992.

## 2. ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ԽՈՍՔԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒՄԸ

*Մտածողությունը անհատի ճանաչողական գործունեության գործընթաց է, որը բնութագրվում է իրականության ընդհանրացված և միջնորդավորված արտացոլմամբ: Հոգեբանությունն ուսումնասիրում է մտածողությունը որպես ճանաչողական գործունեություն, այն տարաբաժանելով տեսակների՝ կախված ընդհանրացման մակարդակից, օգտագործվող միջոցների բնույթից, սուբյեկտի համար դրանց նորոշից, սուբյեկտի ակտիվությունից (հատված հոգեբանական բառարանից)<sup>2</sup>:*

### 1. Ընդհանուր պատկերացում մտածողության մասին

Կոգնիտիվ գործընթացների հիերարխիայում հիշողության գործընթացին հաջորդում է հոգեկան բարձրագույն իմացական մյուս գործընթացը, այն է՝ մտածողությունը: Մտածողությունը՝ որպես մարդու տեսակային առանձնահատկությունն ապահովող ֆենոմեն, հոգեկանի կառուցվածքում դասվում է **հոգեկան ճանաչողական գործընթացների**, որոնք ապահովում են մարդու կողմից շրջակա իրականության ազդեցությունների առաջնային արտացոլումը և գիտակցումը:

Հոգեբանական գիտությունում մտածողության ավանդական սահմանումները սովորաբար ֆիքսում են նրա երկու էական կողմերը.

- ընդհանրացվածություն,
- միջնորդավորվածություն:

Այսինքն մտածողությունը իրականության ընդհանրացված և միջնորդավորված արտացոլման գործընթացն է իր էական կապերում և հարաբերություններում:

Մտածողությունը ճանաչողական գործունեության գործընթաց է, որի ժամանակ սուբյեկտը կատարում է տարբեր տեսակի ընդհանրացումներ՝ ներառելով պատկերներ, հասկացություններ:

<sup>2</sup> Краткий психологический словарь / Под общей ред. А. В. Петровского и М. Г. Ярошевского; ред.-составитель Л. А. Карпенко.- 2-е изд., расширенное, и стр. и доп.- Ростов-на-Дону: «ФЕНИКС», 1998.

Մտածողության էությունը աշխարհի ներքին նկարում պատկերների հետ որոշակի կոգնիտիվ օպերացիաների իրագործումն է: Այդ օպերացիաները թույլ են տալիս կառուցել և վերականգնել աշխարհի փոփոխվող մոդելը:

Մտածողության յուրահատկությունը հետևյալն է.

- այն հնարավորություն է տալիս ճանաչել օբյեկտիվ աշխարհի խորքային էությունը, նրա գոյության օրենքները,
- միայն մտածողության միջոցով է հնարավոր կայացրող, փոփոխվող, զարգացող աշխարհի ճանաչումը,
- մտածողությունը թույլ է տալիս կանխատեսել ապագան, գործառել հնարավորի հետ, նախագծել գործնական գործունեությունը,

Մտածողության գործընթացը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով.

- ունի միջնորդավորված բնույթ,
- միշտ ընթանում է եղած գիտելիքների հենքի վրա,
- արտածվում է կենդանի հայեցողությունից, սակայն նրան չի հանգում,
- նրանում տեղի է ունենում կապերի և հարաբերությունների արտացոլում բառային ձևով,
- կապված է մարդու գործնական գործունեության հետ:

### 2. Մտածողության տիպաբանությունը

Հոգեբանությունում ընդունված և տարածված է մտածողության պայմանական դասակարգումը ըստ հետևյալ հիմքերի.

1. ժազոմնաբանական զարգացման,
2. խնդիրների լուծման բնույթի,
3. նորության և յուրահատկության աստիճանի,
4. մտածողության միջոցների,
5. մտածողության գործառնությունների և այլն:

1. Ըստ ժազոմնաբանական զարգացման տարբերում են մտածողության հետևյալ տեսակները.

- ակնառու-գործնական,

- ակնառու պատկերավոր,
- բառատրամաբանական,
- արատրակտ-տրամաբանական:

**Ակնառու-գործնական մտածողությունը** մտածողության տեսակ է, որը հենվում է առարկաների անմիջական ընկալման վրա նրանց հետ գործողությունների գործընթացում: Սա մտածողության ամենատարրական տեսակն է, որն առաջանում է գործնական գործունեությունում և հիմք հանդիսանում մտածողության ավելի բարդ տեսակների ձևավորման համար:

**Ակնառու-պատկերավոր մտածողությունը** մտածողության տեսակ է, որը հենվում է պատկերացումների և պատկերների վրա: Ակնառու-պատկերավոր մտածողության ժամանակ իրավիճակը վերափոխվում է պատկերների մակարդակում:

**Բառատրամաբանական մտածողությունը** մտածողության տեսակ է, որն իրագործվում է հասկացությունների հետ տրամաբանական օպերացիաների միջոցով: Բառատրամաբանական մտածողության միջոցով սուբյեկտը կարող է ճանաչել հետազոտվող իրականության չդիտարկվող փոխկապակցվածությունները և առկա օրինաչափությունները:

**Արատրակտ-տրամաբանական մտածողությունը** հենվում է երևույթի էական կապերի և հատկությունների և ոչ էականների առանձնացման վրա:

Ակնառու-գործնական, ակնառու պատկերավոր, բառատրամաբանական և արատրակտ-տրամաբանական մտածողությունները ֆիլոզոֆներում և օնթոգենեզում մտածողության զարգացման հաջորդական փուլեր են:

**2. Ըստ խնդիրների լուծման բնույթի տարբերում են.**

- տեսական,
- գործնական:

**Տեսական մտածողությունը** հենվում է տեսական դատողությունների և մտահանգումների վրա: **Գործնական մտածողությունը** հենվում է գործնական խնդիրների լուծման դատողությունների և մտահանգումների վրա:

Տեսական մտածողությունը կանոնների և օրենքների ճանաչումն է: Գործնական մտածողության հիմնական խնդիրը իրականության գործնական վերափոխման միջոցների մշակումն է:

**3. Ըստ նորության և յուրահատկության աստիճանի տարբերում են.**

- ռեպրոդուկտիվ (վերարտադրողական),
- պրոդուկտիվ (ստեղծագործական):

**Ռեպրոդուկտիվ մտածողությունը** որոշակի աղբյուրներից ստացված պատկերների վրա հենված մտածողությունն է: **Ստեղծագործական մտածողությունը** հենվում է ստեղծագործական երևակայության վրա:

**4. Ըստ մտածողության միջոցների տարբերում են.**

- վերբալ,
- ակնառու:

**Ակնառու մտածողությունը** հենվում է առարկաների մտապատկերների վրա: **Վերբալ մտածողությունը** գործառում է վերացական նշանային կառույցների հետ:

Հաստատված է, որ ամբողջական մտային աշխատանքի համար մարդկանց մի մասին անհրաժեշտ է տեսնել կամ պատկերացնել առարկաները, մյուսները նախընտրում են գործառել վերացական նշանային կառուցվածքներով:

**5. Ըստ մտածողության գործառույթների տարբերում են.**

- քննադատական,
- ստեղծագործական:

**Քննադատական մտածողությունն** ուղղված է այլ մարդկանց դատողությունների թերությունների բացահայտմանը: Ստեղծագործական մտածողությունը կապված է նոր գիտելիքի բացահայտման, սեփական յուրահատուկ մտքերի ստեղծման հետ:

**3. Մտածողության անհատական հոգեբանական առանձնահատկությունները**

Կոնկրետ մարդու մտածողությանը յուրահատուկ են **անհատական առանձնահատկությունները**: Տարբեր մարդկանց մոտ այդ առանձնահատկությունները նախ և առաջ արտահայտվում են նրանում, որ նրանց մոտ տարբեր կերպ են փոխազդում մտային գործունեության փոխլրացմող ձևերը և տեսակները: Բացի դրանից մտածողության անհատական առանձնահատկությունների թվին են պատկանում ճանաչողական գործունեության այնպիսի որակներ, ինչպիսիք են.

- ինքնուրույնությունը,
- լայնությունը,

- խորութունը,
- ճկունությունը,
- արագությունը,
- ստեղծարարությունը,
- քննադատականությունը,
- նախաձեռնողությունը և այլն:

**Արագություն**ն արտացոլում է մտածողական գործընթացների ընթացքի տևողությունը

**Ինքնուրույնությունը** նոր հարց կամ խնդիր առաջադրելու և տեսնելու ունակությունն է: Մտածողության ստեղծագործական բնույթը հստակ արտահայտվում է հենց նման ինքնուրույնության մեջ:

**Մտածողության ճկունությունը** առարկաների, խնդիրների, նրանց հատկությունների և հարաբերությունների, դիտարկման կողմերի փոփոխության ընդունակությունն է, խնդրի լուծման նախանշված ուղու փոփոխության ունակությունն է, եթե այն չի բավարարում փոփոխված պայմաններին, ելքային տվյալների ակտիվ վերակառուցումը, դրանց հարաբերականության հասկացումն ու օգտագործումը:

**Մտածողության ինտրուսյունը** արտահայտվում է մտքի սովորական ընթացքի, շաբլոնների հակվածության մեջ, գործողությունների մի համակարգից մյուսին անցնելու դժվարություններում:

**Մտածողական գործընթացների զարգացման տեմպը** վարժությունների այն նվազագույն քանակն է, որն անհրաժեշտ է լուծման սկզբունքի ընդհանրացման համար:

**Մտքի լայնությունը** գիտելիքի և պրակտիկայի տարբեր ոլորտների հարցերի լայն շրջանակ ընդգրկելու ունակությունն է:

**Մտածողության խորությունը** էության մեջ ներթափանցելու երևույթների պատճառների բացահայտման, հետևանքների կանխատեսման ունակությունն է:

**Մտածողության հետևողականությունը** այս կամ այն հարցի քննարկման ժամանակ հստակ տրամաբանական կարգի պահպանումն է:

**Մտածողության քննադատականությունը** այն որակն է, որը թույլ է տալիս իրականացնել մտածողական գործունեության արդյունքների հստակ գնահատում, նրանցում գտնելու ուժեղ և թույլ կողմերը:

Նշված բոլոր որակները անհատական են, փոփոխվում են տարիքի հետ կապված, ենթարկվում են շտկման: Պետք է հաշվի առնել մտա-

ծողության այս անհատական առանձնահատկություններն անձի գիտելիքները և մտային ընդունակությունները ճշգրիտ գնահատելու համար:

#### 4. Մտածողությունը որպես խնդրի լուծման գործընթաց

Մարդու առջև ծառայած այս կամ այն խնդրի էության մեջ ներթափանցումը, այդ խնդրի տարրերի հատկանիշների քննարկումը, լուծման որոնումն ու հայտնաբերումը մարդու կողմից իրականացվում են մտածողական օպերացիաների միջոցով: Հոգեբանությունում ավանդաբար առանձնացնում են մտածողության հետևյալ օպերացիաները.

- վերլուծություն,
- համադրություն,
- ընդհանրացում,
- վերացարկում,
- համեմատություն,
- դասակարգում և
- կատեգորիզացիա:

**Վերլուծությունը** օբյեկտի մտովի տարաբաժանումն է իր բաղադրիչ մասերին, դրա այս կամ այն կողմերի, տարրերի, հատկությունների, կապերի հարաբերությունների առանձնացումը:

**Համադրությունը** հնարավորություն է ընձեռում մտածողության միասնական վերլուծաձևադրական գործընթացում մասերից անցնել ընդհանուրին: Ի տարբերություն վերլուծության համադրությունը ենթադրում է մասերի միավորումը մեկ ամբողջի մեջ: Վերլուծությունը և համադրությունը սովորաբար հանդես են գալիս միասնաբար: Նրանք անքակտելի են և գոյություն չունեն առանձին: Վերլուծությունը, որպես կանոն, միաժամանակ իրականացվում է համադրության հետ և հակառակը:

Վերլուծության և համադրության միջև միասնությունը հստակ երևում է այնպիսի ճանաչողական գործընթացում, ինչպիսին համեմատությունն է: **Համեմատությունը** առարկաների և երևույթների, դրա հատկությունների և հարաբերությունների միմյանց հետ համեմատումն է և դրա միջոցով դրանցում ընդհանրության և տարբերության բացահայտումն է: Համեմատությունը բնութագրվում է որպես առավել տարրական գործընթաց, որից, որպես կանոն, սկսվում է ճանաչողությունը: Արդյունքում համեմատությունը բերում է ընդհանրացման:

**Ընդհանրացումը** ինչ-որ ընդհանուր գործոնի հիման վրա բազմաթիվ առարկաների և երևույթների միավորումն է: Ընդհանրացման ընթացքում համեմատվող առարկաներում վերլուծության արդյունքում առանձնացվում է որոշակի ընդհանրություն: Տարբեր օբյեկտների ընդհանուր հատկությունները լինում են երկու տեսակի.

- ընդհանուր մասն գործոններ,
- ընդհանուր էական գործոններ:

Նման, միևնույն կամ ընդհանուր հատկություններ հայտնաբերման ճանապարհով սոսկակալը բացահայտում է երևույթների միջև նմանությունն ու տարբերությունը: Այդ մասն կամ նույնական գործոնները վերացարկվում են այլ հատկություններ ընդհանրությունից և նշանակվում բառով, ապա դառնում են առարկաների կամ երևույթների որոշակի համադրության մասին մարդու պատկերացումների բովանդակությունը:

**Վերացարկումը** ճանաչողական գործընթացի տեսանկյունից հեմվում է առարկաների, երևույթների ոչ էական գործոնների մտովի անտեսման և գլխավորի, հիմնականի առանձնացման վրա: Տարբերմակարգակների ընդհանուր հատկություններ առանձնացումը (վերացարկումը) մարդուն հնարավորություն է տալիս առարկաների և երևույթների բազմազանության մեջ հաստատել ազգակցական հարաբերություններ, **համակարգել** դրանք և դրանով իսկ կառուցել որոշակի դասակարգում:

**Դասակարգումը** մարդու գիտելիքի կամ գործունեության որոշակի ոլորտի ենթակարգային հասկացությունների համակարգումն է, որն օգտագործվում է օբյեկտների տարբեր դասերի կամ հասկացությունների միջև կապերի հաստատման համար:

Անհրաժեշտ է տարբերել դասակարգումը կատեգորիզացիայից: **Կատեգորիզացիան** եզակի օբյեկտի, իրադարձության, ապրման վերագրումն է որոշակի դասի, որի դերում կարող են հանդես գալ վերբալ և ոչ վերբալ նշանակությունները, սիմվոլները և այլն:

Մտածողության դիտարկված օպերացիաների օրինաչափություններն էլ մտածողության ներքին յուրահատուկ օրինաչափություններն են: Միայն նրանց հիման վրա կարող են բացատրվել մտածողական գործունեության բոլոր արտաքին երևույթները:

## 5. Ընդհանուր հասկացություն լեզվի և խոսքի մասին

Մտածողության գործընթացում մարդը օգտագործում է տարբեր բնույթի միջոցներ.

- գործնական գործողություններ,
- պատկերներ,
- մոդելներ,
- սխեմաներ,
- նշաններ,
- լեզու:

Այս մշակութային միջոցների վրա հենվելը բնութագրում է մտածողության այնպիսի առանձնահատկություն, ինչպիսին է միջնորդավորվածությունը: Մտածողության առավել կարևոր միջնորդավորող միջոցը խոսքը և լեզուն է: Մարդկային մտածողությունը խոսքային մտածողություն է, այսինքն անխզելիորեն կապված խոսքի հետ: Մտածողության կայացումը տեղի է ունենում մարդկային հաղորդակցման գործընթացում: Օմթոգենեզում մարդկային մտածողության ձևավորումը հնարավոր է միայն մեծահասակի և երեխայի համատեղ գործունեության ընթացքում:

Յոգեբանական գիտության մեջ **խոսքը** հասկացվում է որպես մարդու կողմից օգտագործվող ձայնային ազդակների, զրավոր նշանների և սիմվոլների համակարգ ինֆորմացիայի փոխանցման համար՝ մտքի նյութականացման գործընթաց: Կարևոր է տարբերել խոսքը լեզվից:

**Լեզուն** պայմանական նշանների համակարգ է, որոնց օգնությամբ կոդավորվում և փոխանցվում է մարդկանց համար նշանակություն և իմաստ ունեցող ինֆորմացիան: Եթե լեզուն կողերի օբյեկտիվ, պատմականորեն ձևավորված համակարգ է, ապա խոսքը լեզվի միջոցով մտքի ձևավորման և փոխանցման հոգեբանական գործընթաց է:

Խոսքն առանց լեզվի յուրացման հնարավոր չէ, միևնույն ժամանակ, երբ լեզուն կարող է մարդուց հարաբերականորեն անկախ գոյություն ունենալ, կապված չլինել ոչ հոգեբանության և ոչ էլ մարդու վարքի հետ կապված օրենքների հետ:

**Առանձնացվում են լեզվի հետևյալ ցուցանիշները.**

- պատմականորեն ձևավորված շփման միջոց,
- զարգանում է մարդուց հարաբերականորեն անկախ,
- արտացոլում է ազգային հոգեբանությունը,

- պայմանական նշաններ համակարգ, որի միջոցով փոխանցվում է մարդկանց համար նշանակություն և իմաստ ունեցող ինֆորմացիան:

*Առանձնացվում են խոսքի հետևյալ ցուցանիշները.*

- արտահայտում է առանձին անհատի հոգեբանական առանձնահատկությունները,
- մարդուն յուրահատուկ առավել կատարյալ գործունեություն, որը փոխանցում է մտքերը և զգացմունքները:

*խոսքի գործառույթներն են.*

- ազդեցություն,
- հաղորդում,
- արտահայտում,
- նշանակում:

**Ազդեցության** գործառույթն արտահայտվում է մարդու կողմից խոսքի միջոցով մարդկանց որոշակի գործողությունների դրդելու կամ դրանցից հրաժարվելու ընդունակության մեջ:

**Չաղորդման** գործառույթը բառերի և նախադասությունների միջոցով մարդկանց միջև ինֆորմացիայի փոխանցումն է:

**Արտահայտման** գործառույթը մի կողմից արտահայտվում է նրանում, որ խոսքի շնորհիվ մարդը կարող է հաղորդել իր զգացմունքները, ապրումները, հարաբերությունները և, մյուս կողմից, խոսքի արտահայտչականությունը, հուզականությունը էականորեն լայնացնում է շփման հնարավորությունները:

**Նշանակման** գործառույթը խոսքի միջոցով շրջապատող իրակացությունն առարկաներին և երևույթներին միայն իրենց հատուկ անվանումների վերագրման ընդունակությունն է:

Առանձնացնում ենք խոսքի հետևյալ տեսակները.

- արտաքին, որն իր հերթին լինում է բանավոր և գրավոր,
- ներքին:

Բանավոր խոսքը իր հերթին արտահայտվում է մենախոսություն, երկխոսություն և տրամախոսություն ձևով:

**Բանավոր խոսքը** ընկալվում է լսողության կողմից և բնութագրվում նրանով, որ ժամանակի մեջ դարձելի չէ: Բանավոր խոսքային հաղորդման առանձին բաղադրիչներ ծնվում են և ընկալվում հաջորդաբար, այն ժամանակ, երբ գրավոր տեքստը կարող է ընկալվել միաժամանակ կամ, համեմայն դեպք, մեծ «կտորներով»: **Գրավոր խոսքի** ընկալումը

կարող է ժամանակի մեջ հետաձգված լինել (օրինակ՝ նամակ) կամ լինել անմիջապես (միստի ժամանակ գործունեություն փոխանակումը):

**Ներքին խոսքը** մտածողության գործընթացն ուղեկցող թաքնված բառայնացում է: Նրա արտահայտումներն առավել պարզ են տարբեր խնդիրների մտային լուծման, մտային պլանավորման, այլ մարդկանց խոսքն ուշադիր լսելու, մտքում տեքստերը կարդալու, սովորելու և վերհիշելու ժամանակ: Ներքին խոսքի ժամանակ տեղի է ունենում ընկալվող տվյալների դասակարգում, դրանց ընդգրկում որոշակի հասկացությունների համակարգում, ինքնահրահանգավորում, իրականացվում է սեփական գործողությունների և ապրումների վերլուծություն:

Իր տրամաբանաքերականական կառուցվածքում էապես տարբերվելով ներքին խոսքը ընդհանրացված սեմանտիկ համակարգ է, որը բաղկացած է նախադասությունների և բառերի հատվածներից, որոնց հետ խմբավորվում են որոշակի ակնառու պատկերներ և պայմանական նշաններ:

Դժվարությունների բախվելիս ներքին խոսքը դառնում է ավելի ծավալուն և կարող է վերածվել ներքին մենախոսության, շշուկային կամ բանավոր խոսքի, որոնց նկատմամբ հեշտ է իրականացնել սոցիալական և տրամաբանական հսկողություն:

## 6. Մտածողության և խոսքի ուսումնասիրումը

Մտածողությունը հարաբերականորեն ավելի ուշ է դարձել փորձարարական ուսումնասիրման առարկա: Երկար ժամանակ համարվում էր, որ մտածողությունը կարող է ուսումնասիրվել միայն ինտրոսպեկտիկ մեթոդի՝ ինքնադիտման, օգնությամբ: Այժմ փորձարարական հոգեբանությունում մշակված է օբյեկտիվ գիտական մեթոդների մի ամբողջ համակարգ՝ դիտումից և ինքնադիտումից մինչև լաբորատոր և բնական գիտափորձ, սոբյեկտի մտածողական առանձնահատկությունների թեստավորում, մտածողական գործողությունների գրանցման և դրանց գրանցման հոգեֆիզիոլոգիական միջոցների: Փորձարարական ուսումնասիրման ազդեցության տակ էլ մեր օրերում մտածողությունը դիտարկվում է որպես լեզվի (խոսքի) անմիջական մասնակցությամբ իրականության ընդհանրացված և միջնորդավորված արտացոլման գործընթաց:

Մտածողության սկիզբը խնդրային իրավիճակն է, որում սուբյեկտը կողմնորոշվում է և ընտրում իրեն առավել անհրաժեշտ խնդիրները:

ԽՆՈՒՄՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ և նպատակին հասնելու համար մտածողական գործունեության սուբյեկտը պետք է գտնի առավել հարմար միջոցներ և կանոններ: Սա խնդրի լուծման առաջին փուլն է, այսպես կոչված խնդրի նախալուծումը, որն ավարտվում է հիպոթեզի ձևակերպմամբ, անհրաժեշտ միջոցների և հնարների ընտրությամբ: Նախալուծման փուլն անվանվում է նաև արդյունավետ փուլ, քանի որ հենց դրա վրա է կենտրոնացած նոր արդյունավետ ինֆորմացիայի ստեղծումը: Այն ավարտվում է հասկացման զգացման ի հայտ գալով: Առաջին փուլի տևողությունը տարբեր սուբյեկտների մոտ տարբեր է: Բացի դրանից, այն կախված է ընտրված խնդրների դժվարության աստիճանից, մտածողության ռազմավարություններից, սուբյեկտի հուզական վիճակից, իրավիճակի առանձնահատկություններից:

Մտածողության ուսումնասիրման շատ մեթոդներ նվիրված են հենց մտածողական գործընթացի առաջին և ամենաբարդ փուլին: Մտածողական գործընթացի երկրորդ փուլը կապված է գործողության հետ, երբ սուբյեկտը օգտագործում է գտնված միջոցները կոնկրետ լուծման համար և ստուգում է առաջարկված հիպոթեզերի արժեքը: Երբեմն, երբ այս փուլին չի նախորդում առաջին փուլը, այն իրենից ներկայացնում է մի շարք գործողություններ՝ հաճախ անկարգ և արագ, ճշգրիտ լուծումը զգալու նպատակով (փորձի և սխալի մեթոդ): Մտածողության այսպիսի տեսակն անվանում են իմպուլսիվ և հաճախ նրան համապատասխանում է ազարտային կամ պահպանողական ռազմավարությունը, երբ ընդհանրապես չի առաջադրվում և քննարկվում ոչ մի սկզբնական հիպոթեզ: Իսկ եթե երկրորդ փուլին նախորդում է մեկ կամ մի քանի հիպոթեզի առաջադրմամբ և քննարկմամբ առաջին փուլը, ապա այդպիսի մտածողությունը անվանվում է ռեֆլեքսիվ և նրան հաճախ համապատասխանում են միկրո և մակրո ռազմավարություններ, որոնք տարբերվում են փոփոխականների քանակությամբ և մասշտաբով:

Մտածողության գործընթացը չի սահմանափակվում միայն գիտակցական մակարդակում: Քանի որ խնդրային իրավիճակն առաջանում է պահանջներին, ցանկությունների, հույզերի ոլորտում, իր շատ կողմերով մտածողությունը դիմում է ենթագիտակցության մակարդակին:

Նպատակները, խնդիրները, դր դասպատճառները, նրանց ուղղվածությունը և դիմաձիկան մտածողության սուբյեկտի կողմից կարող են միանգամից չզիտակցվել, սակայն արդեն ձևավորվում են ինտուիտիվ,

ոչ վերբալ մտածողության ոլորտում՝ հաճախ գերակա դառնալով մտածողական գործընթացների ընդհանուր կառուցվածքում:

Օնթոգենեզում մարդու զարգացման ընթացքում մտածողությունը ձեռք է բերում այս կամ այն տեսակներ, ձևեր, որոնք դժվարացնում են նրա փորձարարական ուսումնասիրումը: Երեխայի մոտ մտածողության առաջատար տեսակները մինչև ասկացութային են. ակնառու-գործնական և ակնառու-պատկերավոր, որոնցում կարելի է առանձնացնել հիմնական միավորները ռացիոնալ գործողության և պատկերի ձևով: Հասուն մարդու մոտ ձևավորվում է հասկացութային մտածողությունը, որը նրան թույլ է տալիս հեռանալ անմիջական իրականությունից և այն փոխարինել վերբալ նշաններով: Անցումը նշաններին սուբյեկտին հնարավորություն է տալիս իրականության ճանաչման իր հնարավորությունները, առավելագույնս ընդհանրացնել և վերացարկել դրանք: Տվյալ դեպքում տեղին է հետազոտել մտածողության այնպիսի ձևեր, ինչպիսիք են հասկացությունը, դատողությունը, մտահանգումը, ինչպես նաև մտածողական գործընթացների (վերլուծություն, համադրություն, համեմատում, դասակարգում, ընդհանրացում, վերացարկում) առանձնահատկությունները:

Մտածողական գործընթացներում մեծ դերակատարում ունեն սուբյեկտի անհատական-հոգեբանական, անձնային, սոցիալ-հոգեբանական հատկությունները: Օրինակ, կարելի է գնահատել մտածողության ցուցանիշները սուբյեկտի փաստացի տարիքին համապատասխան: Փորձարարական ճանապարհով հաստատվել է, որ մտածողության գործընթացների և արդյունքի վրա մեծ ազդեցություն են թողնում սուբյեկտի այնպիսի անձնային և կոգնիտիվ այնպիսի առանձնահատկություններ, ինչպիսիք են տազնապայմանությունը, էքստրավերտությունը և ինտրավերտությունը, վերլուծականությունը, սինթետիկությունը, ռեֆլեքսիվությունը և իմպուլսիվությունը:

Մտածողության սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները պայմանավորվում են սոցիումում սուբյեկտի զբաղեցրած դերով, նրա կոնֆորտությամբ, իր կարծիքը պնդելու հակվածությամբ, ներշնչվողականությամբ, հասարակական գնահատականներին կախվածությամբ:

Սուբյեկտի առանձնահատկությունները հատկապես վառ են արտահայտվում խմբային մտածողության իրավիճակներում, ուր միանգամից առանձնանում են առաջնորդների, ենթարկվողների տեսակներ:

Մտածողության առաջատար ցուցանիշներից է նրա ակտիվու-

թյունը կամ արդյունավետությունը, որն ընդգրկում է վերբալ կամ պատկերավոր մտածողության քանակական ցուցանիշներ՝ արտահայտված կոնվերգենտ և դիվերգենտ մտածողության տեսակներով:

Մտածողության անհատական առանձնահատկությունների հոգեդիագնոստիկան ուղղված է նաև բացահայտելու սուբյեկտի դրդապատճառային առանձնահատկությունների (դրդապատճառների ուժը և բնույթը, արտաքինների և ներքինների գերակայությունը), մոտ և հեռու նպատակներին ուղղվածության, մտածողության քննադատականության բացահայտմանը:

Փորձարարական բազում հետազոտություններում բացահայտվել են վերոհիշյալ ցուցանիշների և մտածողական գործունեության սուբյեկտի տարիքի, սեռի, կրթության մակարդակի, հուզական վիճակի, փորձի, դիրքորոշումների և սպասումների բազմաթիվ փոխհարաբերություններ:

Մտածողության ուսումնասիրումը սերտորեն կապված է խոսքի ուսումնասիրման հետ: Գոյություն ունեն խոսքի ուսումնասիրման երկու հիմնական մեթոդներ՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի մեթոդի օգնությամբ հետազոտվողը գիտակցված պատասխաններ է տալիս տարբեր լեզվական նշանների ամենաէական ցուցանիշներին մասին:

Ուղիղ մեթոդների թվին են պատկանում վերլուծական բնույթի տարբեր առաջադրանքներ՝ գտնել նախադասության մեջ զլխավոր անդամները, թարգմանել նախադասությունը, պատասխանել հարցերին, հարցեր տալ, ընդհանրացնել տեքստի բովանդակությունը մեկ նախադասությամբ:

Անուղղակի մեթոդները, ի տարբերություն ուղիղների, չեն պահանջում կամ նվազագույն չափով են պահանջում գիտակցված ազդեցություններ: Խոսքի ուսումնասիրման անուղղակի մեթոդների թվին են դասվում հոգեֆիզիոլոգիական, զոգոգրական մեթոդները և սենսանտիկ դիֆերենցիալի մեթոդը:

Հոգեֆիզիոլոգիական մեթոդները հիմնվում են առաջնային և երկրորդային ազդակների ազդեցությունների հարաբերակցման վրա: Ազդեցությունների համընկնումը վկայում է սենսանտիկ ստիմուլների ադեկվատ հասկացման մասին:

Ասոցիատիվ մեթոդները փորձարարական հոգեբանությունում բավական արմատացած են XIX դարի վերջից: Դրանք ցույց են տալիս առանձին ստիմուլ ազդակների ոչ այնքան սենսանտիկ բնութագրիչները, որքան առանձին խումբ ստիմուլների միջև առկա կապերը:

Այս պիսով, մտածողության և խոսքի ուսումնասիրման խնդրի լուծումը առավել օբյեկտիվ, հուսալի և բազմաբնույթ գիտական մեթոդների և մեթոդիկաների ստեղծումն է, որոնք հնարավորություն կտան բացահայտել և ուսումնասիրել անձի սոցիալ և անձնային կարևոր առանձնահատկությունները:

## Գրականություն

1. *Глуханюк Н. С., Дьяченко Е. В., Семенова С. Л.* Практикум по общей психологии: Учеб. пособие. – М.: Изд-во Московского психолого-социального института; Воронеж: НПО «МОДЭК», 2003. С. 126-129.
2. *Общая психология: Учебное пособие для студентов пед. институтов /* Под ред. В. В. Богословского. М.: Просвещение, 1981. С. 238–271.
3. *Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учебное пособие /* под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. – СПб.: Изд-во «Питер», 2000. С. 139-142, 172-174.
4. *Рубинштейн С. Л.* Основы общей психологии. СПб.: Питер Ком, 1999. С. 381–397.
5. *Словарь практического психолога /* Сост. С. Ю. Головин. Минск: Харвест, 1997. С. 314–318, 570-573.

## 2.1 ՆԱԽԿԻՆ ՓՈՐՁԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԽՆԴՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՄԻՋՈՑԻ ՎՐԱ (Ա. Լաչինսի մեթոդիկա)

**Նպատակը.** մտածողական գործընթացների ռիզիկոյության բացահայտում:

### Առաջադրանքի նյութերը.

Անհրաժեշտ է երկու բլանկ՝ թիվ 1 և թիվ 2, յուրաքանչյուրը տասը թվաբանական խնդիրներով: Երկու բլանկներում էլ տրված են նույն խնդիրները, սակայն հերթականությամբ: Տես հավելված 16: Անհրաժեշտ է նաև վայրկենաչափ:



**Աշխատանքի ընթացքը**

Հետազոտական խումբը բաժանվում է երկու հավասար մասի: Առաջին փորձարարական խմբին փորձարկողը տալիս է թիվ 1 բլանկը, երկրորդ՝ ստուգիչ խմբին թիվ 2 բլանկը: Հետազոտվողները պետք է լուծեն խնդիրները հստակ հերթականությամբ՝ 1-ից 10-ը: Բոլոր հաշվարկները հետազոտվողը կատարում է խնդիրների թղթի վրա: Հաշվարկվում է առաջադրանքի կատարման ժամանակը:

**Հրահանգը.**

«Ձեզ առաջարկվում է տասը խնդիրներով բլանկ, որոնք լուծելու համար Դուք պետք է կատարեք պարզ թվաբանական քայլեր: Հենց բլանկի վրա էլ զրեք թվաբանական գործողությունների հաջորդականությունը, որոնք Դուք օգտագործում եք խնդրի լուծման ժամանակ: Ժամանակը սահմանափակ չէ, սակայն հաշվի է առնվում: Խնդիրները լուծեք հաջորդաբար 1-ից 10-ը և աշխատեք ինքնուրույն»:

**Արդյունքների վերլուծությունը:**

1. Յուրաքանչյուր հետազոտող իր բլանկի վրա գրում է առաջադրանքի կատարման ժամանակը:
2. Փորձի պայմաններով առաջին բլանկի № 1-5 խնդիրները ունեն միայն մեկ լուծում՝ այսինքն այն միշտ ռացիոնալ է: № 6-10 խնդիրների լուծման ռացիոնալության չափանիշը նվազագույն թվաբանական գործողությունների կատարումն է՝ երկու, մեկ կամ էլ ընդհանրապես ոչ մի: Այս ինֆորմացիայի հաշվարկով յուրաքանչյուր հետազոտվող ամեն խնդրի առջև գրում է նվազագույն թվաբանական գործողությունների քանակը, որն անհրաժեշտ էր խնդրի լուծման համար:
3. Յուրաքանչյուր հետազոտվող իր բլանկի № 6-10 յուրաքանչյուր խնդրի առջև գրում է «Ռ», եթե խնդիրը ռացիոնալ է լուծված և «Ո», եթե լուծել է ոչ ռացիոնալ ճանապարհով:
4. Յուրաքանչյուր հետազոտվող հաշվում է իր կողմից ռացիոնալ և ոչ ռացիոնալ լուծված խնդիրների քանակը:
5. Հաշվվում է, թե որքան հետազոտվող է ռացիոնալ լուծել № 6-10 խնդիրները փորձարարական և որքան՝ ստուգիչ խմբերում:
6. Ստացված մեծությունները անցկացվում են տոկոսային ցուցանիշների (100 % համարվում է խնդիրների ընդամուստի թիվը յուրաքանչյուր խմբում):
7. Ստացված տվյալները ներմուծվում են աղյուսակ 13:

Աղյուսակ 13 - Ստացված տվյալների ամփոփ աղյուսակ

Բլանկ	Հետազոտվողների խումբը	Հետազոտվողների քանակը	Խնդիրների ընդհանուր քանակը	Խնդիրների լուծման միջոցը			
				Ռացիոնալ		Ոչ ռացիոնալ	
				Խնդիրների թիվը	%	Խնդիրների թիվը	%
1.	Փորձարարական						
2.	Ստուգիչ						

8. Կատարել տվյալների համեմատական խմբային վերլուծություն:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. СПб.: Питер, 2000. - 142 с.

**2.2 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄԱՍ ԻՐՈՒՄ**

**Նպատակը.** սահմանափակ ժամանակում ինդուկտիվ մտածողության վերլուծականության զարգացման մակարդակի որոշում:

**Առաջադրանքի նյութերը.** որոշակի օրինաչափությամբ կազմված թվերի 15 շարք (տես հավելված 17-1) և վայրկյան աչափ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Խմբային աշխատանքի պարագայում յուրաքանչյուր հետազոտվողի տրվում է հավելվածում ներկայացված բլանկը՝ համապատասխան թվերի շարքերով, որոնք դրվում են յուրաքանչյուր հետազոտվողի առաջ շրջված վիճակում: Աշխատանքի համար տրամադրվում է 7 րոպե:

**Հրահանգ.**

«Ձեզ տրված են թվերի շարքեր: Փորձեք պարզել, թե ինչ տրամաբանությամբ է կազմված յուրաքանչյուր շարքը: Այդ օրինաչափության համաձայն շարունակեք յուրաքանչյուր շարքը՝ գրելով ևս երկու թիվ: Աշխատանքի համար Ձեզ է տրվում 7 րոպե: Երկար կանգ մի առեք մի շարքի վրա, եթե չեք կարողանում գտնել օրինաչափությունը, այլ անցեք առաջ: Եթե ժամանակ մնա կվերադառնաք չլուծված շարքին:

Շարքը պետք է շարունակել վերջին թվից սկսած: Եթե չկան հարցեր, շրջեք թղթերը և սկսեք աշխատել»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

Արդյունքների մշակումը կատարվում է համապատասխան բաճախի միջոցով, որը ներկայացված է հավելված 17-2-ում: Հաշվվում է հետազոտվողի կողմից ճշգրիտ լրացված շարքերի քանակը: Եթե լրացված է միայն մեկ թիվ, թեկուզ և այն ճիշտ է, շարքը համարվում է չլուծված:

Ստացված արդյունքները վերլուծվում են աղյուսակ 14-ի համաձայն.

*Աղյուսակ 14 - Արդյունքների վերծանման աղյուսակ*

<i>Ճշգրիտ լուծված շարքերի քանակ</i>	<i>Մտածողության վերլուծականության ցուցանիշը</i>
14 – 15	շատ բարձր
11 – 13	բարձր կամ լավ
8 – 10	միջին կամ բավարար
6-7	ցածր կամ վատ
5-ից քիչ	շատ ցածր

**Աղբյուր.** Пашукова Т. И., Допира А. И., Дьяконов Г. В. // Психология по общей психологии Учеб. пособие. - М.: Издательство "Институт практической психологии", 1996.

**2.3 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՌԵՖԼԵՔՍԻՎՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Աշխատանքի նպատակը.** մտածողության ռեֆլեքսիվության ձևավորման մակարդակի ուսումնասիրում:

**Առաջադրանքի նյութերը.** 15 անագրամներ, գրառման թերթիկ, վայրկենաչափ: Տես հավելված 18:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Աշխատանքն առավել արդյունավետ է անցկացնել մեկ հետազոտվողի հետ: Նրան տրվում է անագրամների բլանկը: Փորձարկողը պետք է գրանցի յուրաքանչյուր անագրամի լուծման ժամանակահատվածը, որը գրանցվում է հետազոտության արձանագրության մեջ: Տես աղյուսակ 15:

*Աղյուսակ 15 - Արդյունքների արձանագրման ամփոփ աղյուսակ*

Անագրամի №	Ժամանակը	Հետազոտվողի հաշվետվությունը
1.		
2.		
3.		
...		
15.		

**Հրահանգ.**

«Ձեզ կառաջարկվեն անագրամներ՝ բառեր, որոնք ստացվել են տառերի տեղափոխման արդյունքում: Վերականգնեք բառերը: Փորձեք աշխատել արագ, յուրաքանչյուր անագրամի լուծման ժամանակը գրառվում է: Լուծումը գրեք թղթի վրա»:

Ավարտից հետո փորձարկողը հարցնում է, թե ինչպես էր հետազոտվողը գտնում պատասխանները: Գտել է՞ր նա արդյոք ինչ-որ օրինաչափություն:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը:**

Յուրաքանչյուր ճիշտ լուծման համար հետազոտողը ստանում է 1 միավոր և 1 միավոր էլ ավելացվում է այն լուծումների համար, որոնք գտնվել են ինչ-որ օրինաչափության հիման վրա: Օրինաչափությունը ներկայացված է աղյուսակ 16-ում:

*Աղյուսակ 16 - Անագրամների վերլուծության աղյուսակ*

Անագրամի №	Տառերի տեղափոխման բանալին
№№ 1 - 5	2 1 4 3
№№ 6 - 10	2 1 4 3 6 5
№№ 11 - 15	2 1 4 3 6 5 8 7

Ռեֆլեքսիվ մտածողության գործակիցը ստանում են հետազոտվողի կողմից ստացված բալերը բաժանելով առավելագույն հնարավոր բալերի վրա: (Այս դեպքում՝ 29-ի):

Մտածողության ռեֆլեքսիվության զարգացման աստիճանը որոշվում է աղյուսակ 17-ի համաձայն:

*Աղյուսակ 17 - Մտածողության ռեֆլեքսիվության վերծանման աղյուսակ*

<i>Ռեֆլեքսիվ մտածողության գործակից</i>	<i>Մտածողության ռեֆլեքսիվության զարգացման աստիճան</i>
0 - 0,3	ցածր
0,31 - 0,7	միջին
0,71 - 1,0	բարձր

**Աղբյուր.** Пашукова Т. И., Допира А. И., Дьяконов Г. В. // Практикум по общей психологии. Учеб. пособие. - М.: Издательство "Институт практической психологии", 1996.

**2.4 ՎԵՐԲԱԼ ԵՎ ՊԱՏԿԵՐԱԿՈՐ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** ուսումնասիրել մտածողության առանձին հատկությունների զարգացման մակարդակը:

**Առաջադրանքի նյութերը.** 4 առաջադրանք, որ իրականացվում են ֆիքսված ժամանակահատվածում:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Փորձարկողը վայրկենաչափի միջոցով կարգավորում է հետևյալ իրահանգների համաձայն իրականացվող առաջադրանքները:

**Հրահանգ առաջին.**

«Մեկ րոպեի ընթացքում գրեք Ռ-ով սկսվող կանացի անուններ»: Առաջադրանքը կարելի է փոփոխել՝ ասենք գրել քաղաքների անուններ, որոնք սկսվում են համապատասխան տառով: Գրված անունների քանակը համապատասխանում է վերբալ սահունության ցուցանիշին:

**Հրահանգ երկրորդ.**

«Մեկ րոպեի ընթացքում այս օղակներում նկարեք, տարբեր բույսեր, այնպես, որ օղակը դառնա նկարի մաս»: Հետազոտվողներին առաջարկվում են 6-8 օղակներ: Եզրփակատարված նկարների քանակը համապատասխանում է պատկերավոր սահունության ցուցանիշին:

**Հրահանգ երրորդ.**

«Մեկ րոպեի ընթացքում կազմեք և գրեք հետևյալ չորս տառերով սկսվող բառերով իմաստավորված նախադասություններ՝ Պ, Ի, Կ, Լ»: Կազմված նախադասությունների քանակը վերբալ ճկունության ցուցանիշն է:

**Հրահանգ չորրորդ.**

Փորձարկողը նկարում է գրատախտակին իմաստային կշիռ չունեցող հատված, օրինակ՝ խաչ, հատվող գծեր, շրջան, ալիք և այլն: «Մեկ րոպեի ընթացքում այս պատկերը ներառեք հնարավորինս շատ իմաստավոր պատկերների մեջ»:

Նկարների քանակը պատկերավոր ճկունության ցուցանիշն է:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

1. Ստացված անհատական և խմբային արդյունքները գրանցվում են աղյուսակ 18-ում.

*Աղյուսակ 18 - Միջին ցուցանիշների արձանագրման աղյուսակ*

	Սահունություն		Ճկունություն	
	Վերբալ	Պատկերավոր	Վերբալ	Պատկերավոր
Անհատական				
Խմբային միջինը				

2. Անհատական տվյալները համեմատվում են խմբային միջին ցուցանիշի հետ:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А. А. Крылова, С. А. Маничева. - СПб.: Питер, 2000. - 147 с.

**2.5 ԱՎՆԱՌՈՒ-ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (լուցկու հատիկներից ֆիզիոլոգիկ կազմման խնդիրների լուծման ժամանակ)**

**Նպատակը.** ուսումնասիրել ակնառու գործնական մտածողության զարգացման մակարդակի գնահատումը: Այն չափազանց հարմար է իր

պարզության, հասանելիության, բաղադրիչների համարժեքության և քանակական ու հավանական ային հնարավորությունների պատճառով:

**Առաջադրանքի նյութերը և սարքավորումները:** Յուրաքանչյուր հետազոտվողին փորձի համար անհարժեշտ է 12 լուցկու հատիկ և վայրկենաչափ: Արդյունքների գրանցման համար անհրաժեշտ է նաև համապատասխան արձանագրություն, որը ներկայացված է հավելված 19-ում:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողներին հերթականությամբ ներկայացվում է 10 խնդիր և յուրաքանչյուր խնդրի համար տրվում է համապատասխան հրահանգ: Խնդիրները և համապատասխան հրահանգները ներկայացված են հավելված 20-ում:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Արդյունքների գնահատման համար օգտագործվում են երեք հիմնական չափանիշներ. լուծման արդյունավետությունը (կախված վերջնական արդյունքից «+» կամ «-»), լուծման ժամանակը (կորուստների մվազեցման համար կարելի է դնել երեք րոպեի սահմանափակում) և օգտագործված քայլերի քանակը (դրական քայլերի քանակը՝ հաշվի առնելով նաև սխալ քայլերը): Քայլի տակ ենթադրվում է լուցկու հատիկի ցանկացած տեղաշարժ, նոր դիրք: Ինչքան շատ է քայլերի քանակը պահանջվողի համեմատ, այնքան շատ են սխալ փորձերը և հետևաբար քիչ է ռեֆլեքսիայի ժամանակը:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии По д. ред. Крылова А. А. СПб., Питер, 2003, 560 с.

**2.6 ԱՎՆԱՌՈՒ-ՊԱՏԿԵՐՎՎՈՐ ՄՏԱԾ ՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐ ՈՒՄ («Պիկտոգրամ» մեթոդիկա)**

**Նպատակը.** ակնառու պատկերավոր մտածողության զարգացման մակարդակի գնահատում:

**Առաջադրանքի նյութեր.** հասկացությունների նշումներով բլանկը: Տե՛ս հավելված 21:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողներին առաջարկվում է նկարի ձևով պատկերել համապատասխան հասկացությունը՝ ընդ որում չկա ոչ մի սահմանափակում ինչպես պատկերի բովանդակության, այնպես էլ օգագործվող նյութերի, գույների չափերի և ժամանակի մեջ:

**Հրահանգ.**

«Ձեզ է ներկայացված հասկացությունների ցանկ: Ձեր խնդիրն է դրանք պատկերել որևէ պատկերի ձևով: Դրա կատարման համար Դուք չունեք ոչ մի սահմանափակում»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Արդյունքները վերլուծվում են հետևյալ չափանիշների համաձայն.

- համապատասխանության չափանիշ (+ կամ -),
- որոշ ժամանակ անց վերարտադրման չափանիշ (+ կամ -),
- կոնկրետության, վերացականության չափանիշ (1-ից 3 միավոր),
- ստանդարտության, յուրահատկության չափանիշ (1-ից 3 միավոր):

Բացի առաջարկված չափանիշներից վերլուծության են ենթարկվում նաև գործընթացային պահերը. առաջադրանքի իրականացման հեշտությունը, նրա հուզական վերաբերմունքը, ավելի լայն տարածության պահանջը և այլն:

Վերլուծության արդյունքները ներմուծվում են աղյուսակ 19:

Աղյուսակ 19 - Պիկտոգրամ մեթոդիկայի վերլուծության աղյուսակ

№	Հասկացությունը	Համապատասխանության չափանիշը	Վերարտադրման չափանիշը	Կոնկրետության/վերացականության չափանիշը	Ստանդարտության/յուրահատկության չափանիշը
1	Ուրախ տոն				
2	Զարգացում				
3	Ծանր աշխատանք				
4	Չմեռալից օր				
5	Բաժանում				
6	Թեթև աշխատանք				
7	Հիվանդություն				

8	Երջանկություն			
9	Խարեություն			
10	Աղքատություն			
	Ընդամենը (%)			

**Համապատասխանության չափանիշ**

Առաջարկվող հասկացության և նկարի միջև հիմնավորված կապի առկայության պարագայում դրվում է +, նման կապի բացակայության պարագայում - : Երբեմն միայն անհրաժեշտ է նկարի ընդհանուր տեսքը, իսկ երբեմն՝ ստանալ հավելյալ բացատրություններ հեղինակից: Այս չափանիշի նորման բավական բարձր ցուցանիշ ունի՝ սկսած 70%-ից:

**Վերարտադրման չափանիշ**

Որոշ ժամանակ անց (15–20 րոպե) փորձարկողը փորձում է հեղինակի հարցման միջոցով վերականգնել սկզբնական առաջարկված հասկացությունների ցուցակը նրա սեփական պիկտոգրամներով: Դրա համար պատահական կարգով ներկայացվում են նկարները, որոնց նայելով հետազոտվողը պետք է ճշգրտությամբ վերականգնի հասկացությունները: Հոմանիշներ, նման հասկացություններ առաջարկելու դեպքում պատասխանը հաշվվում է սխալ: Վերարտադրման չափանիշի նորմայի ցուցանիշը 80 % է և բարձր:

**Կոնկրետության, վերացականության չափանիշ**

Եթե պիկտոգրամի և հասկացության համապատասխանությունը կոնկրետ է, ապա տրվում է 1 միավոր, իսկ եթե պիկտոգրամը վերացական բնույթ է կրում՝ 3 միավոր: Խառը պատկերների դեպքում՝ համապատասխանաբար 2 միավոր: Ստացված արդյունքները գումարվում են և հաշվվում է թվաբանական միջինը, որը նորմայում համապատասխանում է 2 միավորին: Արդյունքների միօրինակության համար ստացված բալլ վեր է ածվում տոկոսային ցուցանիշի:

**Ստանդարտության, յուրահատկության չափանիշ:**

Եթե խմբում նման նկարները հաճախ են հանդիպում, ապա տվյալ պիկտոգրամը համարվում է ստանդարտ և ստանում 1 միավոր: Յուրահատուկ, չկրկնվող նկարները ստանում են 3 միավոր, միջանկյալ տարբերակները՝ 2 միավոր: Ստացված արդյունքները գումարվում են և հաշվվում է թվաբանական միջինը, որը նորմայում համապատասխան

նում է 2 միավորին: Արդյունքների միօրինակության համար ստացված բալլ նույնպես վեր է ածվում տոկոսային ցուցանիշի:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Уч. еб. по соби е // По общей ред. А. А. Кривола, С. А. Маничева. - СПб.: Питер, 2000. - 155 с.

**2.7 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԱՍՏԵՂԾՈՂ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ (դիրքորոշման ազդեցությունը մտածողական գործունեության յուրահատկության վրա)**

**Նպատակը.** մտածողական գործունեության յուրահատկության (արդյունավետության) վրա դիրքորոշման ազդեցության փորձարարական ստուգում:

**Առաջադրանքի նյութերը.** Յուրաքանչյուր հետազոտվողի տրամադրվում է խնդիրների երկու խումբ: Տես հավելված 22: Յուրաքանչյուր խումբ պարունակում է ստեղծագործական մտածողության աշխատանք պահանջող երկու և վերաստեղծող մտածողության՝ մեկ խնդիր: Պատասխանների համար տրվում են մաքուր թղթեր: Ժամանակը ֆիքսվում է վայրկենաչափի միջոցով:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողները բաժանվում են երկու խմբի՝ փորձարարական և ստուգիչ: Հետազոտության առաջին փուլում հետազոտողը երկու խմբերին էլ ներկայացնում է նույն խնդիրները, սակայն տարբեր իրահանգներով: Երկրորդ փուլում տրվում է խնդիրների երկրորդ խումբը՝ նույն իրահանգով: Խմբային իրականացման ժամանակ առավել արդյունավետության համար խորհուրդ է տրվում իրահանգը գրանցել առաջադրանքների թերթի վրա:

**Հրահանգ.**

*Առաջին փուլում փորձարարական խմբի իրահանգը.*

«Ձեր բլանկների վրա գրված է, թե դուք ինչ պետք է անեք տրված հասկացությունների հետ. նշել առարկաների օգտագործման եղանակներ, ինչ-որ բան նկարել և գտնել ընդհանուր հատկանիշ: Փորձեք

գտնել ինչքան հնարավոր է յուրահատուկ, ոչ ստանդարտ լուծումներ: Պատասխանները գրառեք մաքուր թղթերի վրա: Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար Ձեզ տրվում է մեկ րոպե:

*Առաջին փուլում ստուգիչ խմբի հրահանգը.*

«Ձեր բլանկների վրա գրված է, թե դուք ինչ պետք է անեք տրված հասկացությունների հետ. նշել առարկաների օգտագործման եղանակներ, ինչ-որ բան նկարել և գտնել ընդհանուր հատկանիշ: Պատասխանները գրառեք մաքուր թղթերի վրա: Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար Ձեզ տրվում է մեկ րոպե:

*Երկրորդ փուլում հետազոտվողներին տրվող հրահանգը.*

«Ձեզ տրվում են նախորդ առաջադրանքների նման խնդիրներ՝ նշումով, թե ինչ պետք է անել: Պատասխանները գրառեք մաքուր թղթերի վրա: Յուրաքանչյուր առաջադրանքի կատարման համար Ձեզ տրվում է մեկ րոպե»:

**Արդյունքների մշակումը և վերլուծությունը**

1. Բոլոր ուսանողները գնահատում են պատասխանների յուրահատկությունը առանձին փորձարարական և ստուգիչ խմբերում: Որպես յուրահատկության չափանիշ է հանդիսանում տվյալ լուծման հանդիպման հաճախությունը: Գնահատման սանդղակը եռաբալ է.

- 3. - պատասխանը հանդիպում է 1 անգամ,
- 2. - պատասխանը հանդիպում է 2-5 անգամ,
- 1. - պատասխանը հանդիպում է 5 անգամից ավելի:

2. Հաշվվում է փորձարարական և ստուգիչ խմբերում հետազոտվողների հավաքած բալերը և ներմուծվում աղյուսակ 20.

*Աղյուսակ 20 - Տվյալների գրանցման ամփոփ աղյուսակ*

Գետազոտության փուլը	Խմբի համարը	Խմբի գնահատականը բալերով	
		փորձարարական	ստուգիչ
I	1.		
	2.		
	3.		
	բալերի Σ		
II	1.		
	2.		
	3.		
	բալերի Σ		

3. Քանակական և որակական վերլուծության հիման վրա պետք է ճշտել, թե արդյոք հրահանգը ազդել է լուծումների յուրահատկության վրա: Հավաստել, որ հրահանգը (դիրքորոշումը) ազդել է խնդիրների լուծման վրա, կարելի է միայն այն պարագայում, եթե առաջին փուլում փորձարարական խմբի արդյունքը էապես գերազանցում է ստուգիչ խմբի արդյունքին: Սա է վկայում նաև երկրորդ փուլում (այն պարագայում երբ հրահանգը նույնն է եղել) փորձարարական խմբում յուրահատուկ լուծումների առավելությունը:

**Աղբյուր.** Психологический практикум «Мышление и речь»: учебно-методическое пособие / со ст.: А. А. Маленов, А. Ю. Маленова. - Омск: Изд-во ОмГУ, 2005. - 43 с.

**2.8 ԽՆԴԻՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** Ուսումնասիրել խնդիրների լուծման հիմնական անհատական առանձնահատկությունները (լուծման արագություն, ինտելեկտուալ ակտիվություն, որոշման որակ):

**Առաջադրանքի նյութերը.** Փորձական լուծման բլանկ: Խնդիրների բլանկ, գիտափորձի արձանագրություն: Տես հավելված 23:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողներին տրվում են խնդիրների բլանկները: Առաջարկվող գումարները պետք է լինեն 39-ից 51-ի միջակայքում: Հրահանգ 1-ը ընթերցվում է այնքան անգամ, որքան անհրաժեշտ է խնդրի բոլոր պայմանների ամբողջական ընկալման համար: Երկու քառակուսիներում հետազոտվողները լուծում են խնդիրն առանց ժամանակի հաշվառման պայմանները հասկանալու, լուծումների որոնման ճանապարհներ հայտնաբերելու համար: Ապա փորձարկողն առաջարկում է լուծել խնդիրները երկու քառակուսիներում ժամանակի հաշվառմամբ: Ընդ որում ընթերցվում է 2 հրահանգը.

**Հրահանգ 1.**

«Ձեր առջև 25 վանդակից բաղկացած քառակուսի է: Յուրաքանչյուր սյունակ վերևից և տող՝ ձախից նշված է 1-ից 5 ինդեքսով: Յուրա-

քանցուր վանդակում կարելի է դնել թիվ, որը հավասար կլինի սյունակի և տողի ինդեքսների արտադրյալին: Պետք է ընտրել 5 վանդակ այնպես, որ ստացված թվերի գումարը հավասար լինի տրված թվին: Նախընտրելի է, որ յուրաքանչյուր տողում և սյունակում օգտագործվի միայն մեկ վանդակ: Սակայն խնդիրը համարվում է լուծված մաս այն դեպքում, երբ տողերից կամ սյունակներից միայն մեկում լրացված են երկու վանդակներ: Թույլ են տրվում ցանկացած ուղղումներ»:

### **Չրահանգ 2.**

«Այժմ կհայտարարվեն երկու թվեր և կմիացվի վայրկենաչափը: Գրեք դրանք երկու փորձ արարական քառակուսիների տակ և միանգամից սկսեք առաջադրանքի կատարումը: Երբ ավարտեք երկու խնդիրների կատարումը, նշան արեք և են կգրանցեն լուծման ժամանակը: Դրանից հետո որևէ փոփոխություններ կատարել չի կարելի»:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Բացի առաջադրանքների կատարման ժամանակից հաշվի է առնվում նաև ուղղումների (ջնջումներ, փորձնական և որոնողական գրառումներ, նշաններ) և սխալների (սխալ գումարներ և արտադրյալներ, միևնույն տողում և սյունակում երկուսից ավելի օգտագործված վանդակներ) քանակը: Արդյունքներն անցկացվում են հետազոտության արձանագրություն:

Ամփոփ արձանագրությունում գրանցվում են անհատական և խմբային միջին ժամանակային ցուցանիշները: Անհատական տվյալները համեմատվում են խմբային ցուցանիշների հետ:

Խնդիրների լուծման անհատական առանձնահատկությունների վերաբերյալ եզրակացություն կատարելիս հաշվի է առնվում.

1. խնդիրների լուծման ժամանակը, որը մտածողական գործընթացների արագության ցուցանիշն է,
2. ուղղումների քանակը ինտելեկտուալ ակտիվության ցուցանիշն է: Ինչքան քիչ է ուղղումների քանակը, այնքան խորն է խնդրի պայմանների վերլուծությունը և ճշգրիտ է մտքում գործողությունների համակարգի կառուցումը: Ուղղումների մեծ քանակը վկայում է այն մասին, որ պայմանները բավարար չեն վերլուծվել, կոմբինատոր պլանավորումը թույլ է իրագործվել և խնդրի լուծումն իրագործվել է «փորձի և սխալի» մեթոդով,
3. սխալները որոշում են ինտելեկտուալ գործունեության որակական կողմը:

## **2.9 ԽՄԲԱՅԻՆ ՄՏԱԾ ՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** ուղղված է բացահայտելու անհատական և խմբային մտածողության առանձնահատկությունները մույն խնդրի լուծման ժամանակ և վերլուծել սեփական վարքը, օրինակ սեփական տեսակետը պաշտպանելու ակտիվության աստիճանը, հուզական ռեակցիաները, որոշման ընդունման արագությունը և այլն:

**Առաջադրանքի նյութերը.** 15 իրերից կազմված ցուցակ: Տես հավելված 24:

### **Չրահանգ.**

Դուք նավարկում եք Խաղաղ օվկիանոսի հարավային մասում: Նավը դանդաղ խորտակվում է, իսկ Ձեր տեղադրությունը Դուք չգիտեք նավիգացիոն սարքավորումների անարքության պատճառով: Պետք է հնարավորինս շուտ տեղափոխվել փրկարար փշովի նավակ՝ վերցնելով միայն անենաանհրաժեշտ իրերը: Ստորև Ձեզ կտրվի 15 իրերից կազմված ցուցակ: Ձեր խնդիրն է դասակարգել տրված իրերն ըստ նրանց անհրաժեշտության աստիճանի: 1 թվով նշանակեք ամենաանհրաժեշտ իրը, 2-ով ավելի քիչ անհրաժեշտը և այդպես շարունակ: Այս գործընթացն իրականացրեք երկու անգամ՝ անհատական և խմբային:

### **Աշխատանքի իրականացման ընթացքը**

Յուրաքանչյուր հետազոտվող ստանում է 15 իրից բաղկացած ցուցակ, դասակարգում դրանք ըստ կարևորության և գրանցում թղթի վրա: Դրանից հետո դասակարգման մույն գործընթացն իրականացվում է խմբային տարբերակով: Արդյունքում կազմվում է խմբային միասնական ցուցակը: Ցանկալի է, որպեսզի խումբը չլինի մեծ 5-6 մարդուց, որպեսզի և հետազոտվողները և փորձարկողը կարողանան գրանցել քննարկման գործընթացը:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Արդյունքում ունենում ենք յուրաքանչյուր մասնակցի մեկական ցուցակ և մեկ խմբային ցուցակ: Եվ փորձարկողը տրամադրում է նաև ճշգրիտ, օրինակելի ցուցակը: Տես հավելված 25: Նախ և առաջ յուրաքանչյուր հետազոտվող համեմատում է իր անհատական կազմածը

Ճշգրիտի հետև և արտածում իր սխալ գործողությունների աստիճանը: Դրա համար հաշվվում է յուրաքանչյուր առարկայի համարի տարբերությունը երկու ցուցակներում: Ինքնամեծ է ստացված թիվը, այնքան մեծ է սխալի արժեքը: Այս բոլոր տարբերությունները գումարվում են: Եթե գումարը մեծ է 60-ից, ապա նավարկությունը կարելի է անհաջող համարել: Այս նույն գործընթացը կատարվում է խմբային ցուցակի հետ: Յուրաքանչյուր հետազոտվող կարող է համեմատելով ստացված երկու ցուցանիշները վերլուծել իր անհատական և խմբային մտածողության արդյունավետության ցուցանիշները: Օգտակար տվյալներ կարելի է ստանալ նաև յուրաքանչյուր հետազոտվողի ինքնադիտման և փորձարկողի կողմից խմբային դիտման արդյունքների վերլուծության ժամանակ:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии. Под. ред. Крыло ва А. А. СПб., Питер, 2003, 560 с.

## 2.10 ԹԵՍՏ «ՄՏԱՐԱՆԳՈՒՄՆԵՐԻ ՏՐԱՍԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

### Աշխատանքի իրականացման ընթացքը.

Հետազոտվողներին բանավոր ներկայացվում են հարցերը: Յուրաքանչյուր առաջադրանքում իրար հետ կապված դատողություններ են և մտահանգում: Որոշ մտահանգումներ ճշգրիտ են, իսկ մյուսները բացահայտ սխալ: Պահանջվում է ճշգրտել, թե որ մտահանգումներն են ճշգրիտ, իսկ որոնք՝ սխալ: Յուրաքանչյուր խնդրի լուծման համար տրամադրվում է 10 վայրկյան:

### Հրահանգ.

«Ձեզ կընթերցվեն իմաստով իրար հետ կապված երկու դատողություններ և դրանցից բխող մեկ մտահանգում: Ձեզանից պահանջվում է 10 վայրկյանի ընթացքում գտնել ճիշտ պատասխանը և գրանցել հետազոտության արձանագրությունում»:

**Առաջադրանքի նյութերը.** իմաստով իրար հետ կապված 14 զույգ դատողություններ և յուրաքանչյուր զույգից բխող մեկական դատողություն: Տե՛ս հավելված 26:

## Արդյունքների մշակումն ու վերլուծությունը

Ճշգրիտ դատողություններն են՝ 1, 8, 9: Մնացած բոլոր դատողությունները սխալ են: Արդյունքների գնահատումն իրականացվում է ըստ աղյուսակ 21-ի:

Աղյուսակ 21 - Արդյունքների գրանցման ամփոփ աղյուսակ

Սխալների քանակ	Միավոր	Տրամաբանականության մակարդակ
0	5	Դատողություններում տրամաբանականության բարձր մակարդակ, արագ ընկալում է մյուսների դատողությունների սխալները
1	4	Տրամաբանականության լավ ցուցանիշ
2 -3	3	Տրամաբանականության միջին ցուցանիշ
4 -6	2	Ցածր տրամաբանականություն: Հաճախ նկատվում են տրամաբանական սխալներ

**Աղբյուր.** Столяренко Л. Д., Основы психологии, Феникс 1996. с. 736.

## 2.11 ԹԵՍՏ «ՆԿԱՐԻՉ-ՄՏԱԾՈՂ»

**Նպատակը.** պարզել հետազոտվողի գերակշռող մտածողական տիպը:

### Հրահանգ.

«Պատասխանեք հետևյալ հարցերի, օգտվելով տասը բալանոց սանդղակից: Բացարձակ հերքմանը համապատասխանում է 0 միավորը, ամբողջական համաձայնությանը՝ 10 միավորը: Սակայն եթե, օրինակ, առաջին իսկ հարցը ձեզ փակուղու առջև կանգնեցնի, օգտագործեք 1-9 միավորներն արդարացիորեն գնահատելու համար ձեր հատկանիշները»:

**Առաջադրանքի նյութերը.** 10 հարցից բաղկացած հարցարան: Տե՛ս հավելված 27:

### Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.

Հաշվեք տվյալների գումարը բանալու համաձայն.



Չ = 1, 2, 5, 8, 9 («ծախսկիսագնդային»)

Ա = 3, 4, 6, 7, 10 («աջկիսագնդային»)

Եթե Ձեր «ծախսկիսագնդային» արդյունքը 5 միավորով ավել է «աջկիսագնդային» արդյունքից, ապա Ձեր մոտ գերակշռող է մտածողության տրամաբանական տեսակը, իսկ հակառակ դեպքում Դուք գեղարվեստական տիպի անձնավորություն եք:

**Աղբյուր.** *Истратова О. Н., Психодиагностика. Коллекция лучших тестов в 2-е издание Ростов н/Д: Феникс, 2006. с. 375.*

**2.12 ՁՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ («Ձուգորդական գիտափորձ» մեթոդիկա)**

**Նպատակը.** ուսումնասիրել զուգորդումների տեսակները, դրանց օգտագործումը և լատենտ փուլի կախվածությունը զուգորդման տեսակից:

**Առաջադրանքի նյութերը.** բառերի երեք հատուկ խումբ՝ յուրաքանչյուրում 32 բառ: Տե՛ս հավելված 28: Վայրկենաչափ, պատասխանների գրանցման թերթիկ, գրիչ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը:**

Փորձի անցկացման համար անհրաժեշտ է երկու փորձարկողի առկայություն, որոնցից յուրաքանչյուրը պետք է կատարի գործառնությունների իր մասը:

- 1. Առաջին փուլ** - Առաջին փորձարկողը բառերի առաջին ցուցակից հերթականությամբ կարդում է բառերը: Հետագոտվողը, ինչքան հնարավոր է արագ պատասխանում է միտքը եկած առաջին բառով: Փորձարկողը արագ կարդում է հաջորդ բառը: Երկրորդ փորձարկողը արձանագրության մեջ նշում է հետագոտողի կողմից ասված բառ-ասոցիացիաները և փորձի անցկացման ընդհանուր ժամանակը:
- 2. Երկրորդ փուլ** - Հաջորդիվ օգտագործվում է բառերի երկրորդ ցուցակը: Հետագոտվողին տրվում է հրահանգ, որ նա այժմ պետք է ասի զուգորդումներ «մաս-ամբողջ» սկզբունքով: Առաջին փորձարկողը կարդում է բառերը, իսկ երկրորդ փորձարկողը

նշում է հետագոտողի կողմից ասված բառ-ասոցիացիաները և փորձի անցկացման ընդհանուր ժամանակը:

- 3. Երրորդ փուլ** - Օգտագործվում է բառերի երրորդ ցուցակը: Հետագոտվողին առաջարկվում է պատասխանել «սինտագմատիկ» զուգորդում՝ այսինքն լեզվում կայունացած բառակապակցությամբ: Փորձարկվողներին միջև գործառնությունների բաշխումը նույնն է, ինչ նախորդ փուլերում:

*Աղյուսակ 22 - Ասոցիատիվ փորձի արդյունքների արձանագրություն*

№	Ձուգորդումներ (առաջին փուլ)	Ձուգորդումներ (երկրորդ փուլ)	Ձուգորդումներ (երրորդ փուլ)
1			
2			
...			
32			
t	t1	t2	t3

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

- 1. Վերլուծության են ենթարկվում յուրաքանչյուր փուլում օգտագործված զուգորդումների քանակը և տեսակը:** Ընդ որում հատուկ ուշադրություն է դարձվում հետագոտվողի առաջին փուլի զուգորդական հակազդեցություններին, սակայն վերլուծության են ենթարկվում նաև ուղղորդված զուգորդական փորձի տվյալները՝ մասնավորապես, թե որքանով է հետագոտվողը հետևել առաջին փորձարկողի հրահանգներին:

*Աղյուսակ 23 - Հետագոտվողի քանակական և որակական ցուցանիշների գրանցման աղյուսակ*

Ձուգորդման տեսակը	Ձուգորդումների քանակը		
	1-ին փուլ	2-րդ փուլ	3-րդ փուլ
1			
2			
3			
...			
Փուլի անցկացման ժամանակը			

2. Ապավեր են հանվում հետազոտվողին բնութագրական զուգորդումների տեսակները (օրինակ՝ մաս-ամբողջ, պատճառ-հետևանք, ըստ կոնտրաստի, ըստ մեմանթայան և այլն):
3. Ստացված ժամանակային ցուցանիշների հիման վրա տրվում է զուգորդման առաջացման լատենտային փուլի մասին բնութագրում ազատ զուգորդական փորձի և ուղղորդված զուգորդական փորձերի ժամանակ: Որից հետո որոշվում է լատենտային փուլի տևողության կախվածությունը զուգորդման տեսակից (համեմատվում են երեք փուլերի ժամանակային ցուցանիշները):
4. Ազատ զուգորդական գիտափորձի (առաջին փուլ) տվյալների հիման վրա, որոնք ստացվել են ամբողջ խմբից, բնութագրվում են խմբում առավել տարածված զուգորդումների տեսակները:

**Աղբյուր.** Психологический практикум «Мышление и речь»: учебно-методическое пособие / со ст.: А. А. Маленов, А. Ю. Маленова. - Омск: Изд-во ОмГУ, 2005.- 64 с.

## 2.13 ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԽՈՉՆԴԴՈՏՆԵՐԻ ԴՐԱԳԱՅՈՒՄ ԽՈՍՔԻ ՉԱՍԿԱՑՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻ ՐՈՒՄ

**Նպատակը.** խոսքի հասկացման վրա արտասանական խոչընդոտների ազդեցության ուսումնասիրումը:

**Առաջադրանքի նյութերը.** տեքստեր (տես հավելված 29), մաքուր թուղթ, տվյալների գրանցման արձանագրություն:

### Աշխատանքի իրականացման ընթացքը

Փորձը անց է կացվում երեք փուլով: Յուրաքանչյուրում հետազոտվողին առաջարկվում է միաժամանակ հիշել տեքստը և կատարել, այսպես կոչված, արտիկուլյալ խոչընդոտներ:

1. Հետազոտվողը լսում է տեքստը և ռիթմիկ արտասանում հանգեր:
2. Հետազոտվողը տեքստը լսելու ժամանակ ռիթմիկ հաշվում է:
3. Հետազոտվողը տեքստը լսելու ժամանակ բանաստեղծություն է կարդում:

Յուրաքանչյուր առաջադրանքի ավարտից 10-15 վայրկյան հետո հետազոտվողը թղթի վրա վերարտադրում է, այն ինչ հիշել է: Հետազոտության անցկացման համար անհրաժեշտ է երկու փորձարկվողի մասնակցություն, որոնցից յուրաքանչյուրն իրականացնում է իր համար նախատեսված գործառույթները: Առաջին փորձարկողը կարդում է տեքստը, երկրորդը՝ ֆիքսում հետազոտվողի խոսքում փոփոխությունները: Յուրաքանչյուր փուլում տրվում է համապատասխան հրահանգը և առաջարկ՝ կատարվում փորձ-առաջադրանք առանց տեքստը լսելու: Փորձից հետո սկսվում է բուն հետազոտության փուլը: Հետազոտվողը սկսում է ցածր և ռիթմիկ կատարել իր առաջադրանքը: Սկսելուց 8-10 վայրկյան անց առաջին հետազոտվողը կարդում է տեքստը: Ավարտից հետո դեռևս մի քանի վայրկյան հետազոտվողը շարունակում է իր գործունեությունը, ապա վերարտադրում է տեքստը թղթի վրա:

Յուրաքանչյուր փուլի ժամանակ երկրորդ փորձարկվողը ֆիքսում է հետազոտվողի խոսքի սխալները՝ տեմպի, ռիթմի, ձայնի բարձրության, խոսքի պարզության փոփոխությունները, հոգոցները, դադարները: Ընդհանրացված տվյալները ներմուծվում են աղյուսակ 24:

Աղյուսակ 24 - Հետազոտվողի քանակական և որակական ցուցանիշների գրանցման աղյուսակ

Փորձ №	Հետազոտվողի խոսքի փոփոխությունները							Ճշգրիտ վերարտադրված բառերի քան.	
	դանդաղում/արագացում	քաղցրություն	ռիթմ	պարզություն	դադարներ	հոգոցներ	ընդ. փոփոխություններ	հատ	%
1									
2									
3									

### Հրահանգ.

#### Առաջին փուլի հրահանգ.

«Ձեզ այժմ կներկայացվի տեքստ, որը անհրաժեշտ է ինչքան հնարավոր է ճշգրիտ մտապահել և վերարտադրել: Ընդ որում տեքստը լսելու հետ միաժամանակ Դուք պետք է արտասանեք վանկեր (օրինակ. կա, տե, ռու, սի, բո և այլն): Դրանք պետք է արտասանել ցածր և ռիթմիկ: Փորձեք այժմ այդ անել: Լավ է: Այժմ Դուք կշարունակեք արտասանել վանկեր, իսկ մի քանի վայրկյան անց ես կսկսեմ կարդալ տեքստը: Տեքստի ընթերցման ավարտից հետո ևս մի քանի վայրկյան շարունակ

նակեք կատարել ձեր խնդիրը, ապա իմ հրահանգով թղթի վրա վերարտադրեք այն, ինչ մտապահել եք»:

**Երկրորդ փուլի հրահանգ.**

Հաջորդ առաջադրանքը կիրականացվի նույն կերպ, բայց այս անգամ Դուք պետք է հաշվեք մեկից սկսած և մտապահեք իմ կողմից կարդացվող տեքստը:

**Երրորդ փուլի հրահանգ.**

Այժմ հաշվելու փոխարեն Դուք պետք է ռիթմիկ, առանց դադարների արտասանեք Ձեզ լավ ծանոթ բանաստեղծություն: Այն այնքան ծանոթ պետք է լինի, որ արտասանման համար հատուկ ջանքեր չպահանջի: Եթե հանկարծակի մոռանում եք բանաստեղծության ինչ-որ մաս, ապա կարող եք սկսել արտասանել սկզբից: Գլխավորը պահպանել նույն ռիթմը:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Փորձարկողները համեմատում են բնօրինակ տեքստը յուրաքանչյուր փուլում հետազոտվողի վերարտադրածի հետ և որոշում ճշգրիտ վերարտադրված բառերի քանակը: Ստացված արդյունքները ներմուծվում են համապատասխան արձանագրության մեջ:

Ստացված որակական և քանակական արդյունքների վրա անհրաժեշտ է վերլուծել խոչընդոտների յուրաքանչյուր տեսակի ազդեցությունը տեքստի հասկացման արդյունավետության վրա և բացատրել ստացված օրինաչափությունները:

**Աղբյուր.** Психологический практикум «Мышление и речь»: учебно методическое пособие / со ст.: А. А. Маленов, А. Ю. Маленова. - Омск: Изд-во ОмГУ, 2005.- 67 с.

**2.14 ՎՈՎԱԼ ԽՈՍՔՈՒՄ ՀՈՒՅՁԵՐԻ ՃԱՆԱՉՄԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐՈՒՄ**

**Նպատակը.** մեթոդիկայի հիմքում ընկած է հուզական սեմանտիկ իմպերսիայի սկզբունքը: Ուղղված է վոկալ խոսքում հոյզերի ճանաչման որակական ցուցանիշների ուսումնասիրմանը:

**Առաջադրանքի նյութերը.** 10 երաժշտական նախադասություն Զայկովսկու «Քնիր իմ բալիկ, քնիր» ռոմանսից բարձր որակավորմամբ կին և տղամարդ երգիչների կատարմամբ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողներին առաջարկվում են լսել նույն նախադասությունը, սակայն տարբեր ընթերցողների կողմից՝ տարբեր հուզական հնչերանգներով. ուրախությամբ, թախծով, զարմանքով, վշտով, կարոտով: Հետազոտվողների խնդիրն է ճանաչել հուզական հնչերանգի դասը: Ծզգրիտ ճանաչման տոկոսը պայմանավորում է հետազոտվողների ապրումակցման և լսողական պատկերների փոփոխման զգայունակության անհատական առանձնահատկությունները: Հատկապես հետաքրքրական են վոկալ խոսքի ճանաչման արդյունքները, քանի որ վոկալ խոսքը առավել հարմարված է հուզական հատկանիշների փոխանցմանը:

Հետազոտվողներին առաջարկվում է լսել Զայկովսկու «Քնիր իմ բալիկ, քնիր» ռոմանսից տասը երաժշտական նախադասություն, որոնք կատարում են երկու բարձր որակավորմամբ երգիչներ՝ կին և տղամարդ: Հատուկ բլանկի վրա (տես աղյուսակ 25) հետազոտվողները մշում են հույզերի դասերը ըստ համապատասխան կողերի.

1. ուրախություն,
2. վիշտ,
3. անտարբերություն,
4. զայրույթ,
5. վախ:

*Աղյուսակ 25 - Վոկալ խոսքում հույզերի ճանաչումը*

Ձայն	Ստիմուլի համարը										Ճանաչման ճշգրտությունը
	1	2	3	4	5	6	7	8	9	10	%
Տղամարդ											
Կին											

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Աղյուսակում նշվում են ճանաչման ճշգրտության տոկոսային արդյունքները: Դրանից բացի հետազոտվողները կառուցում են հոյզերի առանձին դասերի ճանաչման գրաֆիկը:

Տարբեր խմբերում դիտարկվում են հետևյալ փորձարարական միջինները. վախ՝ 86%, զայրույթ՝ 79%, վիշտ՝ 68%, անտարբերություն՝ 64%, ուրախություն՝ 42%, որոնք, իհարկե, տարբեր խմբերում, որոշակիորեն փոփոխական են: Ավագ տարիքային խմբերում նկատվում է ճանաչման ավելի բարձր աստիճան, որն ունի իր բացատրությունը: Բացասական հույզերն ունեն առավել բարձր կենսածին դեր և առավել վառ հոգեակնատիկ երանգ՝ բարձրություն, երկարություն: Նկատվում է նաև արդյունքների փոփոխականություն՝ կախված գենդերային հատկությունների հոմոգենությունից և հետերոգենությունից: Այսպես, տղամարդիկ առավել բարձր ցուցանիշներ են ցուցաբերում կանացի ծայրերի ճանաչման ժամանակ և հակառակը:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии. Под. ред. Крылова А. А. СПб., Питер, 2003, 560 с.

## 2. 15 ԽՈՍՔԻ ՏԵՄՊԱՌԹՍԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԻՐՈՒՄ

**Նպատակը.** Խոսքի տեմպային բնութագրիչների միջոցով խոսքի տեմպառիթմային առանձնահատկությունների ուսումնասիրումը:

### Աշխատանքի իրականացման ընթացքը

Խոսքի տեմպային ցուցանիշների չափման համար անհրաժեշտ է համապատասխան սարքավորում, որը կգրանցի ընթերցման ժամանակը, դադարների ժամանակը և լեզվական դադարների երկարությունը գերազանցող դադարների քանակը: Հետազոտվողներն իրականացնում են հետևյալ առաջադրանքները.

1. հայերեն լեզվով ազատ պատմություն ցանկացած թեմայով մեկ րոպեի ընթացքում,
2. օտար լեզվով ազատ պատմություն ցանկացած թեմայով մեկ րոպեի ընթացքում,
3. մեկ րոպեի ընթացքում շուտասելուկների ընթերցում հարմար տեմպով,
4. մեկ րոպեի ընթացքում շուտասելուկների ընթերցում ամենաարագ տեմպով:

Շուտասելուկները օգտագործվում են հնչյունների արտիկուլյացիայի բարելավման համար: Տես հավելված 30:

### Արդյունքների վերլուծությունը և մեկնաբանությունը

Խոսքի արագությունը որոշվում է միավոր ժամանակահատվածում խոսքային սեգմենտների քանակությամբ: Հաճախ առավել կայուն սեգմենտի դերում ծառայում են վանկերը, իսկ ժամանակի միավոր ընդունվում է մեկ րոպե: Հայերեն խոսքի համար տվյալները բացակայում են, սակայն պարզվել է, որ ռուսերենի համար ընդունված են հետևյալ նորմատիվները.

- րոպեում 120 վանկ (կամ 4-5 հնչյուն վայրկյանում) - դանդաղ և շատ դանդաղ տեմպ,
- րոպեում 250 վանկ (կամ 7-8 հնչյուն վայրկյանում) - խոսքի միջին տեմպ,
- րոպեում 350 վանկ (կամ 9-10 հնչյուն վայրկյանում) - արագ տեմպ,
- րոպեում 400 վանկ (կամ 10 հնչյունից ավելի վայրկյանում) - գերարագ տեմպ:

Բացի արագությունից խոսքի տեմպն ընդգրկում է նաև բառերի և նախադասությունների միջև ընկած դադարները: Երբ դադարները չեն գերազանցում 250 միլիվայրկյանը, ապա ծառայում են խոսքային մի սեգմենտը մյուսից բաժանող միավոր: Սակայն եթե դրանց տևողությունը մեծանում է, ապա դրանք վերածվում են անվստահության դադարների՝ լցված կողմնակի ձայներով, այնպիսիք ինչպիսիք են «մ-մ», «ը-ը-ը», «է-է-է» կամ ուլյնիսկ անպետք բառերով՝ «ուրեմն» և այլն: Սովորաբար արագախոսները ավելի կարճ դադարներ են տալիս, երբեմն նրանց խոսքը նույնիսկ ընկալվում է որպես շատ խիտ և հետևաբար նաև դժվար ընկալելի:

Յուրաքանչյուր առաջադրանքի համար գրանցվում է երեք ցուցանիշ՝ խոսակցության «մաքուր» ժամանակը, դադարների տևողությունը և քանակը: Ստացված արդյունքները գրանցվում են աղյուսակ 26-ում:

**Աղյուսակ 26 - Տարբեր պայմաններում խոսքի տեմպի ցուցանիշները**

Տեմպի ցուցանիշները	խոսքի «մաքուր» տևողությունը	Դադարն երի տևողությունը	Դադարն երի քանակը
Հայերենով խոսք հարմար տեմպով, 1 րոպ			
Օտար լեզվով խոսք հարմար տեմպով, 1 րոպ			
Շուտաճեղձերի ընթացում, հարմար տեմպ, 1 րոպ			
Շուտաճեղձերի ընթացում, առավել արագ տեմպ, 1 րոպ			

Իրար հետ համեմատվում են առաջին, երկրորդ և երրորդ ու չորրորդ ցուցանիշները: Օտար լեզվին ազատ տիրապետման դեպքում խոսքի տեմպային երկու ցուցանիշները համընկնում են: Երրորդ և չորրորդ ցուցանիշների համեմատման դեպքում գնահատվում են խոսքի արտիկուլյացիոն արագության հնարավոր ցուցանիշները: Քանի որ շուտաճեղձերը տրվում են ընթացման, ապա հայտնի են նաև դրանց լեզվաբանական առանձնահատկությունները՝ վանկերի քանակը: Օգտվելով վերոհիշյալ տվյալներից եզրակացություն է կատարվում յուրաքանչյուր հետազոտվողի խոսքային օպտիմալ և առավելագույն արագությունները:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной - психологии. Под. ред. Крылова А. А. СПб., Питер, 2003, 560 с.

**2.16 ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ՀՈԳԵԳՐԱՖՈՒՈՒԿԱԿԱՆ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**Նպատակը.** գրավոր խոսքի բովանդակային առանձնահատկությունները կարելի է որոշել խոսքային գործունեության արդյունքների ուսումնասիրման ավանդական մեթոդներով՝ կոնտենտ և ինտենտ վերլուծությանը: Հիմնական ինֆորմացիան կարելի է ստանալ արտահայտման միջոցների վերլուծության միջոցով, այսինքն այն հոգելեզվաբանական հասկացություններից, որոնք վկայում են մասնագիտական և ինտելեկտուալ կոմպետենտության, հուզական վիճակի, ընդհանուր և լեզվական մշակույթի մասին:

**Աշխատանքի իրականացման ընթացքը.**

Հետազոտվողներին առաջարկվում է իրականացնել հետևյալ առաջադրանքը. հատուկ ստուգում և մախապատրաստում չպահանջող մանակ գրել ընկերոջը կամ ընկերուհուն (գրել այնպես, ինչպես կխոսես): Նամակը պետք է լինի բավական երկար՝ 250-300 բառ, մտավորապես երկու A4 ֆորմատի թուղթ: Որպես համեմատական վերլուծության օրինակ հետազոտվողներին աղյուսակ 27-ում ներկայացվում է Մարիա Ցվետսևայի աղջկա Կիանդա Էֆրոնի մամակը Բորիս Պաստերնակին:

**Հրահանգ.**

«A4 ֆորմատի թղթի վրա երկու էջի սահմաններում գրեք մանակ Ձեր ընկերոջը կամ ընկերուհուն»:

**Աղյուսակ 27 - Գրավոր խոսքի հոգելեզվաբանական վերլուծություն**

Ցուցանիշի վերլուծությունը	Արիանդա Էֆրոնի մամակը	Անհատական արդյունք
1. խոսքային գործունեության ծավալը բառերով	324 բառ	
2. խոսքային գործունեության ծավալը նախադասություններով	32 նախադաս.	
3. նախադասության միջին երկարությունը	10, 1 բառ	
4. բառային բազմազանության գործակիցն ըստ բանաձևի	22,4 %	
5. բայերի օգտագործման գործակիցն ըստ բանաձևի	6,6%	
6. Տրամաբանական կապվածության գործակիցն ըստ բանաձևի	0,9	
7. Ենթոսյայի (աղոտովածության) գործակիցն ըստ բանաձևի	0	

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը.**

Հոգելեզվաբանական ցուցանիշների մեկնաբանման ժամանակ օգտագործվում են արդեն իսկ ստացված փորձարարական տվյալները: *Խոսքային գործունեության արդյունքի ծավալի ցուցանիշը* վկայում է հեղինակի անհատական առանձնահատկությունների մասին, նրա շփվողականության, էքստրավերտության-ինտրովերտության, դրական և բացասական դրդապատճառայնության մասին: Այս կապն ավելի ուժեղ նկատվում է բանավոր խոսքում: Բացի դրանից ծավալի ավելացումը հիմք է հուզական գրգռման, լարվածության և հոգեֆիզիոլոգիական վիճակի գնահատման համար: Սովորաբար այս ցուցանիշը ամ-

րապնդվում է սոցիալական բնույթի տեղեկատվությանը՝ թե արդյո՞ք հաճուքով է գրվում նամակը և այլն:

*Նախադասության միջին երկարության ցուցանիշը* վկայում է վերբալ ինտելեկտի առանձնահատկությունների մասին (ուղիղ կորելյացիոն կապ) կամ հուզական վիճակի կտրուկ փոփոխության մասին (հակադարձ կորելյացիոն կապ): Փորձերը ցույց են տալիս, որ ռատերենում այս ցուցանիշը միջինում 6-9 բառ է:

*Բառային բազմազանության գործակիցը* խոսքային հոգեճանաչման ոլորտում ամենաուժեղ ցուցանիշներից մեկն է: Այն վկայում է վերբալ ինտելեկտի առանձնահատկությունների մասին (ուղիղ կորելյացիոն կապ) կամ ինչպես նախորդը հուզական վիճակի կտրուկ փոփոխության մասին (հակադարձ կորելյացիոն կապ): Միջին ցուցանիշը 5-ից 15 միավոր է: Այն հաշվվում է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{\text{Տարբեր բառեր}}{2N (\text{բոլոր բառեր})} \times 100\%$$

Բայերի օգտագործման գործակիցն այլ կերպ անվանում են ազդեցիկության գործակից: Այն բայերի հարաբերությունն է բառերի ընդհանուր քանակին: Այդ հարաբերության բարձրացումը 60%-ից ավելին թույլ է տալիս եզրակացնել գրգռված վիճակի, անհապաղ գործողությունների դիմելու պատրաստվածության մասին: Գործակիցը հաշվվում է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{\text{Բայեր}}{\text{բոլոր բառեր}} \times 100\%$$

*Տրամաբանական կապվածության գործակիցը* նույնպես հաշվվում է համապատասխան բանաձևով, որը կապող բառերի հարաբերությունն է նախադասությունների քանակին: Մեկ միավորի սահմաններում դիտարկվում է նյութի տրամաբանական կապակցվածության բավական գրագետ մակարդակ:

$$K = \frac{\text{Միավորող բառեր}}{3N (\text{նախադասութ.})} \times 100\%$$

Էմբոլիայի գործակիցը (բժշկական էմբոլա բառից՝ արյունատար անոթների խցանում) կամ խոսքային արտահայտությունների աղտոտվածությունը էմբոլների, այսինքն իմաստային ծանրաբեռնվածությունն չկրող բառերի հարաբերությունն է ընդհանուր բառերի քանակին:

$$K = \frac{\text{էմբոլիկ բառեր}}{\text{բոլոր բառեր}} \times 100\%$$

Էմբոլներ են համարվում անիմաստ կրկնությունները, ոչ նորմատիվ լեքսիկան և ... : Էմբոլիայի գործակիցը վկայում է վերբալ ինտելեկտի առանձնահատկությունների մասին (հակադարձ կորելյացիոն կապ ուղիղ կորելյացիոն կապ) և գրողի հուզական վիճակի մասին (ուղիղ կորելյացիոն կապ): Այն կարող է նաև պատկերացում տալ խոսքի մշակույթի, գրողի էթիկետի մասին:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной - психологии. Под. ред. Крылова А. А., СПб., Питер, 2003, 560 с.

**ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**2.17 ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Միջանկյալ օղակ*

Անցկացման ժամանակը՝ 10 րոպե:

**Հրահանգ.** բառերի յուրաքանչյուր զույգի մեջ տեղում գրեք բառ, որը նույնը կլինի, ինչ առաջարկված բառերը:

1. ճակնդեղ ... .. ձեռք,
2. բանտ ... .. դարբնի սալ,
3. բուռ ... .. եզերք,
4. գործվածք ... .. առանձին մաս,
5. գրքի շապիկը ... .. պատրաստ վիճակում,
6. զինվորական բաճկոնակ ... .. կուտակել, դիզել,
7. արվեստի տեսակ ... .. լեռնաշղթա,
8. անուղղակի ասված խոսք ... .. փոքր ծավալի գրական երկ,
9. անիվ ... .. թանկագին քար,
10. ոչխարների խումբ ... .. զգայության տարատեսակ,
11. ուսումնառություն ... .. հասարակական խումբ, խավ,
12. իրերի դասավորություն ... .. պետական իշխանության ձև
13. լեռներով անցնող ճանապարհ ... .. խոսքի մաս,
14. տեր ... .. ազնիվ ձկան տեսակ,
15. վերքի հետք ... .. վարսանդի հեղուկանյութ արտադրող մաս,
16. տուրք ... .. կարիք, անհրաժեշտություն,
17. վիշապածուկ ... .. նշան
18. մոտավորապես ... .. ջրոս կողմը,
19. մթնոլորտային ճնշման միավոր ... .. պտուղ, բերք,
20. նոսր ... .. հիմար:

Ճիշտ պատասխանները. տես հավելված 31:

Անցկացման ժամանակը՝ 10 րոպե:

**Հրահանգ.** Ձեզ կանվանվի ինչ-որ առարկա կամ երևույթ՝ օրինակ «ուղղաթիռ»: Անհրաժեշտ է գրել ինչքան հնարավոր է շատ նրա համանմանություններ, այսինքն նրա էական հատկությունների հիման վրա նման երևույթներ:

Անցկացման կարգը

Համանմանությունները նշելուց հետո անհրաժեշտ է նաև համակարգել և դասակարգել համանմանությունները կախված երևույթի այն հատկությունից, որի հիման վրա առաջարկվել են: Օրինակ, կարող են անվանվել «թռչուն», «թիթեռ»՝ թռչում են, «ավտոբուս», «գնացք»՝ տրանսպորտային միջոցներ են, «խցանահան»՝ կարևոր դետալները պտտվում են:

Ավարտին հաշվվում է համանմանությունների ընդհանուր քանակը, քննարկվում դասակարգման սկզբունքները և վեր հանվում սխալները:

*Միավորող օղակների որոնում*

Անցկացման ժամանակը՝ 10 րոպե:

**Հրահանգ.** Ձեզ կառաջարկվեն երկու առարկա, օրինակ՝ «բահ» և «ավտոմեքենա»: Պետք է անվանեք առարկաներ, որոնք այդ երկու առարկաները միավորող «կամրջի» դեր կկատարեն: Անվանվող առարկաները պետք է ունենան հստակ տրամաբանական կապ երկու առարկաների հետ: Այս օրինակում միավորող օղակի դերում կարող է հանդես գալ «էքսկավատորը» (և՛ փորում է, և՛ տրանսպորտային միջոց է), «հողագործը» (և՛ փորում է բահով, և՛ կարող է ավտոմեքենայի տեր լինել): Թույլատրվում է երկու-երեք միավորող առարկաների անվանումը, օրինակ՝ «բահ»-«երկաթ»-«շարժիչ»-«ավտոմեքենա»: Առաջարկված ժամանակահատվածում պետք է առաջարկեք ինչքան հնարավոր է շատ կապող օղակներ:

### Անցկացման կարգը

Տրվում են զույգ բառերը և հետագոտվողները գրանցում են իրենց տարբերակները: Արդյունքների վերլուծության ժամանակ հատուկ ուշադրություն պետք է դարձնել կապերի հիմնավորմանը և յուրաքանչյուրի բովանդակության վերլուծությանը:

**Աղբյուր.** Коныхин А. В., Тренинг интеллектуальных способностей: задачи и упражнения. 2-е издание, Питер, 2009 г., 128 стр.

## 2.18 ԿՈՆՎԵՐԳԵՆՏ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### խառնված տառեր

Անցկացման ժամանակը՝ 5 րոպե:

**Չրահանգ.** Տրված են բառեր, որոնցում խառնված է տառերի հերթականությունը: Գտեք, թե բառերից ո՞րն է ավել որդ:

**Առաջադրանքի նյութը.** տառնա, ատաբց, ղնաիկ, քկիալ, իբադր

### Այբուբեն

Անցկացման ժամանակը՝ 5 րոպե:

**Չրահանգ.** կազմեք բառեր այբուբենի առաջարկված տառերից, այնպես, որ ոչ մի տառ չկրկնվի:

**Օրինակ.** ա, ե, գ, թ, ի, լ, կ, խ, ձ, մ, ն, շ, ո, ջ, ռ, ս, տ, ր, ու, ք, օ:

**Պատասխան.** քնձռոտ, թզուկ, աշխօր, մեջլիս

### Ով քանի՞ տարեկան է

Անցկացման ժամանակը՝ 10 րոպե:

**Չրահանգ.** Աշոտը, Արամը, Արմենը և նրանց կանայք՝ Արմինեն, Աննան, Անուշը միասին վերցրած 151 տարեկան են: Ընդ որում յուրա-

քանցուր ամռան կնոջից մեծ է հինգ տարով: Աշոտը 1 տարի մեծ է Աննայից, Արմինեն և Աշոտը միասին 48 տարեկան են, իսկ Արմենը և Արմինեն միասին 52 տարեկան են: Առաջարկվում է իմանալ, թե ով է ում հետ ամուսնացած և քանի տարեկան է յուրաքանչյուրը

**Պատասխանը.** Արմենը՝ 30 և Աննան՝ 25, Աշոտը՝ 26 և Անուշը՝ 21, Արամը՝ 27 և Արմինեն՝ 22:

**Աղբյուր.** Коныхин А. В. Тренинг интеллектуальных способностей: задачи и упражнения. 2-е издание, Питер, 2009 г., 128 стр.

## 2.19 ԴԻՎԵՐԳԵՆՏ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### Ձևագումը

Անցկացման ժամանակը՝ 5 րոպե:

**Չրահանգ.** Ուշադիր ուսումնասիրեք բառերի հետևյալ շարքը՝ ամ - գամ - մարգ - մարագ: Յուրաքանչյուր բառ կազմված է նախորդ տառերից գումարած և մեկը: Տառերի հերթականությունը բառի ներսում նշանակություն չունի: Ստեղծեք մի քանի նման շարքեր:

### Օրինակներ.

- ակ - թակ - ակութ - թութակ:
- ուդ - բադ - բարդ - բարդի:

### Բառային քառակուսի

Անցկացման ժամանակը՝ 5 րոպե:

**Չրահանգ.** 3x3 կամ 4x4 քառակուսու վանդակներում բառերը գրեք այնպես, որ նրանք կարդացվեն և՛ հորիզոնական տողերով, և՛ ուղղահայաց սյունակներով:

### Օրինակ.

թ	ա	կ
ու	ր	ու
թ	ի	զ



## Հնարավոր պատճառներ

Անցկացման ժամանակը՝ 10 րոպե:

**Հրահանգ.** Ձեզ կ'ենթարկ այացվեն որոշակի անսովոր իրավիճակներ: Դուք պետք է ինչքան հնարավոր է արագ գրեք այդ իրավիճակի հնարավոր պատճառները: Պատճառները կարող են լինել ինչպես տրամաբանական, այնպես էլ անհավանական:

### Իրավիճակների օրինակներ.

1. Ջրոսնում եք անտառով և մի բացատում Ձեր ուշադրությունն է գրավում մի երիտասարդ ծառ: Նրա կատարին ուղիղ դրված է գարեջրի ալյումինե տարա: Ինչպե՞ս էր այն այնտեղ հայտնվել: Ծառի բարձրությունը հինգ մետր էր, սակայն այն բավականին բարակ էր, որպեսզի ինչ-որ մեկը կարողանար այնտեղ բարձրանալ:
2. Վերադառնալով Ասանից ականատես եք լինում մի տարօրինակ ճանապարհային պատահարի: Ճանապարհի կողքին կանգնած է մի մեքենա և ևս մեկը շրջված դրա վրա: Ճանապարհին կտրուկ շրջադարձեր, կամուրջներ, խաչմերուկներ չկան: Ինչպե՞ս կարող էր պատահել նման ավտովթար:

**Աղբյուր.** Коныхин А. В., Тренинг интеллектуальных способностей: задачи и упражнения. 2-е издание, Питер, 2009 г., 128 стр.

## 1.20 ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒՆՈՒԹՅԱՆ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անցկացման ժամանակը՝ 15 րոպե:

1. **Սովորական ժամանակային կապերի փոփոխումը**
  - մարդու համար սովորական ժամանակային շարքի մի երևույթի մյուսից առանձնացում (օրինակ՝ պատկերացնել որոտ՝ առանց կայծակի և այլն),

- սովորական ժամանակային հերթականության հակադարձ փոփոխության իրագործում (օրինակ՝ պատկերացնել որոտը կայծակից առաջ և այլն),
- որոշակի իրադարձությունների միջև ավանդական ինտերվալների կրճատում (օրինակ՝ կրճատել ծննդից մինչև մահ կյանքի ժամանակը մինչև մեկ օր, և պատմել այդ օրվա սյուժեներ և այլն),
- որոշակի իրի գոյության ժամանակային առանցքով տեղափոխում (օրինակ՝ հեռուստացույց. դրա դերը ներկայում, փոփոխություններն ապագայում, մասատիպերն անցյալում և այլն):

### 2. Սովորական տարածական կապերի փոփոխումը

- սովորական տարածական կապերի փոփոխումը անսովորներով (օրինակ՝ ճանապարհն ավտոմեքենայի վրա և այլն),
- սովորաբար տարածության մեջ իրարից բաժանված իրերի միավորում (օրինակ՝ խոտ և գրիչ, սենյակ և՛ ծոլ, և՛ այլն),
- սովորաբար տարածության մեջ միավորված իրերի բաժանում (օրինակ՝ ծովն առանց ձկների, անտառն առանց կենդանիների և այլն):

### 3. Ընդհանրության սովորական կապերի փոփոխումը

- օբյեկտների ընդհանուր ցուցանիշի տրամաբանական անտեսում (օրինակ՝ «երկրագունդ» և «զմբակ» օբյեկտներից հեռացվում է ընդհանուր ցուցանիշը՝ «կլորությունը» և պատկերացվում հարթ երկիրը կամ քառակուսի գնդակը և այլն),
- սկզբնապես տարասեռ օբյեկտների ընդհանրության կապերի ուժեղացում: Անհրաժեշտ է դրանք հասցնել փոխադարձ փոփոխման (օրինակ՝ «հրթիռ» և «անձրև». երկուսն էլ ընկնում են երկրի վրա և այլն),
- սովորական հարաբերությունների փոփոխությունը լրիվ հակադարձ երին (օրինակ՝ ծովսը օգտակար է թթվածնից և այլն),

**Աղբյուր.** Коныхин А. В., Тренинг интеллектуальных способностей: задачи и упражнения. 2-е издание, Питер, 2009 г., 128 стр.

### 3. ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ

#### 1. Ընդհանուր հասկացություն երևակայության մասին

Երևակայությունը հոգեկան գործունեության յուրահատուկ գործընթաց է, որը միևնույն ժամանակ հանդես է գալիս որպես առանձնացված գործընթաց, և ընկալման, մտածողության և հիշողության միջանկյալ օղակ է:

Երևակայությունը այնպիսի պատկերացումների և մտային իրավիճակների ստեղծման հոգեկան գործընթաց է, որոնք երբևիցե չեն ընկալվել մարդու կողմից:

Պատկերացումը նախօրոք ընկալված առարկայի և երևույթի պատկերն է (հիշողության պատկերացումներ, հիշողություններ), ինչպես նաև արդյունավետ մտածողության կողմից ստեղծված պատկերներ:

Ընկալումից երևակայությունը տարբերվում է նրանով, որ վերջինիս պատկերները ոչ միշտ են համապատասխանում իրականությանը, նրանցում կան ֆանտազիայի, հորինվածքի տարրեր:

Երևակայությունը սուբյեկտի գործունեության ծրագրավորման և կանխատեսման գործառնություն է կատարում՝ նրա արդյունքի վերջնական կամ ընթացիկ մոդելի ստեղծման միջոցով: Այն անհրաժեշտ է անորոշ իրավիճակներում մարդու վարքի ծրագրերի իրականությանը փոխարինող պատկերների և երևույթների բնութագրի չնեղիմ համապատասխան պատկերացումների ստեղծման համար:

Այսպիսով երևակայությունը ոչ միայն հոգեկան արտացոլման տարատեսակ է, այլև երևույթների, առարկաների, հարաբերությունների հատկությունների հոգեբանական կառուցում:

Ցանկացած ստեղծագործական գործունեություն իրականացվում է երևակայության միջոցով, որը մոր պատկերների ինքնուրույն ստեղծում է:

#### 2. Երևակայության դասակարգումը և տեսակները

Առաջացման առանձնահատկությունների և պատճառների հետ կապված տարբերում են.

1. ոչ կամածին երևակայություն,

2. կամածին երևակայություն:

Երևակայվող պատկերացումների, ինչպես նաև կամածին երևակայության առջև կանգնած խնդիրների հիման վրա առանձնացվում են.

3. վերաստեղծող երևակայություն,

4. ստեղծագործական երևակայություն,

5. երազանքներ:

##### *Ոչ կամածին կամ պասիվ երևակայություն*

Սա երևակայության ամենապարզագույն տեսակն է և առանց մարդու կողմից որևիցե մտադրության գիտակցական հսկողության թուլացման արդյունքում պատկերացումների առաջացումն ու նրանց տարրերի միավորումն է մոր պատկերացումներում: Պասիվ երևակայությունն առավել վառ դրսևորվում է երազներում, կիսաքուն վիճակում, երբ պատկերացումները առաջանում են (պարսեվերացիա), հոսում են, միավորվում և փոփոխվում ինքնուրույն՝ երբեմն ընդունելով խիստ ֆանտաստիկ ձևեր:

##### *Կամածին կամ ակտիվ երևակայություն*

Այն այս կամ այն տեսակի գործունեության ընթացքում գիտակցաբար առաջադրված խնդրի հետ կապված պատկերների կամածին կառուցումն է: Այն արդեն իսկ զարգանում է մանկական դերային խաղերում: Ակտիվ երևակայության հետագա զարգացումը տեղի է ունենում աշխատանքային գործունեության ընթացքում՝ հատկապես երբ անհրաժեշտ են ինքնուրույն նախածեռնողական գործողություններ և ստեղծագործական ջանքեր: Կամածին երևակայությունը, չնայած փոքր-ինչ այլ կերպով, տեղ ունի նաև ստեղծագործական գործունեությունում:

##### *Վերստեղծող երևակայություն*

Վերստեղծող երևակայության ժամանակ մարդը տրված բնութագրմամբ պատկերացում է երևույթ, որը նախկինում երբեք չի ընկալվել: Իր հոգեբանական կառուցվածքում վերստեղծող երևակայությունը երկրորդային ազդակների առաջնայինների վերածումն է: Այն չափ տք է շատ հեռացված լինի իրականությունից, այլապես չի ծառայի իր հիմ-

նական ճանաչողական նպատակին՝ այն է լայնացնել շրջակա աշխարհի մասին գիտելիքի սահմանները՝ բնութագրերը ակնառու պատկերների վերածան միջոցով:

**Ստեղծագործական երևակայություն.**

Երևակայության այս տեսակի բնութագրական առանձնահատկությունը մարդու ստեղծագործական գործունեության գործընթացում նոր պատկերների ստեղծումն է՝ լինի դա արվեստ կամ գիտական գործունեություն: Արվեստագետները, ձգտելով արտացոլել կյանքը իրենց արվեստի պատկերներում, դիմում են ստեղծագործական երևակայությանը: Գիտական գործունեությունը նույնպես հնարավոր չէ պատկերացնել որպես շրջապատող աշխարհի մեխանիկական ճանաչում, այն միշտ կապված է հիպոթեզների կառուցման հետ և հնարավոր չէ առանց ստեղծագործական երևակայության:

**3. Երևակայության զարգացումը**

Երևակայության զարգացումը իրականանում է ոչ կամաժինից կամաժինի, վերստեղծողից ստեղծագործականի անցման ճանապարհով: Այն հենվում է պատկերացման ընդունակության զարգացման վրա: Պատկերացումը ընկալման պատկերից տարբերվում է նվազ հստակությամբ և պարզությամբ: Սակայն պատկերացումների հենց այս հատկությունները կարող են զարգանալ: Պրակտիկ գործունեության գործընթացում կարող է զարգանալ պատկերացումների ոչ միայն հստակությունը, այլ և կայունությունը:

Երևակայության զարգացման գործընթացում կարևոր դեր են խաղում հետևյալ պատկերացումները.

- պատկերացումների պաշարի համաչափ ավելացում,
- երևակայվող օբյեկտի վրա մտային կենտրոնացվածության ընդունակության զարգացումը,
- նախաձեռնողական երևակայության զարգացումը,
- ակտիվ ստեղծագործական աշխատանքի գործընթացում երևակայության ընդունակության համակարգային վարժանքները:

**4. Երևակայության ուսումնասիրումը**

Երևակայության ուսումնասիրությունները գործնականում առավելապես ուղղված են մաև ստեղծագործական ընդունակությունների բա-

ցահայտմանը, անհատական տարբերությունների գնահատմանը, պատկերացումների առանձնահատկությունների որակական չափմանը, երևակայության գործընթացների և հնարների զարգացմանը:

**Գրականություն**

1. Выготский Л. С., Воображение и творчество в детском возрасте. - СПб., 1997. – 96 с.
2. Коршунова Л. С., Воображение и его роль в познании. - Москва, 1979
3. Брушлинский А. В., Воображение и творчество // Научное творчество. - М.: Наука, 1969. - С. 341-346.
4. Никифорова О. И., Исследование по психологии художественного творчества - М., 1972.
5. Фарман И. П., Воображение в структуре познания. - М.: Изд-во РАН, 1994. 215 с.

**3.1 ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԻ ՀՍՏԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ**

**Նպատակը.** պատկերացումների հստակության գնահատումը (ինքնադասակարգման մեթոդով):

**Առաջադրանքի նյութերը.** Դ. Մարքսի հարցարանի բլանկը: Տես հավելված 32:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Հետազոտվողը հրահանգին ծանոթանալուց հետո կարդում է հարցարանը և համապատասխան բալով գնահատում իր պատկերացման հստակությունը: Բալերը դրվում են հարցարանի յուրաքանչյուր պնդման դիմաց: Ավարտին հետազոտվողը տալիս է լրացման ընթացքի մասին խոսքային հաշվետվություն:

**Հրահանգ.** «Փորձի նպատակն է Ձեզ մոտ առաջացող պատկերացումների հստակության գնահատումը: Հարցարանի առաջադրանքները Ձեզ մոտ առաջ կբերեն որոշակի պատկերացումներ: Դուք պետք է դրանք գնահատեք համաձայն գնահատման համապատասխան սանդղակի: Յուրաքանչյուր հարցի պատասխանելիս, այնուամենայնիվ, կարդացեք գնահատման սանդղակը: Փորձեք գնահատել յուրաքանչ-

յուր առաջադրանքը անկախ նախորդ գնահատումներից: Հիշեք, որ օբյեկտի մասին պատկերացումը չի կարելի խառնել նրա մասին գիտելիքով: Դուք պետք է տեսնեք երևույթը մտային պատկերի ձևով և Ձեր խնդիրն է գնահատել այդ պատկերի հստակությունը»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Հաշվվում է հետազոտվողի կողմից 16 հարցերի գնահատման գումարային միավորը: Ինչպես նաև իրականացվում է ստացված արդյունքների խմբային վերլուծություն՝ միջին թվաքանակների և ստադարտ շեղման ցուցանիշների հաշվառմամբ: Դուրս են բերվում մասնակիցների արդյունքների անհատական տարբերությունները: Փորձարկողը քննարկում է, թե հիշողության, ուշադրության, խոսքի ինչպիսի որակների հետ է կապված պատկերացումների հստակությունը: Ինչպես նաև անհրաժեշտ է պարզել, թե առաջացել են արդյոք ոչ միայն տեսողական, այլ նաև այլ մոդալությունների պատկերներ և եթե այո, ապա հատկապես ո՞ր:

**Աղբյուր.** Практикум по общей, экспериментальной и прикладной психологии: Учеб. пособие // Под общей ред. А. А. Кривоша, С. А. Маничева. - СПб.: Питер, 2000. - 81 с.

**3.2 ՍՏԵՂԾԱԳՈՐԾՎԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅ ՈՒՅՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** տալ գնահատական ստեղծագործական երևակայության առանձնահատկություններին:

**Առաջադրանքի նյութերը.** երեք ցանկացած բառերով բլանկ, վայրկեն աչքափ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Աշխատանքն անց է կացվում մեկ հետազոտվողի կամ էլ մինչև 16 անդամից բաղկացած խմբի հետ, այն պայմանով, որ բոլորը պետք է հարմար նստած լինեն և յուրաքանչյուրը պետք է աշխատի ինքնուրույն:

Աշխատանքի սկզբում յուրաքանչյուրը ստանում է երեք բառերով բլանկ: Հետագոտվողը պետք է ծանոթանա առաջադրանքի նյութերին միայն հրահանգը լսելուց հետո:

**Հրահանգ.**

«Ուշադիր կարդացեք Ձեզ տրամադրված երեք բառերը և կազմեք ինչքան հնարավոր է շատ նախադասություններ, որոնք կպարունակեն նշված երեք բառերը: Նախադասությունները գրեք թղթի վրա: Աշխատանքի համար տրվում է 10 րոպե: Եթե ամեն ինչ պարզ է, սկսում ենք աշխատանքը»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Այս փորձում ստեղծագործական երևակայության ցուցանիշներն են.

- առավել յուրահատուկ նախադասության համար ստացված միավորը,
- բոլոր կազմված նախադասությունների գումարային միավորը: Միավորները շնորհվում են աղյուսակ 28-ի համաձայն.

Ստեղծագործական երևակայության գնահատման սանդղակ		
ա)	Նախադասությունում երեք բառերն էլ օգտագործված են յուրահատուկ և սրամիտ ձևով	6 միավոր
բ)	Նախադասությունում երեք բառերն էլ օգտագործված են յուրահատուկ, բայց ոչ այնքան սրամիտ ձևով	5 միավոր
գ)	Նախադասությունում երեք բառերն էլ օգտագործված են սովորական ձևով	4 միավոր
դ)	Նախադասությունում երեք բառերն էլ օգտագործված են տրամաբանական, բայց ոչ այնքան սահուն համադրությամբ	3 միավոր
ե)	Գիշտ է օգտագործված միայն երկու բառ, իսկ երրորդը օգտագործված է միայն բառային կապի ուժով	2,5 միավոր
զ)	Գիշտ է օգտագործված միայն երկու բառ, իսկ երրորդը արհեստականորեն է ներմուծված	1 միավոր
է)	Խնդիրը հետազոտվողի կողմից ճիշտ է հասկացված, սակայն նատվել է երեք բառերի միայն ֆորմալ միավորում	0,5 միավոր
ը)	Նախադասությունը երեք բառերի անիմաստ միավորում է	0 միավոր

Եթե հետազոտվողը ստեղծել է իրար նման մի քանի նախադասություն՝ թեմայի կրկնմամբ, ապա երկրորդ և դրան հաջորդող բոլոր նման նախադասությունները գնահատվում են առաջինի կիսով:

Ստեղծագործական երևակայության գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K = \Sigma N/n,$$

որտեղ K-ն ստեղծագործական երևակայության գործակիցն է,  $\Sigma N$ -ը յուրաքանչյուր նախադասությունից ստացած միավորների գումարը, n-ը նախադասությունների քանակը:

**Աղբյուր.** Пашукова Т. И., Дюпира А. И., Дьяконова Г. В. (сост.) – Практикум по общей психологии для студентов педагогических вузов. Учеб. пособие. - М.: Издательство "Институт практической психологии", 1996.

### 3.3 ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԵՎԱԿԱՅՈՒՅՆ ԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ («Շրջաններ» թեստը)

**Աշխատանքի նպատակը.** ստեղծագործական երևակայության ոչ խոսքային բաղադրիչների անհատական առանձնահատկությունների ուսումնասիրումը:

**Առաջադրանքի նյութերը.** 20 շրջաններով բլանկ՝ յուրաքանչյուրը 3 սմ շառավղով և վայրկենաչափ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը:** Հետազոտվողին առաջարկվում է շրջաններով բլանկը և առաջադրանք՝ նկարել ինչքան հնարավոր է շատ առարկաներ և երևույթներ՝ որպես հիմք օգտագործելով շրջանները:

**Հրահանգ.** «Բլանկի վրա նկարված է 20 շրջան: Ձեր խնդիրը նրանում է, որ նկարեք ինչքան հնարավոր է շատ առարկաներ և երևույթներ՝ որպես հիմք օգտագործելով շրջանները: Նկարել կարելի է ինչպես շրջանից դուրս, այնպես էլ ներսում, մեկ նկարի համար օգտագործել մի քանի շրջաններ: Յուրաքանչյուր նկարի ներքևում գրեք, թե ինչ է նկարված: Նկարեք ծախից աջ: Առաջադրանքի կատարման համար տրվում է

5 ռոպե: Մի մոռացեք, որ Ձեր աշխատանքի արդյունքները գնահատվելու են նկարների յուրահատկության աստիճանի համաձայն»:

#### Արդյունքների վերլուծությունը

Թեստի արդյունքների մշակման համար օգտագործվում են երեք ցուցանիշ՝ ստեղծագործական երևակայության արագությունը, ճկունությունը և յուրահատկությունը:

*Արագության* գնահատման համար հաշվվում է նկարների ընդհանուր քանակությունը:

*Ճկունության* որոշման համար նկարները խմբավորվում են հետևյալ կերպ.

ա) նկարներ, որոնք պատկերում են բնությունը, այն երևույթները, որոնք գոյություն ունեն մարդուց անկախ (բնություն),

բ) առարկաներ, որոնք մարդը պատրաստում և օգտագործում է տնտեսության մեջ, այսինքն կենցաղային առարկաները (Կենցաղ),

գ) գիտատեխնիկական գործունեության մեջ օգտագործվող առարկաներ (Գիտություն և տեխնիկա),

դ) սպորտային պարապմունքներում օգտագործվող առարկաներ (Սպորտ),

ե) գործնական արժեք չունեցող առարկաներ, որոնք օգտագործվում են զարդարման համար (այստեղ են դասվում նաև չճշգրտված առարկաները):

Բոլոր նկարները բաշխվում են մշակած խմբերում և ապա հաշվվում է խմբերի միջև անցումների քանակությունը: Այս ցուցանիշն էլ երևակայության ճկունության ցուցանիշն է:

*Յուրահատուկ* կարելի է համարել միայն այն նկարները, որոնք խմբում հանդիպում են մեկ-երկու անգամ: Յուրահատուկ նկարները կարելի է բաժանել երեք խմբի.

ա) պատկերները հազվադեպ են հանդիպում (հրաբուխ, ձնեմարդ, օձաձուկ և այլն),

բ) գոյություն չունեցող առարկաներ և երևույթներ (այլն ու որակային բնակարան),

գ) ճանաչողական գործունեությունից դուրս հազվադեպ առկա հասկացություններ, պատկերներ (ատոմի միջուկ, միկրոբ և այլն):

Որակական վերլուծությունը թույլ է տալիս տարբերակել բոլոր յուրահատուկ նկարները մի քանի խմբերի.

1. *Ըստ ինքնուրույնության աստիճանի.*

- վերարտադրողական, որոնք ներկայացնում են գոյություն ունեցող, հայտնի պատկերներ,
- կառուցողական (ստեղծագործական), որոնք պատկերում են գոյություն չունեցող երևույթներ:

2. *Ըստ ընդհանրացվածության աստիճանի.*

- առարկաներ պատկերող կոնկրետ նկարներ,
- մի շարք տեսողական պատկերացումների և պատկերների ընդհանրացումներ, ինչ-որ վերացական հասկացության սիմվոլներ (գիտության գրանիտ, պատմության անիվ, զայրույթ, մահ և այլն):

3. *Ըստ հուզականության աստիճանի.*

- չեզոք (հուշարձան, ցայտադրյուր),
- հուզական երանգավորված, հումորիստական («Ես ձեզ արև են նվիրում», «Պիկ ժամի ավտոբուսը» և այլն):

**Արդյունքների մեկնաբանումը**

*Կոնկրետ* նկարները հիմնականում վկայում են հիշողության պատկերների հարստության մասին, հազվադեպ հանդիպող երևույթները հիշողությունում արագ արթնացնելու և դրանց հետ ճկուն գործառնելու մասին:

*Ընդհանրացնող* նկարներն ավելի բարդ պատկերների հետ գործառնելու արդյունք է, որոնք իրականության զգայական և արատարակտ արտացոլման արդյունք են:

*Կառուցողական (ստեղծագործական)* նկարները երևակայության, ֆանտազիայի արդյունք են: Հենց այս նկարները կարելի է համարել յուրահատկության՝ որպես մտային գործունեության որակի, խնդիրների լուծման գործընթացում ստեղծագործական ակտիվության դրսևորում:

**Աղբյուր.** *Диагностика познавательных способностей* // Ансимова Н. П., Заверткина Е. Г., Руквишникова Н. Г. Ярославль, ЯГПУ, 2006.

**3.4 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆ ԱՍԻՐՈՒՄ**

**Նպատակը.** պարզել երևակայության ճկունության կամ ռիզիդության առանձնահատկությունները, նրա յուրահատկության կամ կարծրատիպության, երևակայության զարգացման, պատկերացումների ամբողջական աստիճանը:

**Առաջադրանքի նյութերը.** 10x16 սմ չափի երեքթուղթ առանց վանդակների և տողերի: Առաջինի մեջտեղում պատկերված է շրջանագիծ 2,5 սմ տրամագծով, երկրորդում՝ 2,5 սմ կողմով հավասարակողմ եռանկյուն, երրորդում 2,5 սմ կողմով քառակուսի: Մատիտ և վայրկենաչափ:

**Աշխատանքի իրականացման ընթացքը**

Աշխատանքն անց է կացվում մեկ հետազոտվողի կամ էլ մինչև 15 անդամից բաղկացած խմբի հետ, այն պայմանով, որ բոլորը պետք է հարմար մտած լինեն, յուրաքանչյուրը պետք է աշխատի ինքնուրույն և ցույց չտա մյուսներին իր նկարները մինչև հետազոտության ավարտը:

Հետազոտությունն անց է կացվում երեք փուլով: Սկզբում հետազոտվողին ցույց են տալիս շրջանը, եռանկյունը և ապա քառակուսին: Յուրաքանչյուր փուլի սկզբում կրկնվում է նույն իրահանգը:

**Հրահանգ.**

«Օգտագործելով թղթի վրայի պատկերը՝ նկար նկարեք: Նկարի որակը նշանակություն չունի: Պատկերը օգտագործեք ըստ Ձեր հայեցողության: Կանգ առ՝ իրահանգով դադարեցրեք աշխատանքը: Նկարելու համար տրամադրվում է 60 վայրկյան»: Աշխատանքի ավարտից հետո հետազոտվողին խնդրում են ինքնահաշվետվություն տալ և դրա համար տրվում է հետևյալ հարցը. «Ձեզ դ՞ուր եկավ առաջադրանքը: Ի՞նչ զգացումներ էիք ունենում այն կատարելու ժամանակ»:

**Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

**Երևակայության բարդության մակարդակի որոշում.**


Երևակայության բարդությունը որոշվում է երեք նկարներից ամենաբարդի վերլուծությամբ, որը հնարավորություն է տալիս առանձնացնել բարդության հինգ մակարդակ:

**Առաջին մակարդակ.** Երկրաչափական պատկերը օգտագործվում է որպես նկարի հիմնական դետալ, նկարն ինքնին պարզ է՝ առանց հավելյալ մասերի և իրենից ներկայացնում է մեկ ֆիգուր:

**Երկրորդ մակարդակ.** Երկրաչափական պատկերը օգտագործվում է որպես նկարի հիմնական դետալ, սակայն նկարն ունի հավելյալ մասեր:

**Երրորդ մակարդակ.** Երկրաչափական պատկերը օգտագործվում է որպես նկարի հիմնական դետալ, սակայն նկարը իրենից որոշակի սյուժե է ներկայացնում՝ ընդ որում ներմուծված են հավելյալ դետալներ:

**Չորրորդ մակարդակ.** Երկրաչափական պատկերը շարունակում է օգտագործվել որպես նկարի հիմնական դետալ, սակայն նկարն արդեն բարդ սյուժե է՝ ավելացված ֆիգուրներով և դետալներով:



Նկար 1

**Հինգերորդ մակարդակ.** Նկարը բարդ սյուժե է, որում երկրաչափական պատկերը օգտագործվում է որպես հերթական և ոչ հիմնական դետալ:

Նշված օրինաչափությունները առավել վառ ներկայացված են նկար 1-ում:


**Երևակայության ճկունության և պատկերացումների ֆիքսվածության աստիճանի որոշում.**

Երևակայության ճկունությունը կախված է պատկերացումների ֆիքսվածությունից: Այն որոշվում է այն նկարների քանակով, որոնք պատկերված են նույն սյուժեի սահմաններում:

**Երևակայությունը համարվում է ճկուն,** եթե երեք նկարներում էլ պատկերված են իրարից տարբերվող երեք սյուժեներ և ընդգրկում են երկրաչափական պատկերի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասերը:

**Ֆիքսվածությունը թույլ է և երևակայությունը միջին ճկունության,** եթե նկարներից երկուսը նույն սյուժեի սահմաններում են:

**Ուժեղ ֆիքսվածության կամ էլ երևակայության ռիգիդության** մասին են վկայում նույն սյուժեի սահմաններում նկարված երեք նկարները:



Ճկուն երևակայություն



Երևակայության միջին ճկունություն



Երևակայության ռիգիդություն



Երևակայության ռիգիդություն ֆիքսվածության բացակայությամբ

Նկար 2

Երևակայության ռիգիդություն հնարավոր է մաս ֆիքսվածության բացակայության պարագայում, երբ հետազոտվողի ուշադրությունը կենտրոնանում է երկրաչափական պատկերների միայն մեքին մակերեսի վրա:

Նշված օրինաչափություններն առավել վառ ներկայացված են նկար 2-ում:

**Երևակայության կարծրատիպության աստիճանի որոշում.**

Կարծրատիպությունը որոշվում է նկարների բովանդակությամբ:

Տիպիկ, կարծրատիպ բովանդակությամբ նկարներ են համարվում.

**Շրջանի պատկերով նկարված՝** արև, ծաղիկ, մարդ, մարդու կամ կենդանու դեմք, ժամացույց, անիվ, գլուխ, ձմեռարդ:

*Եռանկյունու պատկերով նկարված.* մարդ եռանկյունու գլխով կամ մարմնով, տուն կամ տան տանիք, բուրգ, մամակ, ճանապարհային նշան:

*Քառակուսու նկարով նկարված.* քառակուսի գլխով կամ մարմնով մարդ, ռոբոտ, հեռուստացույց, տուն, պատուհան, ակվարիում, անձեռոցիկ, մամակ:

Կարծրատիպության մակարդակը կարելի է տարբերակել ըստ համապատասխան մակարդակների: Երևակայությունը համարվում է կարծրատիպային, եթե երեք նկարներն էլ կարծրատիպային են:

### **Արդյունքների վերլուծությունը.**

Կարևոր է ստացված տվյալները համեմատել հետազոտվողի ինքնահաշվետվության տվյալների հետ: Առաջնահերթ պետք է ուշադրություն դարձնել երևակայության ռիզիկոյամբ առանձնացող հետազոտվողներին: Այն կարող է սթրեսների և աֆեկտների հետևանք լինել: Հաճախ, բայց որ միշտ, պատկերների ներսում իրենց նկարները կառուցող անձինք ունեն որոշակի հոգեբանական խնդիրներ: **Այդպիսի նկարները չեն քննարկվում խմբում:** Հետազոտող-դասախոսը, որպեսզի եմթադրվող ախտորոշմամբ չվնասի ուսանողի հոգեկան կայունությունը, ինչ-որ պատճառ գտնելով՝ խորհուրդ է տալիս դիմել բուհի հոգեբանական ծառայություն՝ հատուկ հոգեդիագնոստիկ հետազոտության համար:

Երևակայության հինգերորդ մակարդակի բարդություն ունեցող կարծրատիպության բացակայությամբ և ճկունությամբ առանձնացող անձինք, սովորաբար, ընդունակ են իրականացնելու գեղարվեստական գործունեություն:

Տեխնիկական գիտություններ, տրամաբանության կամ փիլիսոփայության հակվածություն ունեցող անձինք նկարում են որոշ արտաբնականներ կամ երկրաչափական պատկերներ:

Ի տարբերություն վերջիններից, հումանիտար ուղղվածությամբ անձինք նախընտրում են նկարել մարդկային գործունեությանը առընչվող սյուժեներ, մարդկանց, դեմքեր և մարդանման առարկաներ:

**Աղբյուր.** Пашукова Т. И., Допира А. И., Дьяконов Г. В. (сост.) - Практикум по общей психологии для студентов педагогических вузов Учеб. пособие. - М., 1996.

### **3.5 «Ֆիզուրների լրանկարում»**

*Դյաչենկոյի մեթոդիկան*

**Նպատակը.** մեթոդիկան ուղղված է բացահայտելու երևակայության, յուրահատուկ պատկերներ ստեղծելու ընդունակությունների զարգացման մակարդակը:

**Առաջադրանքի նյութերը.** քարտերի մեկ հավաքակազմ, որոնցից յուրաքանչյուրի վրա պատկերված է անորոշ ձևի մեկ պատկեր: Յուրաքանչյուր հավաքակազմի մեջ ընդգրկվում են 10 քարտ-պատկերներ: Մշակվել են այդպիսի պատկերների երկու հավաքակազմեր: Տես հավելված 33:

### **Հրահանգ.**

«Այժմ Դուք պետք է լրանկարեք առաջարկված պատկերներն այնպես, որ ստացվի որոշակի նկար»: Առաջին պատկերն ավարտելուց հետո փորձարկողը հարցնում է. «Ի՞նչ է ստացվել»: Պատասխանը ֆիքսվում է: Ապա հետազոտվողին տրվում է հաջորդ պատկերը:

### **Աշխատանքի իրականացման ընթացքը**

Մեկ հետազոտության ընթացքում առաջարկվում է հավաքակազմերից որևէ մեկը, մյուսը կարող է օգտագործվել կրկնակի հետազոտման ժամանակ:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Արդյունքների վերլուծության ժամանակ հաշվվում է յուրահատկության գործակիցը ( $Q_n$ )՝ չկրկնվող նկարների քանակությունը: Մի անման են համարվում այն նկարները, որոնցում պատկերը վերածվում է նույն տարրին: Օրինակ, քառակուսիի և եռանկյունիի վերածումը հեռուստացույցի էկրանին համարվում է կրկնություն և այդ երկու նկարներն էլ չեն հաշվվում: Ապա նույն պատկերից խմբում յուրաքանչյուրի նկարը համեմատվում է մյուսների նույն նկարների հետ: Եթե երկու հետազոտվող քառակուսի վերածել են հեռուստացույցի էկրանի, ապա այդ նկարը հետազոտվողներից ոչ մեկին չի հաշվվում: Այսպիսով  $Q_n$ -ն հավասար է և նույն հետազոտվողի մոտ և ողջ խմբում չկրկնվող նկարների քանակին: Առավել արդյունավետ է համադրել 20-25 հետազոտվողների արդյունքներ:



Արդյունքների վերլուծության հաջորդ փուլում հաշվվում է խմբային  $Q_{\text{ը}}$ -ն և համեմատվում են անհատական և խմբային ցուցանիշները:

**Ցածր արդյունք** է համարվում, երբ անհատական  $Q_{\text{ը}}$ -ն 2 և ավելի միավորով ցածր է խմբային ցուցանիշից: **Միջին մակարդակը** խմբային միջինին հավասար կամ նրանից մեկ միավոր պակաս և ավելի ցուցանիշներն են: Անհատական  $Q_{\text{ը}}$ -ի **բարձր ցուցանիշը** խմբայինից երկու և ավելի միավորով ավել արդյունքներն են:

Քանակական ցուցանիշներից բացի հնարավոր է նաև որակական վերլուծություն:

Կարելի է առանձնացնել որակական վերլուծության արդյունքների հետևյալ մակարդակները:

**Ցածր մակարդակ** - հետազոտվողը չի հասկանում խնդիրը. կամ նկարում է պատկերի կողքը կամ նկարում է անառարկայական նկարներ:

**Միջին մակարդակ** - հետազոտվողները լրանկարում են պատկերները, սակայն բոլոր նկարները սխեմատիկ են, առանց դետալների: Շատ են հանդիպում կրկնվող նկարներ:

**Բարձր մակարդակ** - հետազոտվողները նկարում են դետալիզացված, որպես կանոն, յուրահատուկ նկարներ: Առաջարկված պատկերը, որպես կանոն, ստեղծված նկարի կենտրոնական տարրն է:

**Աղբյուր.** *Дьяченко О. М., Развитие воображение дошкольника. Монография-Синтез, 2008, с. 128.*

### 3.6 ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԽԻՐՈՒՄ

**Աշխատանքի նպատակը.** որոշել երևակայության արդյունավետության մակարդակը:

**Առաջադրանքի նյութերը.** Ռորշախի թեստի սև-սպիտակ նկարները 9x12 չափի, թուղթ և գրիչ:

#### Աշխատանքի իրականացման ընթացքը

Այս փորձն արդյունավետ է անցկացնել 5-7 հոգուց բաղկացած հետազոտողների խմբի կամ էլ մեկ հոգու հետ: Հետազոտվողին հաջորդաբար ներկայացվում են Ռորշախի թեստի նկարները և խնդրում տալ

ինչքան հնարավոր է շատ մեկնաբանություններ: Յուրաքանչյուր նկարի մեկնաբանման ժամանակը և քանակը չի սահմանափակվում: Մեկնաբանման գործընթացը դադարում է նրանից հետո, երբ հետազոտվողն այլևս չի կարող տեսնել և արտահայտել նոր մտքեր և սկսում է կրկնվել կամ հրաժարվում է շարունակել: Փորձի ընթացքում փորձարկողը ֆիքսում է բոլոր զուգորդումները և յուրաքանչյուր նկարի մեկնաբանման ժամանակը ազատ ձևի արձանագրությունում:

**Հրահանգ.** «Նայեք այս նկարին և ասեք, ի՞նչ է այս, ի՞նչի՞ է այն մասն կամ ի՞նչ կարող է այն լինել: Նկարը կարող էք դիտարկել տարբեր կողմերից»: Եթե հետազոտվողը փորձի ընթացքում փորձում է գտնել «ճիշտ» պատասխանը, ապա նրան պետք է ասել, որ պատասխանները տարբեր են և կարևոր է պատկերվածի սեփական դիտարկումը ինչպես ամբողջի, այնպես էլ դետալների:

#### Արդյունքների մշակումը

Արդյունքների մշակման նպատակը արդյունավետության ինդեքսի արտածումն է որպես երևակայության ակտիվության և քանակական բնութագրի չների ցուցանիշ: Դրա համար հաշվվում է զուգորդումների ընդհանուր քանակությունը և բաժանվում է ներկայացված նկարների թվի վրա: Հավաքից № 5 նկարը մախընտրելի է հանել, քանի որ հետազոտվողների մոտ այս նկարի զուգորդումների քանակը, որպես կանոն, ցածր է վիճակագրական ցուցանիշից:

Արդյունավետության գործակիցը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով.

$$K = \frac{E}{n},$$

**K** - երևակայության արդյունավետության գործակիցը,

**E** - զուգորդումների ընդհանուր քանակը,

**n** - փորձում մեկնաբանված նկարների քանակը:

#### Արդյունքների վերլուծությունը

Երևակայության արդյունավետության մակարդակը որոշում են աղյուսակ 29-ի համաձայն.

Կ	Երևակայության արդյունավետության մակարդակը
0-2	ցածր
3-9	միջին
10-12	բարձր
13 և բարձր	շատ բարձր

Արդյունքների վերլուծության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել նրան, թե ինչքանով է հետազոտվողը հետաքրքրված փորձով: Երբեմն, հետազոտման ենթարկվելու թույլ ցանկության պատճառով կամ որ նկարները հետազոտվողին «դուր չեն եկել» երևակայության արդյունավետությունը նվազում է:

Երևակայության արդյունավետության շատ բարձր մակարդակ ունեցող անձանց մոտ հնարավոր են գեղարվեստական ստեղծագործության հակումներ և ընդունակություններ:

**Աղբյուր.** Пашукова Т. И., Доппира А. И., Дьяконова Г. В. (сост.) – Практикум по общей психологии для студентов педагогических вузов. Учеб. пособие. - М.: Издательство "Институт практической психологии", 1996.

## ԵՐԵՎԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

### 3.7 ԿԱՆԱՐԴԱԿԱՆ ԱՅԳԻ

**Նպատակը.** հիշողության, պատկերացումների ակտիվացում, երևակայության ձևավորում:

**Առաջադրանքի նյութերը.** պատի վրա փակցված ծաղիկների պանո, թղթից պատրաստված տարբեր ծաղիկներ, մագնիսոֆոն, «Տարվա եղանակներ» շարքից երաժշտություն, ֆլումայստերներ, գունավոր կավիճներ, թուղթ:

#### Աշխատանքի իրականացման ընթացքը

Աշխատանքն անցկացվում է 5-6 հոգանոց խմբում:

Պլանը.

1. Թուլացում-վարժանք:
2. Ծաղիկների մասին առկա գիտելիքների արդիականացում (մասնակիցները ընտրում են սիրած ծաղիկ և պատմում նրա մասին):
3. Երաժշտական ուղեկցությամբ հեքիաթի լսում (մասնակիցները նստում են փակ աքերով, փորձարկողը երաժշտության ուղեկցությամբ սկսում է պատմության ընթերցումը):
4. Բնութագրման և պատկերացման հիման վրա նկարչություն (Կավիճներով նկարվում են այն պատկերները, որոնք ընթերցվել են):
5. Մասնակիցների պատմությունը իրենց նկարների մասին:
6. Մասնակիցների աշխատանքի գնահատում:

Պլանը կարող է որոշակի սահմաններում փոփոխվել կախված փորձի թեմայից և մասնակիցների հոգեվիճակից:

**Աղբյուր.** <http://do.b1september.ru2001/01/4.htm> // Боровик О. Журнал Дошкольнообразование.

### 3.8 ՏԱՐՕՐԻՆԱԿ ՆԿԱՐ

**Նպատակը.** հակասությունների լուծման ճանապարհով սկզբնական ամբողջության վերափոխման ընդունակության զարգացման մակարդակի բացահայտում (ամբողջը մասերից շուտ տեսնելու ունակությունը):

**Առաջադրանքի նյութերը.** մարդու, արևի, լուսնի և աստղերի պատկերով նկար և մատիտ: Տես հավելված 34:

**Հրահանգ 1.** «Ուշադիր մայիր նկարին և ասա թե ինչ է այստեղ նկարված»:

**Հրահանգ 2.** «Ի՞նչ ես կարծում, ճիշտ է այն նկարված, թե նկարի չն ինչ-որ բան խառնել է: Կարո՞ղ է այդպես լինել»:

#### Աշխատանքի իրականացման ընթացքը:

Փորձը մախատեսված է ավագ մախադարոցական տարիքի երեխաների համար: Երեխային ներկայացվում է նկարը և տրվում առաջին հրահանգը: Եթե երեխան նկարը համարում է «սխալ», ապա փորձարկողը տալիս է երկրորդ հրահանգը և առաջարկում, բացատրել և ցույց տալ, թե ինչպես այն կարելի է «ճիշտ» դարձնել (մատիտի օգտագործումը պարտադիր չէ, եթե երեխան ինքը չի ցանկանում այն օգտագործել):

#### Արդյունքների մշակումն ու վերլուծությունը

Փորձի ընթացքում ֆիքսվում է երեխային մոտեցման առանձնահատկությունները խնդրում առկա հակասությամբ: Լուծումը գնահատվում է չորսբալանց համակարգով.

- երեխան նկարը համարում է «ճիշտ», անտեսելով դրանում առկա հակասությունները: **0 միավոր,**
- երեխան տեսնում է հակասությունը, սակայն չգիտի, թե ինչպես այն լուծել և դրանով իսկ ճշգրտել նկարը: **1 միավոր,**
- երեխան նկատում է հակասությունը և փորձում է այն լուծել ամբողջական պատկերի բաժանման ճանապարհով՝ մեկ նկարը բաժանելով երկուսի: Ընդ որում նա առաջարկում է զօնվ բաժանել մարդուն և երկնային մարմինները կամ նկարը բաժանել

այնպես, որ մեկում կհայտնվեն մարդը և արևը, մյուսում լուսինը աստղերով և հակառակը: Հնարավոր է պատասխանի ավելի պարզ տարբերակ՝ ջնջել կամ արևը կամ էլ լուսինը աստղերով: **2 միավոր,**

- երեխան առաջարկում է փոփոխել նկարն այնպես, որպեսզի նկարի որոշ տարրեր մնան նույնը, իսկ մյուսները վերածվեն սկզբունքորեն մորի, օրինակ՝ աստղերը դարձնել թռչուններ, լուսինը՝ զնդակ, արևը՝ թողնել նույնը, կամ թողնել լուսինը, իսկ արևը դարձնել լուսարձակ: **3 միավոր,**
- երեխան ստեղծագործաբար վերափոխում է ամբողջական նկարը: Նա առաջարկում է ընդգրկել «երկնային մարմինները» շրջանակի մեջ և դրանք կդառնան նկարներ այն տան պատերին, որտեղ ապրում է մարդը: Նույն ձևով արևը կարելի է դարձնել նկար, իսկ լուսինը և աստղերը պատուհանից դուրս տեսարան: Այս դեպքում երեխայի կողմից կազմվում է իրավիճակի ամբողջական կոնտեքստ: Հնարավոր են նաև այլ տարբերակներ: **4 միավոր:**

Հնարավոր է դեպք, երբ երեխան պնդի, որ հակասություն չկա և ինքը տեսել է երկնային մարմինները իրար հետ: Այս դեպքում նրա ուշադրությունը ափսոս է հրավիրել նրա վրա, որ արևի և լուսնի միջև տարածությունը չափազանց փոքր է:

**Աղբյուր.** <http://do.b1september.ru2001/01/4.htm> // *Боровик О. Журнал Дошкольнообразование.*

### 3.9 ԹԱՆԱՔԱՄԱՆԻ ԴԵՔԻԱԹԸ

(Ա. Վ. Զապորոժեցի մեթոդիկայի մոդիֆիկացիան)

**Նպատակը.** ծանոթ առարկայի յուրահատուկ հատկությունները մոր իրավիճակ տեղափոխելու ընդունակության գնահատումը:

**Առաջադրանքի նյութերը.** փորձարկողը հետազոտվողին կարողան է հեքիաթը: Տես հավելված 35:

### **Աշխատանքի իրականացման ընթացքը**

Աշխատանքն իրականացվում է ավագ նախադարձային տարիքի երեխաների հետ: Յեղիաթը պատմելուց հետո փորձարկողը տալիս է հարցը. «Կարո՞ղ է այդպես լինել: Կարո՞ղ է թանաքամանը հաչալ»: Եթե երեխան բացասական պատասխան է տալիս, ապա տրվում է հաջորդ հարցը. «Լավ, իրականում թանաքամանը հաչալ չի կարող, իսկ հեքիաթում՝ կարո՞ղ է»: Դրական պատասխան ստանալու պարագայում, փորձարկողը ասում է հետևյալը. «Իհարկե, հեքիաթում ամեն ինչ հնարավոր է: Եվ եթե այդպես է, ապա էլ ինչ ձևով թանաքամանը կարող է քշել չար հանցագործին և փրկել բարի բժշկի տունը: Փորձիր մտածել հեքիաթի նոր վերջաբան»:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Փորձի արդյունքում ֆիքսվում են պատասխանների տեսակները, որոնք զնահատվում են չորս բալանոց համակարգով:

**1 միավոր:** Պատասխանների այս տարբերակը ենթադրում է երկու տարատեսակ:

- Թանաքամանը ոչ միայն չի կարող հաչել և փախցնել հանցագործին, այլև ոչինչ չի կարող անել տան պահպանության համար: Դրա համար պետք է պահակ կամ շուն: Երեխաները կարող են պնդել իրենց պատասխանի վրա, եթե նույնիսկ փորձարկողը պնդում է, որ թանաքամանը հեքիաթային է:
- Երեխան կարծում է, որ թանաքամանը կարող է հաչալ և քշել հանցագործին, քանի որ «հեքիաթում ամեն ինչ հնարավոր է»: Առաջնորդվելով նույն սկզբունքով երեխաները պնդում են, որ թանաքամանը կարող է կծել, վիրավորել հանցագործին և այլն:

**2 միավոր:** Երեխայի կարծիքով թանաքամանը հաչալ չի կարող: Սակայն նրանում կարող է թաքնվել ինչ-որ կենդանի էակ (օրինակ՝ փոքրիկ մարդուկ, թզուկ), որը դուրս կգա միջից և կվախեցնի հանցագործին:

**3 միավոր:** Երեխան ստեղծագործաբար իրեն հայտնի առարկայի հատկությունը տեղափոխում է նոր իրավիճակ: Նրա կարծիքով թանաքամանը հաչալ չի կարող, այն պետք է հանցագործին ողողի թանաքով և այդ դեպքում վերջինս կվախենա և կփախչի:

**4 միավոր:** Խնդրի լուծման ստեղծագործական բարձրագույն ձև՝ իրավիճակի զարգացում տեղափոխվող հատկության հիմքի վրա. թանաքամանը թանաքը թափում է գետնին, հանցագործը կեղտոտում է

ոտքերը և հետքեր թողնում, նրա հետքերով հետո հեշտ է լինում նրան գտնել: Կամ թանաքամանը նկարում է շուն (զանգ, ոսկորներ և այլն), որը կկծի, կվախեցնի հանցագործին կամ էլ նամակ կգրի բժշկին, որպեսզի նա շուտ հետ վերադառնա և այլն:

- Ժամանակակից որոշ երեխաներ կարող են չիմանալ, թե ինչ է թանաքամանը: Այս դեպքում երեխային պետք է բացատրել, որ այն տարա է, որում լցվում է թանաքը:
- Այնտեղ, որտեղ երեխան «կանգնում է» առաջին մակարդակի լուծումների վրա, փորձարկողը կարող է հարցնել. «Իսկ էլ ինչպես թանաքամանը կարող է վախեցնել հանցագործին, եթե չի աչի, չկծի»:

**Աղբյուր.** <http://dob.1september.ru/2001/09/2.htm> // *Кудрявцев В., Журнал Дошкольное образование*.

### **3.10 ԱՂՋԻԿ, ԹԵ՞ ՏՂԱ (Կ. Դունկերի մեթոդիկայի մոդիֆիկացիան)**

**Նպատակը.** ընտրության իրավիճակում մտային փորձի ընդունակության զննատուր:

**Առաջադրանքի նյութերը.** հետազոտվողին պատմվում են համապատասխան պատմություններ: Տես հավելված 36:

**Աշխատանքի իրականացման ընթացքը.** Փորձն իրականացվում է կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հետ: Պատմությունը ընթերցելուց հետո երեխային հարցնում են, թե ինչպես այն կարող են ստուգել և փարատել իրենց կասկածները.

- խաղալիքների խանութի վաճառողը,
- բակում խաղացող երեխաները,
- դպրոցի ուսուցիչը,
- երեխայի մայրը:

### **Արդյունքների մշակումն ու վերլուծությունը**

Փորձի ընթացքում գրանցվում են առաջադրանքի իրականացման միջոցները, որոնք զննատուր են երկրպալանոց համակարգով.

- պատասխանի բացակայություն - **0 միավոր,**
- խնդրի լուծման փորձերը ուղիղ (փորձարարական) ճանապարհով՝ ուշադիր նայել, հանել թաշկինակը - **1 միավոր,**
- խնդրի լուծումը միջնորդավորված (փորձարարական) ճանապարհով. մոդելավորել պայմաններ, որոնցում նշանակալի հատկությունները կարող են վառ արտահայտվել: Վաճառողը կարող է առաջարկել արագ հանել և հագցնել տիկնիկի շորերը, երեխաները՝ խաղալ աղջկական խաղ, ուսուցիչը՝ նստել և պատուհանից նայել դրսում ֆուտբոլ խաղացող տղաներին, մայրը՝ օգնել ճաշ պատրաստել կամ լվանալ ավիսենները և այլն - **2 միավոր:**

**Աղբյուր.** <http://dob.1september.ru/2001/09/2.htm> // *Кудрявец В., Журнал Дошкольное образование.*

## **ՀԱՎԵԼՎԱԾ**

*«Ինացական գործընթացների պրակտիկում»  
ուսումնամեթոդական ձեռնարկի*

Հավելված 1

Կարճատև հիշողության ծավալի չափման Ջեկոբսի մեթոդի առաջադրանքի նյութերը

<i>Առաջին տարբերակ</i>
<b>1-ին փուլ</b> 3 4 9 1 1 9 7 7 5 1 9 8 5 7 2 2 5 8 1 7 8 4 7 9 1 8 4 7 5 3 9 9 5 1 3 1 7 8 4 3 4 6 1 1 9 5 7 2 4
<b>2-րդ փուլ</b> 6 5 7 8 8 3 5 8 2 6 6 1 5 8 4 5 1 9 7 5 6 8 1 7 5 6 3 7 8 9 6 3 4 8 2 3 4 5 6 5 8 4 2 3 5 4 1 8 9
<b>3-րդ փուլ</b> 9 8 1 6 2 7 6 3 8 8 4 6 7 8 3 7 8 6 4 3 7 9 5 6 7 8 3 8 3 5 7 5 1 3 4 9 8 6 7 4 3 2 8 7 4 1 2 9 5
<b>4-րդ փուլ</b> 6 4 8 7 3 7 3 6 2 4 1 9 6 1 9 4 5 7 1 9 3 5 7 8 8 9 1 9 3 5 9 6 7 5 9 8 2 3 4 9 5 1 3 5 7 6 4 2 8

<i>Երկրորդ տարբերակ</i>
<b>1-ին փուլ</b> 9 9 5 1 3 1 7 8 2 7 4 8 1 9 7 8 7 1 8 5 2 7 5 9 8 3 4 9 8 2 7 3 4 9 6 5 2 7 6 6 1 5 8 4 5 1 9 7 5
<b>2-րդ փուլ</b> 6 8 1 7 5 5 9 3 7 1 5 9 8 3 4 2 7 6 4 3 8 1 7 1 9 3 5 4 6 7 6 7 2 9 4 6 1 8 2 3 5 5 3 9 7 1 6 2 8
<b>3-րդ փուլ</b> 5 2 3 6 1 5 9 6 3 7 4 6 2 8 1 5 2 7 3 6 4 6 2 9 6 4 3 7 6 1 1 6 4 9 3 7 5 1 2 4 7 5 9 1 6 9 3 2 8
<b>4-րդ փուլ</b> 7 4 1 6 7 4 9 5 1 4 2 9 3 7 1 5 9 7 1 6 4 3 6 4 9 3 5 1 6 8 2 5 8 3 6 9 1 5 9 5 2 9 3 7 1 6 5 4 9

Հավելված 2








Օպերատիվ հիշողության առանձնահատկությունների ու սուսնասիրման առաջադրանքի նյութերը

<i>Առաջադրանքի նյութ (առաջին տարբերակ)</i>	Բանալի
5, 2, 7, 1, 4	7, 9, 8, 5
3, 5, 4, 2, 5	8, 9, 6, 7
7, 1, 4, 3, 2	8, 5, 7, 5
2, 6, 2, 5, 3	8, 8, 7, 8
4, 3, 6, 1, 7	7, 9, 7, 8
4, 2, 3, 1, 5	6, 5, 4, 6
3, 1, 5, 2, 6	4, 6, 7, 8
2, 3, 6, 1, 4	5, 9, 7, 5
5, 2, 6, 3, 2	7, 8, 9, 5
3, 1, 5, 2, 7	4, 6, 7, 9

<i>Առաջադրանքի նյութ (երկրորդ տարբերակ)</i>	Բանալի
4, 5, 1, 7, 2	9, 6, 8, 9
8, 1, 6, 3, 4	9, 7, 9, 7
6, 3, 4, 5, 2	9, 7, 9, 7
7, 2, 6, 3, 5	9, 8, 9, 8
4, 3, 6, 2, 5	7, 9, 8, 7
1, 7, 2, 3, 1	8, 9, 5, 4
2, 5, 3, 4, 5	7, 8, 7, 9
7, 1, 8, 1, 6	8, 9, 9, 7
4, 2, 6, 1, 7	6, 8, 7, 8
5, 2, 7, 1, 4	7, 9, 8, 5

















Հավելված 3

Ոչ կամաժին մտապահման և նրա արդյունավետության ուսումնասիրության առաջադրանքի նյութերը

 39	 17	 26	 92
 23	 72	 38	 54
 43	 99	 14	 65
 51	 62	 47	 89

Հավելված 4

Կամաժին և ոչ կամաժին մտապահման արդյունավետության հետազոտության (Պ. Ի. Ջինգենկոյի մեթոդիկա) առաջադրանքի նյութերը



Անմիջական և միջնորդափորված մտապահման ուսումնասիրման  
առաջադրանքի նյութերը

*Առաջին տարբերակ*

*Առաջին փուլ.*

Թմբուկ, արևածագ, արծակ, տեր, խաղալիք, սաղմ, փական, գիրք, ավել, մկրատ, ջերմաչափ, անձրև, լամպ, ինքնաթիռ, քամի, հաց, նորույթ, բանջարեղեն, օրացույց, պատուհան:

*Երկրորդ փուլ.*

Կաթ-սերուցք, կեղև-ծառ, ձմեռ-ձյուն, տուն-խրճիթ, ծով-ալիք, արջ-որջ, խոհարար-խոհանոց, մուրճ-կացին, ընկերություն, լար-կիթառ, առտու-երակ, դրամապանակ-ճամպրուկ, մոմ-լամպ, եղամ-ցող, ատուխ-վառարան, աչքեր-դեմք, կոնֆետ-շոկոլադ, ամուսին-տղամարդ, վեպ-պատմվածք, տերև-բողբոջ:

*Երկրորդ տարբերակ*

*Առաջին փուլ.*

Չմերուկ, քանոն, սառնամանիք, տազնապ, սրբապատկեր, ցավ, կաղնի, քաղցրեղեն, գիրք, ժամացույց, մարտկոց, դատավոր, կարիք, աղբ, խնձոր, բանկիր, նավակ, պսակ, գարուն, փայտփորիկ:

*Երկրորդ փուլ.*

Արվեստ-նկարիչ, կոճակ-հագուստ, սանրվածք-մազեր, ավի-ծով, անձրև-ծիածան, հուզմունք-զգացմունք, կոնֆետ-շատակեր, հյուս-խմիչք, դուռ-մուտք, ջուր-բաժակ, թել-ասեղ, բույս-ծաղիկ, ավել-աղբաման, գրիչ-թուղթ, կաղնի-ծառ, արև-երկինք, մեքենա-ավտոբուս, կահույք-դուռ, թախիծ-տխրություն, բուրդ-իլիկ:

Ստապահման վրա նյութի իմաստավորվածության ազդեցության  
ուսումնասիրման առաջադրանքի նյութերը

*Առաջին տարբերակ*

*15 անիմաստ վանկեր:*

վի, ռե, նի, ռա, տի, հո, սե, լե, պո, դո, վո, լյու, ռե, վա, տե:

*15 իրար հետ իմաստային կապ չունեցող բառեր:*

Դադար, գուլպա, հարկ, մեքենա, կոնֆետ, ցուրտ, կաթ, դարակ, աշուն, լուսամփոփ, ճեղք, ալիք, թզուկ, որբ, ցախ:

*15 իմաստով իրար հետ կապված բառեր:*

Աշակերտ, քանոն, գրատախտակ, ուսուցիչ, գնահատական, մատարան, գրիչ, օրագիր, պայուսակ, մատյան, գերազանցիկ, դպրոց, ցուցափայտ, զանգ, տետր:

*Երկրորդ տարբերակ*

*15 անիմաստ վանկեր:*

Ջի, լյա, ռի, մո, պա, գի, կա, դո, լու, մյա, տա, վի, լե, նո, դի:

*15 իրար հետ իմաստային կապ չունեցող բառեր:*

Բորան, բաժակ, բադ, գիրք, հիացմունք, արև, ընկեր, գիշեր, չարություն, կառք, բարդի, խանդ, դույլ, անդունդ, խորհուրդ:

*15 իմաստով իրար հետ կապված բառեր:*

Անտառ, սունկ, աղվես, բացատ, խոտ, տերև, ուռենի, անտառապահ, ոզնի, սարդոստայն, մամուռ, մրջնաբույն, ելակ, սկյուռ, բարդի:

**Հավելված 7**

**Հիշողության մեջ նյութի պահպանման վրա ազդող գործոնների ու սուսնասիրման առաջադրանքի նյութերը**

*15 իմաստով իրար հետ չկապված բառեր*

հողմ, բաժակ, բադ, խավար, գիրք, համազգեստ, արև, դպրոց, ջուր, չարություն, ավագ, գաթա, պատերազմ, հպարտություն, կիտրոն:

*7 գույգ երկնի թվեր*

12 և 11, 15 և 10, 13 և 13, 14 և 11, 17 և 10, 20 և 21, 21 և 11:

*10 իմաստով իրար հետ չկապված բառեր*

ճառագայթ, մեղր, եղևնի, ամիս, պատառաքաղ, գետ, դուռ, աստղ, գոտի, սկահակ:

**Հավելված 8**

**Անձի դիրքորոշումներից մտապահման կախվածության ու սուսնասիրման առաջադրանքի նյութերը**

*Առաջին տարբերակ*

*Առաջին փուլ.*

Փայտ, հոսք, վերք, գորք, միտք, արոտ, լույս, խոսք, կամք, տոմս, բույս, գորշ, դեմք, կրոն, սվին, հնոց, մղոն, երագ, անոթ, ձյուն:

*Երկրորդ փուլ.*

Կանթ, հնոց, վագր, ալոճ, հուճք, գրող, մուրճ, խմոր, լամպ, ամոթ, ճյուղ, աթոռ, ավագ, կոնք, հիմք, նորք, ձյուն, ոգնի, նշան, զորք:

*Երկրորդ տարբերակ*

*Առաջին փուլ.*

Արեգ, որակ, հանդ, սղոց, դեմք, խոսք, թխկի, ծնոտ, զարդ, ակոս, քամք, սղոց, շուրթ, որակ, կզակ, քանոն, բզեզ, արոտ, հոանք, բողկ:

*Երկրորդ փուլ.*

Բարձ, հնոտի, գույն, դրոշ, լամպ, տորթ, խունկ, ցոլք, խմոր, ծախս, ազոտ, բույս, փոշի, բերդ, գրոշ, հույս, խոսք, երագ, ալոճ, թզուկ:

**Հավելված 9**

**Մտապահման վրա նյութի հուզականության և նշանակալիության ազդեցության առաջադրանքի նյութերը**

կամուրջ, ցախ, կոնսպեկտ, աթոռ, քննություն, սեր, ձյուն, դասախոս, տառ, ծառ, ընտանիք, պատուհան, կոճգամ, դասախոսություն, աշխատանք, ճանապարհ, արցունք, ավագ, աշխատավարձ, ջուր, փող, դասագիրք, մեղու, քար, դեկավար:

**Հավելված 10**

**Ակտիվ վերարտադրման և ճանաչման գործընթացների համեմատության առաջադրանքի նյութերը**

*Առաջին շարք.*

Հողմ, բաժակ, բադ, խավար, գիրք, ափսե, հիացմունք, որս, թիվ, արև:

*Երկրորդ շարք.*

Մթություն, քանոն, հողմ, շոգ, բաժակ, բադ, գաթա, ճաշ, խավար, ամոթ, գիրք, ափսե, միտք, մահ, համազգեստ, հիացմունք, որս, օրացույց, թիվ, արև:


*Երրորդ շարք.*

Վառող, ոսպ, փոթորիկ, օրացույց, ջրհոր, ամպ, գրիչ, ճանապարհ, զայրույթ, երգ, ծով, աշուն, հյուր, ճնճղուկ, մոմ:


*Չորրորդ շարք.*

Հավատարմություն, ճանապարհ, զգացմունք, ալիք, աշուն, սիրտ, փոթորիկ, մոմ, բարիք, սոսիմձ, երգ, ձնծաղիկ, կենդանի, ամպ, ճնճղուկ, նախանձ, գրիչ, ամուսնություն, օրացույց, ծով, հուր, զայրույթ, հիմարություն, հյուր, անտառ, վառող, ոսպ, ցախ, ջրհոր, լիճ:

**A ճատրից**



**B ճատրից**



**C ճատրից**

	1	2	3	4
ա				
բ				
գ				
դ				
ե				



**Հավելված 15**

**Ընթերցման թեստի հարցերը**

1. Ո՞ւր էր ուղղորդվում գնացքը:
2. Ո՞ր վագոններն էին ավելի շատ՝ գինով թե դիզելային վառելիքով:
3. Գինով քանի՞ ցիստեռն էր վնասվել:
4. Ի՞նչն էր ավելի շատ թափվել՝ գինի, թե դիզելային վառելիք:
5. Ընդամենը քանի՞ վագոն կար:
6. Օրվա ո՞ր ժամանակ էր տեղի ունեցել վթարը:
7. Ո՞վ էր տուժել վթարի արդյունքում:

**Հավելված 16**

**Լաչինի «Նախկին փորձի ազդեցությունը խնդրի լուծման միջոցի վրա» մեթոդիկայի առաջադրանքի նյութերը**

**Բլանկ 1**

- № 1 Տրված են երեք տարաներ՝ 37, 21 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:
- № 2 Տրված են երեք տարաներ՝ 37, 24 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 3 Տրված են երեք տարաներ՝ 39, 22 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 13 լիտր:
- № 4 Տրված են երեք տարաներ՝ 38, 25 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 5 Տրված են երեք տարաներ՝ 29, 14 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 11 լիտր:
- № 6 Տրված են երեք տարաներ՝ 28, 14 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:
- № 7 Տրված են երեք տարաներ՝ 27, 12 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 8 Տրված են երեք տարաներ՝ 30, 12 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 15 լիտր:
- № 9 Տրված են երեք տարաներ՝ 28, 7 և 5 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 12 լիտր:
- № 10 Տրված են երեք տարաներ՝ 26, 10 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:

Լուծման ժամանակ: \_\_\_\_\_ «Ռ» \_\_\_\_\_ «Ռ» \_\_\_\_\_

**Բլանկ 2**

- № 1 Տրված են երեք տարաներ՝ 26, 10 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:
- № 2 Տրված են երեք տարաներ՝ 28, 7 և 5 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 12 լիտր:
- № 3 Տրված են երեք տարաներ՝ 30, 12 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 15 լիտր:
- № 4 Տրված են երեք տարաներ՝ 27, 12 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 5 Տրված են երեք տարաներ՝ 28, 14 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:
- № 6 Տրված են երեք տարաներ՝ 29, 14 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 11 լիտր:
- № 7 Տրված են երեք տարաներ՝ 38, 25 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 8 Տրված են երեք տարաներ՝ 39, 22 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 13 լիտր:
- № 9 Տրված են երեք տարաներ՝ 37, 24 և 2 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 9 լիտր:
- № 10 Տրված են երեք տարաներ՝ 37, 21 և 3 Լ տարողությամբ. Ինչպես ստանալ 10 լիտր:
- Լուծման ժամանակ: \_\_\_\_\_ «Ռ» \_\_\_\_\_ «Ռ» \_\_\_\_\_

**Հավելված 17-1**

Մտածողության վերլուծականության ուսումնասիրման առաջադրանքի նյութերը

№	Թվային շարքեր
1.	2 4 6 8 10 12 14 ... ..
2.	6 9 12 15 18 21 24 ... ..
3.	3 6 12 24 48 96 192 ... ..
4.	4 5 8 9 12 13 16 ... ..
5.	22 19 17 14 12 9 7 ... ..
6.	39 38 36 33 29 24 18 ... ..
7.	16 8 4 2 1 1/2 1/4 ... ..
8.	1 4 9 16 25 36 49 ... ..
9.	21 18 16 15 12 10 9 ... ..
10.	3 6 8 16 18 36 38 ... ..
11.	12 7 10 5 8 3 6 ... ..
12.	2 6 9 27 30 90 93 ... ..
13.	8 16 9 18 11 22 15 ... ..
14.	7 21 18 6 18 15 5 ... ..
15.	10 6 9 18 14 17 34 ... ..

**Հավելված 18**

Մտածողության ռեֆլեքսիվության ուսումնասիրման առաջադրանքի նյութերը

	Անագրամներ
1.	թ ա ռ ռ
2.	ի հ ք մ
3.	ա ծ ք լ
4.	ե մ ք ղ
5.	ա մ դ ռ
6.	ե ս յ ն կ ա
7.	խ լ ռ ա ն ա
8.	ա բ ա ն ի լ
9.	ն հ մ ա շ ա
10.	ն ա պ ա տ ա
11.	ա մ ը յ մ ա տ ու
12.	ն ա ա հ բ մ ռ ե
13.	ն ա ա տ ա դ դ ն
14.	ն հ ա գ յ մ կ ա
15.	ու լ ա ս տ տ կ ի

**Հավելված 17-2**

Մտածողության վերլուծականության ուսումնասիրման արդյունքների վերլուծության բանալին

Շարքի համարը	Շարքի շարունակությունը	Շարքի համարը	Շարքի շարունակությունը
1.	16; 18	9.	6; 4
2.	27; 30	10.	76; 78
3.	384; 768	11.	1; 4
4.	17; 20	12.	279; 282
5.	4; 2	13.	30; 23
6.	11; 3	14.	15; 12
7.	1/8; 1/16	15.	30; 33
8.	64; 81		

**Հավելված 19**

Խնդրի համարը	Արդյունավետությունը	Լուծման ժամանակը	Քայլերի քանակը
1			
2			
...			
10			
Միջինը %			

**Չրահանգ 1**

5 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի ստացվեն երկու քառակուսիներ:



**Չրահանգ 2**

3 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի ստացվեն 5 հավասար եռանկյուններ:




**Չրահանգ 3**

3 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի ստացվեն 5 հավասար քառակուսիներ:



**Չրահանգ 4**

4 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի «տուն» ստացվի:




**Չրահանգ 5**

Լուցկու հատիկներից կազմված խեցգետինը վերև է սողում: 3 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի նա ներքև սողա:




**Չրահանգ 6**

Տեղաշարժեք 6 լուցկու հատիկ այնպես, որպեսզի ստացվեն 4 հավասար եռանկյուններ:



**Հրահանգ 7**

5 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի կշեռքը հայտնվի հավասարակշռության վիճակում:



**Հրահանգ 8**

4 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի ստացվեն 15 քառակուսիներ:



**Հրահանգ 9**

5 լուցկու հատիկ տեղաշարժեք այնպես, որպեսզի ստացվեն 3 քառակուսիներ:



**Հրահանգ 10**

2 լուցկու հատիկ տեղաշարժելով ուղղեք սխալը:

$$VI - II = VIII$$

**Հավելված 21**

**Ա կնառու-պատկերավոր մտածողության ուսումնասիրման առաջադրանքի նյութերը**

№	Հասկացությունը	Պիկտոգրամա
1	Ուրախ տոն	
2	Ձարգացում	
3	Ծանր աշխատանք	
4	Ձմեռային օր	
5	Բաժանում	
6	Թեթև աշխատանք	
7	Հիվանդություն	
8	Երջանկություն	
9	Խաբեություն	
10	Աղքատություն	

**Հավելված 22**

**Մտածողական գործունեության յուրահատկության վրա դիրքորոշման ազդեցության ուսումնասիրման առաջադրանքի նյութերը**

**Խնդիրների առաջին խումբ:**

1. Նշեք աղյուսի, մետաղալարի, պայուսակի օգտագործման եղանակներ:
2. Նկարեք հետևյալ թեմաներով սյուժետներ՝ կապիկ, ագռավ, ճպուռ:
3. Նշեք հետևյալ գույգ հասկացությունների ընդհանուր գործոնը. օր-գիշեր, հատակ-առաստաղ, ջուր-կաթ:

**Խնդիրների երկրորդ խումբ:**

1. Նշեք քարի, պարանի, գնումների տոպրակի օգտագործման եղանակներ:
2. Նկարեք հետևյալ թեմաներով սյուժետներ՝ աղվես, մրջյուն, ակնոցներ:
3. Նշեք հետևյալ գույգ հասկացությունների ընդհանուր գործոնը. կատու-մուկ, ավիսե-գդալ, պղինձ-ոսկի:



Փորձնական լուծման բլանկ

	4	3	1	2	5
2	8				
5				10	
3			3		15
4					
1		3			

ՊձՕՍ՜՛՛ = 39

<sup>2</sup>Ե՜՜<sup>3</sup>՜՜<sup>3</sup>՜՜<sup>3</sup>՜՜ Կ՜՜ 1

	4	2	1	3	5
3					
5					
1					
4					
2					

ՊձՕՍ՜՛՛ = 44

<sup>2</sup>Ե՜՜<sup>3</sup>՜՜<sup>3</sup>՜՜<sup>3</sup>՜՜ Կ՜՜ 2

	5	1	2	4	3
5					
1					
2					
4					
3					

ՊձՕՍ՜՛՛ = 42

Առարկաների ցուցակ

1. Սեքստան,
2. սափրվելու հայելի,
3. ջրով լի հին գլխորանոց տարա,
4. հակամոծակային ցանց,
5. բանակային կերակուրով մեկ տուփ,
6. Խաղաղ օվկիանոսի քարտեզներ,
7. փշվող բարձ (լողալու հարմարանք),
8. նավթագազային խառնուրդով երկլիտրանոց տարա,
9. փոքրիկ տրանզիստորային ռադիոընդունիչ,
10. ակուլաներին հեռացնող սարք,
11. 20 քառակուսի մետր ոչ թափանցիկ պլաստիկ,
12. 80 աստիճան թմրության ռոմի մեկ շիշ,
13. նեյլոնային պարանի 15 մետրանոց կտոր,
14. երկու տուփ շոկոլադ,
15. ձկնորսական ցանց:

Առարկաների ընտրության ճշգրիտ ցուցակ

